
ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
9
ՄԱՍ 2
ՄԱՍ 2
9

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նորագույն շրջան

9

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Մաս 2

Խմբագրությամբ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Վ. Բարխուդարյանի

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ

Երևան
ՄԱՆՄԱՐ MANMAR
2019

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72
Հ 282

Հ 282 Հայոց պատմություն (Նորագույն շրջան): Մաս 2: Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար / Վ. Բարխուդարյան, Ա. Հակոբյան, Հ. Հարությունյան և ուրիշ./ -Եր., «ՄԱՆՄԱՐ», 2019. -96 էջ:

Դասագրքի հեղինակներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վ. Բարխուդարյան**
Պատմական գիտ. դոկտոր **Ա. Հակոբյան**
Պատմական գիտ. դոկտոր **Հ. Հարությունյան**
Պատմական գիտ. դոկտոր **Վ. Ղազախեցյան**
Պատմական գիտ. դոկտոր **Է. Մինասյան**
Պատմական գիտ. դոկտոր **Է. Մելքոնյան**
Դասագրքի մեթոդական մասի հեղինակ՝ **Ա. Ղուկասյան**

ISBN 978-9939-62-208-8

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72

© Բարխուդարյան Վ., Հակոբյան Ա., Հարությունյան Հ., Ղազախեցյան Վ., Մինասյան Է., Մելքոնյան Է., 2014
© «ՄԱՆՄԱՐ», 2014
© ԴՏՀՏՇՀ, 2014

Firefox https://online.fliphtml5.com/fumf/smmm/

ԲԱԺԻՆ 3

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԹԵՄԱ 11 ՍՓՅՈՒՌՔԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1–2. Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը

Հայկական հարցի վերաբացումը և 1946–1948թթ. «մեծ ներգաղթը»: Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո Խորհրդային Միության քաղաքականության նպատակներից էր նաև 1921թ. պայմանագրով Թուրքիային անցած հայկական տարածքներին՝ Կարսի և Արդահանի շրջաններին վերատիրանալը: Դա իրականացնելու համար մշակվեց գործողությունների հատուկ ծրագիր, որում որոշակի դեր էր վերապահված նաև Սփյուռքին: Մոսկվայի ջանքերով սփյուռքահայությունը տեղեկացավ թե՛ նշված տարածքների մոտալուտ միացմանը Խորհրդային Հայաստանին և թե՛ զանգվածային նոր ներգաղթի թույլտվության մասին: Այդ լուրից ոգևորված սփյուռքահայերը բազմաթիվ դիմումներ էին հղում ԽՍՀՄ ղեկավարությանը՝ ցանկություն հայտնելով ներգաղթելու Հայաստան: Խորհրդային Միության ղեկավարությունը (Ի. Ստալին և Վ. Մոլոտով) այդ դիմումները նույնպես օգտագործեց դաշնակից երկրների Պոտսդամի կոնֆերանսում (1945թ. հուլիս-օգոստոս) Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջների հիմնավորման համար, քանի որ Հայաստանի տարածքում անհնար էր ընդունել բոլոր ցանկացողներին:

1946թ. հունիսին Հայաստան հասան առաջին հայրենադարձները, իսկ 1946–1948թթ. Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից և այլ երկրներից ներգաղթած հայերի ընդհանուր քանակը կազմեց շուրջ 90 հազար: Սակայն 1948թ. սեպտեմբերին երկրի իշխանությունները դադարեցրին ներգաղթը, քանի որ սկսված «սառը պատերազմը» և 1947թ. Թուրքիայի հայտնվելը ԱՄՆ-ի պաշտպանության տակ ստիպեցին Ստալինին հրաժարվել իր մտադրությունից:

Հայրենադարձներին բերող «Տրանսիլվանիա» շոգենավը Բաթումի նավահանգստում (1946թ.)

4 von 98 12.02.2021, 11:32

Հայաստան ներգաղթած հայերը հայտնվեցին դժվարին կենսապայմաններում, սակայն առավել ծանր հետևանքներ ունեցավ նրանց նկատմամբ իշխանությունների անվստահությունը: 1949թ. ներգաղթողների մի մասը, տեղաբնակ հայերի հետ միասին, աքսորվեց Խորհրդային Միության հեռավոր շրջաններ: Հայրենադարձության երրորդ և վերջին փուլը, այս անգամ արդեն անհատական կարգով, սկիզբ առավ 1950-ականների վերջին և շարունակվեց 1962-1982թթ.: Խորհրդային Հայաստան ներգաղթեց ևս շուրջ 37 հազ. մարդ:

Բոլոր տարիներին հայրենիք ներգաղթածները, նրանց արդեն Հայաստանում մեծացած և ուսում ստացած զավակները նպաստեցին երկրի զարգացմանը: Հատկապես նշանակալից էր նրանց ավանդը մշակույթի և գիտության ոլորտում՝ երգչուհի Գոհար Գասպարյան, խմբավար Հովհաննես Չեքիջյան, գրող Պերճ Զեյթունցյան, դերասանուհի Վարդուհի Վարդերեսյան, պատմաբան Հրաչ Բարթիկյան և շատ ուրիշներ:

Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը Սփյուռքի հանդեպ: Ստալինի մահից հետո Խորհրդային Միությունը, ձգտելով էլ ավելի ընդլայնել իր ազդեցության ոլորտները, որդեգրեց ավելի ճկուն արտաքին քաղաքականություն: Համապատասխանաբար խմբագրվեց նաև Հայաստանի քաղաքականությունը Սփյուռքի հանդեպ. ՌԱԿ-ը (Ռամկավար-ազատական կուսակցություն) և ՍԴՀԿ-ն (Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն) իրենց կառույցներով սկսեցին դիտվել որպես «առաջադիմական, հայրենասիրական» ուժեր, և նրանց ընձեռվեցին Հայաստանի հետ շփվելու որոշ հնարավորություններ: ՀՅԴ-ի (Հայ հեղափոխական դաշնակցություն) հանդեպ խորհրդային իշխանությունների անհանդուրժողական դիրքորոշումը մնաց անփոփոխ:

Նոր քաղաքականության արդյունք էր նաև 1964թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը: Հատկապես արժեքավոր էր Հայաստանի օժանդակությունը կրթական և մշակութային ոլորտներում: 1960-ական թվականներից Հայաստանի բուհերում անվճար ուսում ստացան ավելի քան հազար սփյուռքահայ ուսանողներ: Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների համար կազմակերպվում էին ամենամյա ամառային դասընթացներ: Տարբեր երկրների հայաշատ քաղաքներ հյուրախաղերի էին մեկնում Հայաստանի հայտնի ստեղծագործական խմբերը, արվեստի անվանի գործիչները:

Այս բոլոր դրական փոփոխությունների հետ մեկտեղ, հայ ժողովրդի երկու հատվածները, սակայն, շարունակեցին ապրել իրարից մեկուսացած ու անջատ: Դրա հետևանքով հայաստանաբնակների և սփյուռքահայերի մեջ ձևավորվեցին միմյանց մասին թյուր, անիրատեսական պատկերացումներ և սպասումներ: Զրկված լինելով հայրենիքի հետ անմիջականորեն հաղորդակցվելուց՝ սփյուռքահայերի մեջ ազգամշակութային ձուլման երևույթները ընթացան առավել արագությամբ:

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին՝ 1988թ. դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժից անմիջապես հետո ողջ սփյուռքահայությունը շտապեց օգնության հասնել աղետից տուժած բնակչությանը:

Այսպես, 1989թ. ԱՄՆ-ում գործող յոթ խոշոր հայկական կազմակերպություններ ստեղծեցին Միացյալ հայկական ֆոնդը: ՄՀՖ-ի առաջին բեռնատար օդանավը Հայաստան է ժամանել նույն տարում՝ աղետի գոտու բնակչությանը հասցնելով շուրջ 30 տոննա մարդասիրական օգնություն: 1989-ից ի վեր ՄՀՖ-ն ավելի քան 120 օդային և մոտ 600 ծովային առաքումներով Հայաստան և Լեռնային Ղարաբաղ է հասցրել շուրջ 350 մլն դոլարի մարդասիրական օգնություն:

Հայկական համայնքները Արևելքի և Արևմուտքի երկրներում: Երկրորդ աշխարհամարտից հետո սկիզբ առավ Սփյուռքի առաջընթաց զարգացման շրջանը: Արևելքի և Արևմուտքի երկրներում հայերը, շնորհիվ աշխատասիրության և օրինապաշտության, իրենց պատվավոր տեղը զբաղեցրին տեղի հասարակությունների միջին և բարձր օղակներում: Նրանց տեսնում ենք որպես անհատ ձեռներեցների ու խոշոր ընկերությունների ղեկավարների, գիտատեխնիկական տարբեր ոլորտների մասնագետների, պետական ծառայողների, խորհրդարանի և կառավարության անդամների՝ Լիբանանում և Իրանում, նահանգապետների՝ ԱՄՆ-ում:

Արևելքի երկրների հայության ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն Սփյուռքի բոլոր այլ համայնքների, նա ապրում է մահմեդական միջավայրում: Մահմեդական ու քրիստոնեական մշակույթների և ապրելակերպի էական տարբերությունները մեծապես նպաստում են հայերի ազգային ինքնության պահպանմանը: Կրոնամշակութային այդ առանձնացվածության հետևանքներից են հազվադեպ ամուսնությունները բնիկ ժողովուրդների և տեղացի հայերի միջև: Հայ ընտանիքների ազգային միատարրության շնորհիվ հնարավոր է դարձել աճող սերնդին տալ հայեցի դաստիարակություն, պահպանել և զարգացնել նրանց ազգային ինքնագիտակցությունը:

«Մելանքթոն և Հայկ Արսլանյան» վարժարանը Բեյրութում

Այս համայնքներում միշտ էլ կարևորվել է ազգային կրթության հարցը: Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Իրանում հիմնվել է հայկական ամենօրյա դպրոցների լայն ցանց: Դրանցից են, օրինակ, Բեյրութում՝ «Մելանքթոն և

Հայկ Արսլանյան», Հալեպում՝ «Լազար Նաջարյան-Գալուստ Գյուլբենկյան», Թեհրանում՝ «Մարի Մանուկյան» դպրոցները: 1955 թվականից Բեյրութում հայ ավետարանական համայնքի հովանավորությամբ գործում է Սփյուռքի միակ բարձրագույն կրթական հաստատությունը՝ Հայկազյան համալսարանը:

Այս ամենի շնորհիվ տեղի հայության համար հայոց լեզուն ցայսօր էլ հաղորդակցման միջոց է: Պատահական չէ, որ այստեղ հրատարակվել են մեծ թվով հայկական թերթեր ու ամսագրեր: Միայն Հալեպում (Սիրիա) մինչև 1970-ական թվականները գործում էին 27 հայկական տպարաններ, որոնցում հրատարակվել են շուրջ 50 անուն պարբերականներ: «Զարթօնք», «Ազդակ» (Բեյրութ), «Ալիք» (Թեհրան), «Արև» (Կահիրե) և այլ թերթերը մեծ տարածում ունեին ողջ Սփյուռքում: Ազգային բազմաթիվ կազմակերպությունների, կրթական հաստատությունների, հայալեզու պարբերականների գոյությունը ստեղծել է ուրույն հայկական մթնոլորտ Հալեպի և Բեյրութի հիմնականում հայերով բնակեցված առանձին թաղամասերում:

Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայ համայնքները մինչև 1970-ական թթ. Սփյուռքի կրթական և քաղաքական կենտրոններն էին: Այստեղ է մեծացել ու կրթություն ստացել այլ երկրների համայնքային առաջնորդների զգալի մասը: Արևելքի երկրներից 1950-ական թվականների վերջերից ռազմաքաղաքական անկայուն վիճակի հետևանքով սկսված հայերի արտագաղթը, որի մեջ մեծ տոկոս է կազմում երիտասարդությունը, բացասաբար է անդրադարձել տեղի համայնքների կենսունակության վրա:

Բեյրութի Հայկազյան համալսարանի շենքը

Ի տարբերություն Արևելքի երկրների՝ Արևմուտքի երկրներում տեղի մշակույթի մշտական և ուժեղ ներգործության պայմաններում հայերի համար ամենաբարդ և դժվար խնդիրներից է ազգային ինքնության պահպանումը: Ցանկանալով հնարավորին չափ արագ ներգրավվել ընդունող հասարակություններում՝ նրանք ձգտում են առավելագույնս որդեգրել բնիկ ժողովուրդների բարքերն ու մշակութային արժեքները: Եվ հանուն դրա միաժամանակ հարկադրված են սահմանափակել իրենց «մայրական» մշակույթի դրսևորումները: Ազնավուրը գրում է.

Իմ մանկության քաղաքը Փարիզն է,
Իմ նախնիների քաղաքը Երևանն է:
Երկու մշակույթներ են պարփակել ինձ,
Ես հարստացել եմ դրանցով:

Իմ սովորությունները ֆրանսիական են,
Իմ ավանդույթները՝ հայկական:
Ես նման եմ կաթով սուրճի՝ անբաժանելի խառնուրդ:

Այդ երկրներում հայերի քրիստոնյա լինելը դյուրացրել է նրանց ազգամշակութային ձուլումը: Այդ է վկայում այլազգիների հետ հայերի ամուսնությունների մշտական աճը:

«Տեմիրճյան-Մանուկյան» վարժարանը Լոս Անջելեսում

Արևելքի երկրների հայերի ներգաղթը Արևմուտքի երկրներ զգալի չափով աշխուժացրեց տեղի համայնքների ազգային գործունեությունը: Այսպես, ԱՄՆ-ում, ուր ի սկզբանե գոյություն ունեին միայն մեկօրյա հայկական դպրոցներ, 1960-ականների կեսերից սկսեցին հիմնվել նաև ամենօրյա դպրոցներ: Նման դպրոցները առաջնորդվում են պետական դպրոցների ծրագրով, միաժամանակ հավելյալ ժամեր հատկացնելով «հայկական» առարկաներին՝ հայոց լեզու, գրականություն, պատմություն: Հայկական ամենօրյա դպրոցներում, ասենք, ԱՄՆ-ում՝ «Ֆերահյան», «Տեմիրճյան-Մանուկյան», Ֆրանսիայում՝ «Դպրոցասեր տիկնանց վարժարան», Արգենտինայում՝ «Վիսենտե Լոպեսի վարժարան», սովորում է, սակայն, ծագումով հայ երեխաների փոքր մասը միայն: Արևմուտքի երկրներում ապրող սփյուռքահայերի, հատկապես երիտասարդության ճնշող մեծամասնությունը լավագույն դեպքում տիրապետում է հայերենի խոսակցական լեզվի սոսկ տարրերին: Դա իր հերթին անդրադառնում է հայկական մամուլի վրա: Տարեցտարի ավելանում է տեղական լեզուներով հրատարակությունների թիվը: Իսկ քանակապես նվազող հայալեզու պարբերականները, որպես կանոն, ունեն օտարալեզու հատուկ ենթաբաժիններ կամ հավելվածներ («Ասպարէզ», «Նոր օր»՝ ԱՄՆ-ում, «Յառաջ»՝ Ֆրանսիայում, «Հորիզոն»՝ Կանադայում, և այլն):



Բուենոս Այրեսի Սբ Լուսավորիչ եկեղեցին

Հարավային Ամերիկայի երկրների (Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա) համայնքների կայացումն ու զարգացումը հիմնականում ընթացել են Արևմուտքի երկրների հայկական համայնքների նման: Այդ համայնքների կարևոր

առանձնահատկություններից է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի հայերի շոշափելի արտագաղթ չի նկատվել: Միևնույն ժամանակ՝ Սփյուռքի այլ համայնքներից և Հայաստանից համեմատաբար քիչ թվով հայեր են ներգաղթել Հարավային Ամերիկայի երկրներ: Այդ իսկ պատճառով տեղի համայնքներին ընդհանուր առմամբ բնորոշ չէ ազգային գործունեության էական աշխուժացում:

Սփյուռքահայությունը, չնայած իր բոլոր առանձնահատկություններին, միահամուռ և վճռական է 1915թ. ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում՝ դիտելով այն որպես ողջ մարդկության հանդեպ իրագործված ոճրագործություն: Այդ նպատակով նա որդեգրեց առավել արդիական գործելաոճ՝ ստեղծելով հատուկ մասնագիտացված լոբբիստական կազմակերպություններ, դրանցից առավել հայտնի են Հայ դատի հանձնախումբը (1941թ.) իր բազմաթիվ մասնաճյուղերով, ինչպես նաև Ամերիկայի հայկական համագումարը (1972թ.): Դրանք օժանդակում են տարբեր երկրներում ցեղասպանությունը դատապարտող օրենսդրական ակտերի ստեղծմանը, աշխատանքներ են տանում միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների արտաքին քաղաքականության մեջ դրական դիրքորոշում ապահովելու Հայաստանի և Արցախի հանդեպ, ֆինանսավորում են ցեղասպանության մասին կինոֆիլմերի արտադրությունը, ուսումնասիրությունների հրատարակումը և այլն:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանի ելույթից

(«Սովետական Հայաստան», 1946թ., 3 փետրվարի)

«...Մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդու: Այնինչ ցանկացողները ավելի շատ են: Մենք ինչպե՞ս պետք է վարվենք մնացածների հետ: Մնացած 500-600 հազար հայերին ընդունելու համար մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերը»:

«...Միայն այդ պայմանով մենք կկարողանանք ընդունել բոլոր ցանկացող հայերին: Իսկ նրանց մերժելու մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք: Դա է ներկայումս Թուրքիայի ձեռքում գտնվող հայկական մարզերը Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցի այժմեականությունը: Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, նկատի առնելով նրա այժմեականությունը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ կազմակերպվեց հայրենադարձությունը: Ո՞ր երկրներից և որքա՞ն հայեր եկան Հայաստան: Ինչո՞ւ դադարեցվեց սփյուռքահայերի ներգաղթը:
2. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին հայրենիք–Սփյուռք ձևավորված կապերի պայմաններում հայ ժողովրդի երկու հատվածները շարունակում ապրել իրարից մեկուսացած և անջատ:
3. Նշե՛ք սփյուռքահայ կարևոր կենտրոնները: Որո՞նք են Արևելքի երկրների հայկական համայնքների առանձնահատկությունները:
4. Ո՞ր երկրներն են համարվում սփյուռքահայ կրթական կյանքի կենտրոններ: Ի՞նչ գիտեք Սփյուռքի մեկօրյա և ամենօրյա դպրոցների մասին: Որո՞նք են Սփյուռքի նշանավոր կրթական հաստատությունները: Փորձե՛ք հիմնավորել կրթական գործի կարևորությունը Սփյուռքում:
5. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին սփյուռքահայության ազգային ինքնության պահպանման դժվարությունները Արևմուտքի երկրներում:
6. Ի՞նչ գործելակերպ որդեգրեց սփյուռքահայությունը 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում: Փորձե՛ք գնահատել հայկական մասնագիտացված լոբբիստական կազմակերպությունների ծավալած աշխատանքներն այդ հարցում:
7. Լրացրե՛ք «Հայկական սփյուռքը» 1945–1991թթ. աղյուսակը:

Հայկական սփյուռք	Երկրների անվանումը	Կրթամշակութային հաստատությունները, պարբերականները	Մշակույթի գործիչները
Արևելքի երկրների հայկական համայնքները			
Արևմուտքի երկրների հայկական համայնքները			

11-րդ թեմայի ամփոփում

1. Երկրորդ աշխարհամարտից հետո Խորհրդային Միության քաղաքականության նպատակներից էր նաև 1921թ. պայմանագրով Թուրքիային անցած հայկական տարածքներին՝ Կարսի և Արդահանի շրջաններին վերատիրանալը: Սակայն սկսվեց «սառը պատերազմը», և Թուրքիան հայտնվեց ԱՄՆ-ի հովանավորության տակ:

2. 1946թ. սկսվեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության երկրորդ փուլը: 1946-1948թթ. աշխարհի 12 երկրներից Հայաստան եկան շուրջ 90 հազար հայեր: 1948թ. հայրենադարձությունը դադարեցվեց: 1960-1980-ական թթ. անհատական կարգով Հայաստան ներգաղթեց ևս 37 հազար մարդ:
3. Երկրորդ աշխարհամարտից հետո սկսվեց սփյուռքահայերի տեղաշարժերի նոր շրջան, որը որոշ ընդմիջումներով շարունակվում է մինչև օրս: Արևելքի երկրներից արտագաղթած հայերի բացարձակ մեծամասնությունը հաստատվեց Արևմուտքի երկրներում, ինչը բացասաբար անդրադարձավ տեղի համայնքների կենսունակության վրա:
4. Արևմուտքի երկրների հայ համայնքների գործունեությունը զգալիորեն աշխուժացավ, երբ 1960-ական թթ. վերջից սկսվեց հայերի ներգաղթը Արևելքի երկրներից, իսկ 1980-ական թթ. վերջից՝ նաև Հայաստանից:
5. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խորհրդային իշխանությունները մեղմեցին իրենց քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ: 1964թ. ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որը համակարգում էր Հայաստանի հարաբերությունները Սփյուռքի հետ կրթության և մշակույթի ոլորտներում:
6. Երկրորդ աշխարհամարտից հետո կրթական գործը Սփյուռքում վերելք ապրեց: Լիբանանում, Սիրիայում, Իրանում հիմնվում է հայկական ամենօրյա դպրոցների լայն ցանց: 1955թ. Բեյրութում հիմնադրվում է Սփյուռքի միակ բարձրագույն կրթական հաստատությունը՝ Հայկազյան համալսարանը: Արևելքի երկրներում հրատարակվում էր շուրջ 50 հայալեզու պարբերական:
   1960-ականների կեսերից Արևմուտքում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, հայկական մեկօրյա դպրոցներից զատ սկսեցին հիմնադրվել նաև ամենօրյա դպրոցներ:
7. Սփյուռքահայությունը, ստեղծելով հատուկ մասնագիտացված լոբբիստական կազմակերպություններ, պայքար ծավալեց 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար:

ԹԵՄԱ 12 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. Տնտեսությունը

Տնտեսության վերակառուցումը: Հայաստանը պատերազմի տարիներին ավերածությունների չէր ենթարկվել, բայց խախտվել էր նրա արտադրության տարբեր ճյուղերի զարգացման համամասնությունը: Անհրաժեշտ էր վերականգնել հանրապետության տնտեսությունը, համապատասխանեցնել խաղաղ ժամանակների պահանջներին:

Կառավարությունը 1945թ. օգոստոսին նախապատրաստեց չորրորդ հնգամյակի նախագիծը: Նախատեսվում էր եղած արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցման և ընդլայնման հետ մեկտեղ կառուցել նորերը, կրկնապատկել արդյունաբերական արտադրանքը: Մեծ նշանակու-

թյուն տրվեց էլեկտրակայանների կառուցմանը: 1948թ. ավարտվեցին Զորագետի հիդրոէլեկտրակայանի վերակառուցումը, Քանաքեռի հէկի վերջին ագրեգատի կառուցումը:

Պատերազմի ավարտից հետո սկսվեց Սևան-Հրազդան կասկադի ամենահզոր հէկի՝ Գյումուշի կառուցումը, որի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1953թ.:



Երևանի մալուխի գործարանի հյուսման արտադրամասում

1949թ. ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց Հայաստանում գունավոր մետալուրգիայի զարգացման մասին: Մեծ աշխատանքներ ծավալվեցին Քաջարանի պղնձամոլիբդենային, Սիսիանի և Մեղրու կոմբինատների, Ալավերդու պղնձաձուլական գործարանի կառուցման ուղղությամբ:

Արդյունաբերության զարգացումը: Տնտեսության վերակառուցմանը զուգահեռ շարունակվում էր նոր ձեռնարկությունների կառուցումը: Չորրորդ հնգամյակում՝ 1946-1950թթ. կառուցվեցին Երևանի էլեկտրամեքենաշինական, ալյումինի, Գյումրու հեծանվի, Սպիտակի շաքարի և այլ գործարաններ: Այդ տարիներին շահագործման հանձնվեցին 40-ից ավելի արդյունաբերական նոր ձեռնարկություններ:



Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանը

Արդյունաբերական տասնյակ ապրանքատեսակներ արտահանվում էին ոչ միայն ԽՍՀՄ հանրապետություններ, այլև արտասահմանյան երկրներ:

Պատերազմի և հաջորդող տարիներին հանրապետության տնտեսության վերակառուցման ու զարգացման մեջ նշանակալի ավանդ են ունեցել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, որն այդ պաշտոնը վարում էր 1937-1953թթ., և նրան հաջորդած Սուրեն Թովմասյանը (1953-1960):

Սուրեն Թովմասյան (1909-1980)

ԽՍՀՄ կառավարության որոշմամբ (1958թ.) զարկ տրվեց քիմիական արդյունաբերության զարգացմանը: Գործարկվեցին Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանը, Ալավերդու և Կիրովականի քիմիական ձեռնար-



Կիրովականի քիմիական կոմբինատը

Երևանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանը



Կեչուտի ջրամբարը Վայոց ձորում

կությունները: Արտադրության այդ ճյուղի զարգացման շնորհիվ Հայաստանը ագրարային երկրից հետզհետե վերափոխվում էր արդյունաբերական հանրապետության: 1960–1980-ական թվականներին հանրապետությունում կառուցվեցին 390-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ: Մի շարք նոր քաղաքներ դարձան արդյունաբերության կենտրոններ: Դրանցից էին Չարենցավանը, Հրազդանը, Աբովյանը:

Արդյունաբերության զարգացումը առաջ բերեց բնապահպանական բազմաթիվ խնդիրներ: Դրանցից առաջինը Սևանի հիմնահարցն էր: Հրազդան գետի վրա կառուցված հէկերը աշխատում էին Սևանի ջրի հաշվին, և իջել էր լճի ջրի մակարդակը: Այդ հիմնախնդրի լուծմանը որոշ չափով նպաստեց Արփա-Սևան ջրատար թունելի (1981թ.), ջէկերի և ատոմակայանի կառուցումը (1979թ.): Այդուհանդերձ՝ Սևանի հիմնախնդիրը մինչև այժմ լիովին լուծված չէ:

Բարելավվեց հանրապետության տրանսպորտային համակարգը: Կառուցվեցին Երևանի մետրոպոլիտենը, մայրաքաղաքի «Զվարթնոց», «Էրեբունի» և Լենինականի օդանավակայանները:

Այսպիսով՝ 1970-1980-ական թվականներին Հայաստանը ԽՍՀՄ տնտեսական համակարգում իր արդյունաբերական զարգացման մակարդակով ու տեսակարար կշռով գրավեց առաջնակարգ տեղերից մեկը:

Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Պատերազմի տարիներին գյուղատնտեսության մեջ իշխում էր ձեռքի աշխատանքը, խիստ նվազել էր կոլտնտեսությունների աշխատանքային ներուժը, զգալիորեն կրճատվել էին ցանքատարածությունները:

Պետությունը չնչին գներով գյուղացուց գնում էր այնքան մթերք, որքան իրեն անհրաժեշտ էր: Դրա պատճառով տարեցտարի նվազում էին կոլտնտեսությունների եկամուտները, իջնում էր գյուղացիության նյութական շահագրգռվածությունը:

Որոշ ձեռնարկումներ եղան գյուղատնտեսության մեքենայացման ուղղությամբ:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց գյուղերի էլեկտրիֆիկացմանը: Խրախուսվեց փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը: 1950թ. Հայաստանում արդեն գործում էին ավելի քան 50 գյուղական հիդրոէլեկտրակայաններ: Դրա շնորհիվ գյուղերի էլեկտրիֆիկացումը 1948թ. 30 տոկոսից հասավ 70 տոկոսի:

Գյուղացիությունից գանձվող հարկերը հետևողականորեն աճում էին: Պետությունը մթերումները կատարում էր շատ ցածր գներով:

Հետպատերազմյան մի քանի տասնամյակների ընթացքում գյուղատնտեսության բնագավառում եղան նաև որոշակի հաջողություններ: Կառուցվեցին Թալինի, Հրազդանի, Սպիտակի, Կոտայքի ջրանցքները, Ազատի, Շամբի և այլ ջրամբարներ: Բազմաթիվ ջրհան կայաններ և արտեզյան հորեր կառուցվեցին Արարատյան դաշտի գյուղական շրջաններում: Ոռոգելի հողատարածությունները ավելացան 48 հազար հեկտարով:

Ոչ միայն գյուղատնտեսության, այլև ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման մեջ որոշակի էր հանրապետության ղեկավարության և առաջին հերթին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարներ Յակով Զարոբյանի (1960-1966), Անտոն Քոչինյանի (1966-1974) և Կարեն Դեմիրճյանի (1974-1988) դերը:

Յակով Զարոբյան
(1908-1980)



Անտոն Քոչինյան
(1913-1990)

Կարեն Դեմիրճյան
(1932-1999)

1970-80-ական թվականներին երկրում ստեղծվեցին ագրոարդյունաբերական համալիրներ, որտեղ մեկ միասնական համակարգի մեջ ընդգրկվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման և իրաց-

ման ձեռնարկությունները: Հայաստանում հատկապես արդյունավետ էին թռչնաբուծական համալիրները:

Բնակչության սոցիալական դրությունը: Հայրենական պատերազմի ավարտից հետո բնակչության սոցիալական վիճակը բավականին ծանր էր: Իշխանությունները որոշ քայլեր էին ձեռնարկում այն բարելավելու ուղղությամբ: 1947թ. վերջերին վերացվեց պարենային մթերքների բաշխման քարտային համակարգը, վերականգնվեց ապրանքների ազատ վաճառքը, անցկացվեց դրամական բարեփոխում: Իրականացված քաղաքականությունը նպաստեց ապրանքադրամային հարաբերությունների ծավալմանը:

Առաջին անգամ հեռուստացույցի առջև

1960-1970-ական թթ. Հայաստանի ազգաբնակչության սոցիալական ապահովվածության մակարդակը, նախորդ ժամանակաշրջանների համեմատությամբ, որոշակիորեն բարձրացավ: Տնտեսության զարգացումը հնարավորություն տվեց բարձրացնելու աշխատավարձերը և կենսաթոշակները: Քաղաքաշինությունը զգալիորեն բարելավեց բնակչության բնակարանային, կենցաղային պայմանները: Հանրապետության ամբողջ տարածքի էլեկտրիֆիկացման աշխատանքները ավարտվեցին, և կենցաղում սկսեցին օգտագործել տեխնիկայի նոր նվաճումները՝ սառնարան, հեռուստացույց, գազի սարքեր:

Հանրապետության մի շարք շրջաններում աշխատանքը սեզոնային բնույթ էր կրում (աշխատանքով ապահովված էին տարվա որոշ ամիսներին), ուստի միջոցներ վաստակելու համար տարեկան շուրջ 20 հազար մարդ արտագնա աշխատանքի էր մեկնում Ռուսաստան և այլ հանրապետություններ:

ՀԽՍՀ 60-ամյակի առթիվ ԽՍՀՄ ղեկավարության հեռագրից

Հայկական ԽՍՀ-ի դեմքը բնորոշում են ատոմային էներգետիկան, մետաղամշակությունը, էլեկտրոնային, ռադիոտեխնիկական, սարքաշինական, քիմիական, թեթև սննդի արդյունաբերությունը: Աննախընթաց որակական փոփոխությունների է ենթարկվել գյուղատնտեսությունը: Ծաղկել են Հայաստանի գիտությունն ու մշակույթը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տնտեսության բնագավառում ի՞նչ էր անհրաժեշտ կատարել: Ի՞նչ նոր էլեկտրակայաններ և ձեռնարկություններ կառուցվեցին 1945–1950-ական թվականներին: Փորձե՛ք ցույց տալ, որ արդյունաբերության զարգացումը հանգեցրեց նոր քաղաքների առաջացմանը:

2. Ինչ ազդեցություն էր ունեցել պատերազմը խորհրդային գյուղատնտեսության վրա: Ինչ քայլեր ձեռնարկվեցին գյուղատնտեսությունը վերակառուցելու և դժվարին կացությունից դուրս բերելու համար:
3. Ինչ քաղաքականություն էր իրականացվում սոցիալական ոլորտում հետպատերազմյան շրջանում: Ինչ փոփոխություններ կրեց ազգաբնակչության սոցիալական ապահովվածության մակարդակը 1960–1970-ական թթ.:
4. Լրացրեք «Տնտեսության վերականգնումը և զարգացումը հետպատերազմյան տարիներին» աղյուսակը:

Բնագավառներ	Ձեռնարկված միջոցառումներ	Արտադրանքներ
Արդյունաբերություն		
Գյուղատնտեսություն		
Սոցիալական դրություն		

2. Հասարակական-քաղաքական կյանքը

Քաղաքական բռնությունների նոր փուլը: Պատերազմի ավարտից հետո ՀԿ(բ)Կ Կենտկոմը, կրկնելով Մոսկվայի որոշումները, գաղափարական աշխատանքներում շեղումներ թույլ տված մտավորականների էր հայտնաբերում նաև Հայաստանում:

1940-ական թվականների վերջերից նորից սկսվեցին բռնաճնշումները: Նախապատրաստվում էր հայ բնակչության զանգվածային արտաքսում Ալթայի երկրամաս: 1949թ. հունիսի 14-ի առավոտյան սկսվեց արտաքսման գործողությունը, որն ավարտվեց նույն օրը՝ երեկոյան:

Խորհրդային Հայաստանից մոտ 3 հազար ընտանիք՝ ավելի քան 13 հազար մարդ, իսկ ԽՍՀՄ մյուս շրջաններից ևս հազարավոր հայեր արտաքսվեցին Ալթայի երկրամաս: Ստալինի մահվանից հետո նրանք արդարացվեցին և վերադարձան հայրենիք:

Մտավորականությանը գաղափարապես ճնշելու զանազան ձևեր էին մշակվում: 1950-ական թվականների սկզբներին հրապարակ հանվեց այսպես կոչված «միասնական հոսանքի», դասակարգային սկզբունքից հրաժարվելու տեսությունը: Օտարամոլության, բուրժուական օբյեկտիվիզմի և կոսմոպոլիտիզմին տուրք տալու մեջ մեղադրվեցին անվանի գիտնականներ Հր. Աճառյանը, Ա. Թախտաջյանը, Գ. Ղափանցյանը, Մ. Ներսիսյանը, Աբ. Հովհաննիսյանը, Վ. Ռշտունին և ուրիշներ:

Դրությունը փոխվեց, երբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն սխալ համարեց «միասնական հոսանքի» մեջ մտավորականներին մեղադրելու քաղաքականությունը:

Անհատի պաշտամունքի դատապարտումը: 1953թ. մարտի 5-ին մահացավ Իոսիֆ Ստալինը: Նրա մահվանից մի քանի ամիս անց ձերբակալվեց և գնդակահարվեց Լավրենտի Բերիան՝ բռնություններն իրականացնող հիմնական պաշտոնյաներից մեկը:

Հաջորդ տարիների ընթացքում Ստալինի մերձավոր շրջապատի ներսում պայքար էր գնում իշխանության համար: Այդ պայքարում հաղթանակ տարավ Նիկիտա Խրուշչովը:



Նիկիտա Խրուշչով

1956թ. փետրվարին տեղի ունեցավ ԽՄԿԿ XX համագումարը, որը բացահայտեց անհատի պաշտամունքի բացասական հետևանքները: Այդ գործում կարևոր էր ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովի դերը: Նրա ջանքերով նույն տարվա հունիսի 30-ին Կենտկոմը ընդունեց «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» որոշումը: Այդ որոշման մեջ բազմանշանակ գնահատականներ էին տրվում Ի. Ստալինին: Երկրում կատարված բռնությունների ամբողջ քաղաքականությունը կապվում էր միայն նրա անվան հետ: Սակայն դրա հետ մեկտեղ դրվատվում էր կոմունիստական կուսակցությունը, որն իբր չէր շեղվել ճիշտ ուղուց: Որոշման թերի լինելու հիմնական պատճառն այն էր, որ դրա ընդունողների մեծ մասը այս կամ այն չափով մեղսակից էր կատարված հանցագործություններին:

Համագումարից հետո ստեղծված հանձնաժողովները հազարավոր մարդկանց գործեր վերանայեցին, և նրանք արդարացվեցին: Վերականգնվեցին նրանց իրավունքները և բարի անունը: Բռնադատվածներից շատերը արդարացվեցին հետմահու:

Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո որոշակիորեն աշխուժացավ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը:

Բայց երկրի տնտեսական և հասարակական կյանքում տեղի ունեցող դրական տեղաշարժերը արմատական փոփոխություններ չմտցրին միակուսակցական-ամբողջատիրական համակարգում:

Ազգային զարթոնքը: 1960-ական թթ. սկզբներին, խրուշչովյան ազատությունների շնորհիվ, սկսեց աշխուժանալ ազգային կյանքը:

Համեմատաբար ազատության պայմաններում զարգացում ապրեցին հայ գրականությունը, արվեստը, հասարակական գիտությունները: Մինչ այդ

փաստորեն արգելված ազգային-հայրենասիրական թեմաներով բազմաթիվ արժեքավոր գրական-գեղարվեստական, պատմագիտական, մշակույթի գործեր ստեղծվեցին:

1965թ. լրացավ Հայոց մեծ եղեռնի 50 տարին: Հայաստանում առաջին անգամ նշվեց հայ ժողովրդի այդ մեծ ողբերգությունը: Ժողովուրդն ինքնաբուխ, տասնյակ հազարներով դուրս եկավ փողոց: Խորհրդային երկրում առաջին անգամ, այդ ողբերգական տարելիցի կապակցությամբ, ապրիլի 24-ին Երևանում համազգային մեծ ցույց կազմակերպվեց, որը չլսված դեպք էր խորհրդային երկրի պատմության մեջ: Ցույցի մասնակիցները Հայաստանի իշխանություններից պահանջում էին պաշտպանել հայ ժողովրդի իրավունքները, դատապարտել թուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությունը և հասնել նրա միջազգային ճանաչմանը:



Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը Երևանում

Իշխանությունները և, առաջին հերթին, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը հասկանում էին, որ արդարացի են ժողովրդի ազգային պահանջները: Նա նախաձեռնեց, և 1967թ. տեղի ունեցավ եղեռնի զոհերին նվիրված հուշակոթողի բացումը: Ի հիշատակ եղեռնի զոհերի և ի նշան պատմական հիշողության պահպանման՝ ամեն տարվա ապրիլի 24-ին հայ ժողովուրդը զանգվածաբար, հարյուր հազարներով այցելում է հուշակոթող:

Հայ ժողովրդի մի քանի սերունդների ներկայացուցիչների հոգում անջնջելի հետք թողեց 1968թ. աշնանը՝ Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված տոնակատարության արարողությունը, որին մասնակցեցին նաև բազմաթիվ սփյուռքահայեր ու տարբեր երկրներից ժամանած հյուրեր: Արդարև, սա ոչ միայն տուրք էր մեր պատմական հարուստ անցյալին, այլև ազգային զարթոնքի ինքնադրսևորման արտահայտություն էր:

Խորհրդային Հայաստանը «լճացման տարիներին»: 1960-ական թվականներից սկսվեց «լճացման» շրջանը: Ընդհանուր ճգնաժամի պատճառը խորհրդային վարչահրամայական համակարգն էր:

1960-1970-ական թթ. Հայաստանում գործում էին մի շարք ընդհատակյա կազմակերպություններ: Դրանցից էին Հայ երիտասարդական միությունը, Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ), Հայ հայրենասերների միությունը (ՀՀՄ): Այդ գաղտնի հայրենասիրական միությունները նպատակ էին դրել հասնելու Հայ դատի և պահանջատիրության միջազգային ճանաչմանը, Ար-

ցախը և Նախիջևանը Հայաստանի հետ միավորելուն, ժողովրդավարության հաստատմանը: Խորհրդային Հայաստանի բոլոր նշանավոր այլախոհները բանտարկվեցին: Նման ակտիվ գործիչներից էին Խաչիկ Սաֆարյանը, Խաչատուր Ամիրջանյանը, Հայկազ Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը, Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը և ուրիշներ: 1960–1980-ական թթ. հակախորհրդային գործունեության համար, իբրև քաղբանտարկյալ, դատապարտվել են շուրջ 100 հայ մտավորականներ: Նրանք ազատություն ստացան հիմնականում խորհրդային կարգերի փլուզումից հետո:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս կարող եք բնութագրել ԽՄԿԿ 20-րդ համագումարի և 1956թ. հունիսի 30-ի որոշումները: Ի՞նչ դեր խաղաց անհատի պաշտամունքի դատապարտումը հասարակության կյանքում:
2. Փորձե՛ք բնութագրել 1960-ական թթ. ազգային զարթոնքը: Ի՞նչ կարևոր հարցեր բարձրացվեցին ազգային կյանքի աշխուժացման ընթացքում:
3. Բնութագրե՛ք հայ նշանավոր այլախոհներին: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը ընդհանրապես այլախոհության նկատմամբ:
4. Լրացրե՛ք «Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը» աղյուսակը:

Բովանդակություն	Բնութագրում	Հետևանք, արդյունք
Քաղաքական բռնություններ		
Անհատի պաշտամունքի դատապարտում		
Ազգային զարթոնք		
Այլախոհություն		

12-րդ թեմայի ամփոփում

1. Պատերազմից հետո անհրաժեշտություն առաջացավ տնտեսությունը վերակառուցելու խաղաղ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան:
2. 1960–80-ական թթ. հանրապետությունում շարք մտան 390-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ, կառուցվեցին նոր քաղաքներ: Արդյունաբերության զարգացումն առաջ բերեց բնապահպանական բազմաթիվ խնդիրներ:
3. Հետպատերազմյան շրջանում զգալի աշխատանք կատարվեց գյուղատնտեսության մեքենայացման, գյուղերի էլեկտրիֆիկացման, ջրանցքների

կառուցման ուղղությամբ: Այդուհանդերձ՝ գյուղատնտեսությունը պարբերաբար հայտնվում էր ճգնաժամի մեջ, քանի որ հանրային տնտեսության պայմաններում գյուղացին շահագրգռված չէր դրա զարգացմամբ:

4. Հետպատերազմյան տարիներին վերսկսվեցին բռնությունները: 1949թ. տեղի ունեցավ հայ բնակչության զանգվածային արտաքսում Ալթայի երկրամաս: Աքսորվածները Ստալինի մահից հետո արդարացվեցին և վերադարձան հայրենիք:
5. Դատապարտվեց անհատի պաշտամունքը: Այդ գործում մեծ դեր կատարեց Նիկիտա Խրուշչովը: Սկսվեց խրուշչովյան հարաբերական ազատությունների ժամանակաշրջանը, աշխուժացավ ազգային կյանքը: Պետական մակարդակով նշվեցին Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը և Երևանի հիմնադրման 2750-ամյակը:
6. 1960–1970-ական թթ. Հայաստանում տարածում գտավ այլախոհական շարժումը: Ստեղծվեցին մի շարք ընդհատակյա կազմակերպություններ, որոնք նպատակ էին դրել հասնելու Հայ դատի և պահանջատիրության միջազգային ճանաչմանը, Արցախը և Նախիջևանը Հայաստանի հետ միավորելուն, ժողովրդավարության հաստատմանը:

ԹԵՄԱ 13 ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1. Վերակառուցումն ու Արցախյան շարժման սկիզբը

Վերափոխումների քաղաքականությունը: 1985թ. մարտին փոխվեց ԽՍՀՄ ղեկավարությունը: ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Գորբաչովը, որը հետագայում դարձավ ԽՍՀՄ նախագահ:

Նա և իր համախոհները գտնում էին, որ ԽՍՀՄ-ը ճգնաժամից դուրս բերելու համար անհրաժեշտ է իրականացնել վերափոխումներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի փրկել սոցիալիզմն ու խորհրդային կայսրությունը վերջնական կործանումից: 1985թ. ապրիլին հռչակվեց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման և խորհրդային հասարակության այսպես կոչված արմատական վերակառուցման ուղեգիծը, «վերակառուցում», «հրապարակայնություն», «արագացում», «նոր մտածողություն» կարգախոսները դարձան գորբաչովյան բարոյախոսությունների քաղաքական հիմքը:

Վերակառուցման սկզբնական շրջանում շեշտը դրվեց աշխատանքային կարգապահության բարձրացման, գիտատեխնիկական առաջընթացի ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու վրա: Սակայն «վերևից» հռչակված այդ «վերակառուցումը», որի նպատակն էր՝ ստեղծել սոցիալիզմի ժողովրդական տարաձև, մնաց լոկ օդից կախված հայտարարություն և չիրա-

գործվեց: Գորբաչովյան վերակառուցումը ի սկզբանե դատապարտված էր ձախողման այն պարզ պատճառով, որ փորձում էր «վերևից» երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացում և վերակառուցում իրագործել՝ պահպանելով նախկին՝ իրեն սպառած տնտեսական և քաղաքական համակարգը: Իսկ այն, ինչ վերակառուցման անվան տակ արվում էր այդ ուղղությամբ, ընդամենը գոյություն ունեցող համակարգի վերահաստատում էր: Ամենագլխավորը քաղաքական տեսակետից այն էր, որ շարունակվում էր ԽՄԿԿ-ի միահեծան ու անբաժան իշխանությունը, և նա մտադրություն չուներ հրաժարվելու կամ նույնիսկ փոքր-ինչ կիսելու այդ իշխանությունը քաղաքական որևէ այլ ուժի հետ:

Հանրահավաք Ստեփանակերտում

Վերակառուցման ընթացքում իրականացվող բարենորոգումների անկատարությունը, ոչ արմատական ձեռնարկումները հանգեցրին ճգնաժամային վիճակի: Սրվեցին հակասությունները Կենտրոնի և ազգային հանրապետությունների միջև: Զանգվածային բնույթ ընդունեցին ազգամիջյան առճակատումները:

Վերակառուցման շրջանում ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում լայն պայքար սկսվեց ազգային ինքնուրույնության համար: ԽՍՀՄ տարբեր վայրերում, ազգային խնդիրների հետ կապված, տեղի էին ունենում ցույցեր: Այդ պայքարում իր ուրույն ուղին անցավ Հայաստանը:

Եղած ընդհանուր դժվարություններին Հայաստանում գումարվեցին նաև Լեռնային Ղարաբաղի խնդիրը, 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքները, սրված բնապահպանական հիմնահարցերը:

Արցախյան ազատագրական շարժումը: Խորհրդային Միությունում ազատագրական շարժումների ծավալումը վերակառուցման քաղաքականության անմիջական հետևանք էր: Իր իրավունքներն ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար առաջինը հանդես եկավ արցախահայությունը: Վերջինս ամենևին չէր հաշտվել պատմական իր տարածքները Ադրբեջանին բռնակցելու և Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության հետ:

Արցախցիները, հավատալով կուսակցության հռչակած վերակառուցման քաղաքականությանը, համարձակ պայքար սկսեցին սահմանադրական ճանապարհով մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու համար:

1988թ. փետրվարի 20-ին հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզխորհրդի 20-րդ նստաշրջանը, որը կայացրեց պատմական որոշում. ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին ու խնդրել դուրս բերել մարզը Ադրբեջանի կազմից և ընդգրկել Հայաստանի կազմի մեջ: Փաստորեն, սրանով սկիզբ առավ Արցախյան շարժման նոր փուլը, սկսվեց արցախահայության ծանր ու երկարատև պայքարը ազատության համար:

Հանրահավաք Երևանի Ազատության հրապարակում՝ ի պաշտպանություն արցախահայության պահանջների



Վիկտոր Համբարձումյան (1908-1996)

Հայաստանում և Սփյուռքում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ցույցերի մեծ ալիք սկսվեց: ԽՍՀՄ ղեկավարությունը հենց սկզբից Արցախյան շարժման նկատմամբ բացասական դիրք գրավեց, շարժումը որակվեց ծայրահեղական և ազգայնական: Հանրապետության ղեկավարությունը չկարողացավ կողմնորոշվել և ներազդել իրադարձությունների ընթացքի վրա: Ժողովրդի ազգային ցավերի նկատմամբ անտարբերությունը Հայաստանի իշխանություններին ի վերջո հասցրեց ինքնամեկուսացման:

Փետրվարի 20-ին Թատերական (այժմ՝ Ազատության) հրապարակում հավաքված բազմահազարավոր ցուցարարները պահանջում էին Արցախը միացնել մայր հայրենիքին: 1988թ. փետրվարի 22-ին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն Իգոր Մուրադյանի ղեկավարությամբ, որը կազմակերպում և ղեկավարում էր զանգվածային ցույցերն ու հանրահավաքները: Փետրվարի 25–26-ին ցուցարարների թիվը անցավ հարյուր հազարից, որը ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ իրադարձություն էր:

Արցախյան շարժման հանրահավաքներին մասնակցում և ելույթներ էին ունենում հայ ականավոր գիտնականներ, մշակույթի և արվեստի գործիչներ՝

աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, արձակագիր Սերո Խանզադյանը, դերասան Սոս Սարգսյանը և ուրիշներ:

ԽՍՀՄ-ում ծավալվող զանգվածային ելույթներից անհանգստացած՝ Խորհրդային Միության ղեկավար Մ. Գորբաչովը Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին ուղղված իր ուղերձում կոչ էր անում «ժողովուրդների իսկական եղբայրության և միասնության», հարցի լուծումը տեսնելով Ադրբեջանում և Հայաստանում կուտակված տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ հիմնահարցերի լուծման մեջ: Այս ուղերձը, ինչպես նաև հետագա դեպքերն ու իրադարձությունները ցույց տվեցին, որ կենտրոնական իշխանությունները, Մ. Գորբաչովի գլխավորությամբ, մտադրություն չունեն հիմնահարցը դրականորեն լուծելու, քանզի նման նախադեպը կարող էր վարակիչ ու վտանգավոր դառնալ կայսրության մյուս տարածաշրջանների համար, որտեղ նույնպես սկսվել էին ազգային-ազատագրական շարժումներ:

ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում ծավալվող իրադարձություններին հետևում և իրենց բարոյական աջակցությունն էին ցուցաբերում խորհրդային երկրի ճանաչված մտավորականներ Անդրեյ Սախարովը, Գալինա Ստարովոյտովան, Միխայիլ Դուդինը, Անդրեյ Նույկինը և ուրիշներ: Արցախի ազատագրական պայքարի օրերին նրա կողքին էին արդարացի պահանջի մշտական աջակիցներ՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսն ու բուլղարուհի կինովավերագրող Ցվետանա Պասկալևան:

Սումգայիթյան ոճրագործությունը: Երբ ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում տեղի էին ունենում բացառապես խաղաղ հանրահավաքներ՝ ցույցերի, միտինգների, դասադուլների, գործադուլների և այլ ձևերով, 1988 փետրվարի 27–29-ին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից ոչ հեռու գտնվող արդյունաբերական Սումգայիթ քաղաքում իրականացվեց քաղաքի հայության կոտորած: Այդ ոճրագործության հետևանքով վայրագ ամբոխի կողմից տանջամահ արվեց և, պաշտոնական տվյալներով, սպանվեց 27 հայ, ծանր վիրավորվեց մի քանի հարյուր մարդ, հազարավոր մարդիկ դարձան փախստականներ: Այդ ջարդերից հետո քաղաքի ողջ մնացած հայ ազգաբնակչությունը ստիպված բռնեց գաղթի ճանապարհը՝ դառնալով փախստական:

Հայերի կոտորածը նախապատրաստված էր ադրբեջանական տեղական իշխանությունների կողմից: Ոստիկանությունն ու իրավապահ մարմինները մի քանի օր մատնված էին անգործության: Սումգայիթի ջարդերը կազմակերպվել էին Արցախի հիմնահարցի լուծումը կանխելու նպատակով: Հայերը երեք օր թողնվել էին անպաշտպան: Երեք օր ուշացումով միութենական կենտրոնական իշխանությունը զորք մտցրեց Սումգայիթ: Զինվորները մեծ դժվարությամբ կարողացան դադարեցնել ջարդը և քաղաքից դուրս բերել հայ բնակչությանը:

ԽՍՀՄ ղեկավարությունը ջանում էր կատարվածը ներկայացնել որպես մի խումբ խուլիգանների արարք: Բնականաբար՝ նման որակավորում տվեցին նաև միութենական պաշտոնական լրատվամիջոցները:

Որպեսզի չբացահայտվեն այդ հանցագործության իրական կազմակերպիչները և հաստատվի պաշտոնական վարկածը, մարդասպանների դատավարությունը փաստորեն ձախողվեց: Խորհրդային Միության տարբեր քաղաքներում տեղի ունեցան առանձին դատավարություններ, մեղադրվեցին ջարդերին մասնակցած մի քանի մարդիկ, իսկ իրական կազմակերպիչները մնացին անպատիժ: Այդպես էլ իրավաքաղաքական գնահատական չտրվեց այդ հանցագործությանը: Իրականում Սումգայիթի բռնարարքը ցեղասպանություն էր:

Սումգայիթում կազմակերպված բարբարոսական ջարդերով ադրբեջանական իշխանությունները նպատակ ունեին հայ բնակչության մեջ վախ ու խուճապ ստեղծելով հայաթափելու Արցախը: Սակայն ողջ հայությունը լցվեց հանցագործներին պատժելու և ազգային արդար պահանջների համար պայքարը մինչև վերջ հասցնելու վճռականությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ սկսվեց վերակառուցման քաղաքականությունը և ի՞նչ նպատակ էր հետապնդում: Ինչո՞ւ դա արդյունք չտվեց: Ձեր կարծիքով՝ վերակառուցումն անհրաժեշտությո՞ւն էր:
2. Ե՞րբ սկսվեց Արցախյան շարժումը, ո՞րն էր դրա նպատակը: Ինչպիսի՞ դիրք գրավեց ԽՍՀՄ ղեկավարությունը Արցախյան շարժման նկատմամբ:
3. Ե՞րբ և ինչո՞ւ կազմակերպվեց հայության կոտորածը Սումգայիթում: Ինչպե՞ս կարող եք գնահատել սումգայիթյան ոճրագործությունը:
4. Լրացրե՛ք «Վերակառուցման քաղաքականությունը» աղյուսակը:

Վերափոխումները	Հետևանքները

2. Ազատագրական շարժման վերելքը

Անգամ Սումգայիթում տեղի ունեցած վայրագություններից հետո Կենտրոնը Արցախյան հիմնահարցը ներկայացնում էր ոչ թե որպես քաղաքական, այլ զուտ սոցիալ-տնտեսական բնույթ ունեցող խնդիր: Ահա թե ինչու 1988թ. մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշմամբ Ադրբեջանին տրամադրվեց 400 մլն ռուբլի գումար՝ ԼՂԻՄ-ում կուտակված սոցիալ-տնտեսական և մշակութային հիմնահարցերը լուծելու համար: Ադրբեջանի

ղեկավարությունը այդ գումարը օգտագործեց մարզի ադրբեջանական բնակավայրերում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Շարժումը գնալով մեծ ծավալներ էր ընդունում և Հայաստանի իշխանություններից պահանջում էր ընդառաջ գնալ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշմանը:

1988թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը համաձայնություն տվեց մարզը Հայաստանի կազմի մեջ մտցնելուն և հարցը դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: 1988թ. հուլիսի 18-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը, որը քննարկեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Նիստին մասնակցում էին Հայաստանի, ԼՂԻՄ-ի, Ադրբեջանի ներկայացուցիչները: Ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Համբարձումյանը, գրող Վարդգես Պետրոսյանը, ԼՂԻՄ-ի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը և ուրիշներ իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան ոճրագործությունը և առաջ քաշեցին Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու անհրաժեշտությունը: Մասնավորապես վճռական էր Հ. Պողոսյանի ելույթը, ով հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են որոշել միայն Լեռնային Ղարաբաղի բնակիչները: Սակայն ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունը հուլիսի 18-ի նախագահության նիստում մերժեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի և Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանների ընդունած որոշումները՝ անհնարին համարելով ՀԽՍՀ-ի և ԱԽՍՀ-ի սահմանների փոփոխումը:

Արցախյան շարժումը կրում էր համաժողովրդական բնույթ: 1988թ. մայիսին Երևանում ստեղծվեց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, որի կազմում էին Վազգեն Մանուկյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը և ուրիշներ: Կոմիտեն իր ձեռքը վերցրեց շարժման կազմակերպումը և ղեկավարումը:

Արցախում շարժումը ղեկավարելու համար ստեղծվեց «Կռունկ» կոմիտեն:

1988թ. նոյեմբերին և 1989թ. օգոստոսին հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների՝ տարբեր պատճառներով թափուր մնացած մի քանի տեղերի համար հայտարարված մասնակի ընտրություններում հաղթեցին և պատգամավորներ դարձան Արցախյան շարժման ղեկավարներ ու ակտիվիստներ Լևոն Տեր-Պետրոսյանը, Աշոտ Մանուչարյանը, Ռաֆայել Ղազարյանը, Խաչիկ Ստամբոլցյանը, Արկադի Մանուչարովը և Ռոբերտ Քոչարյանը: Նորընտիր պատգամավորները նկատելի ազդեցություն ունեցան Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի հետագա գործունեության վրա:

1988թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց, որ միութենական իշխանությունների որոշումները հանրապետությունում կգործեն միայն այն դեպքում, երբ դրանք հավանության կարժանանան Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից:

Կենտրոնը մերժեց այդ որոշումը և փորձելով ճնշել օրեցօր հզորացող շարժումը՝ Երևանում մտցրեց արտակարգ դրություն ու պարետային ժամ: Խորհրդային զորքը մտավ Երևան: Արգելվեց հանրահավաքների և ցույցերի կազմակերպումը:

Իրադրությունը փոխվեց միայն 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժի հետևանքով: Այդ առիթով դեկտեմբերի 9-ին Երևան ժամանեց Մ. Գորբաչովը: Շարժումը գլխատելու նպատակով, օգտագործելով երկրաշարժի «ընձեռած բարեպատեհ հնարավորությունը», Մ. Գորբաչովի ղեկավարած Կենտրոնի հրահանգով 1988թ. դեկտեմբերին և 1989թ. հունվարին ձերբակալվեցին և վեց ամսով մոսկովյան բանտերում արգելափակվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Սակայն համաժողովրդական շարժումը չթուլացավ: Ժողովուրդը պահանջում էր ազատ արձակել Արցախյան շարժման ձերբակալված ղեկավարներին և օրինական լուծում տալ Արցախյան հիմնահարցին: Սակայն բարձրագույն իշխանությունները խուսանավման նպատակով փորձեցին ԼՂԻՄ-ի կառավարման կարգավիճակը փոխել: 1989թ. հունվարին ԼՂԻՄ-ում ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե Արկադի Վոլսկու նախագահությամբ, որին վերապահվում էր տեղական պետական մարմինների ղեկավարումը: Սակայն Արցախի հայ ազգաբնակչությունը դժգոհ մնաց Հատուկ կառավարման կոմիտեից, քանզի դրա գործունեությունը սպասված արդյունքը չտվեց: Նրա թույլտվությամբ Ադրբեջանի իշխանությունները միայն մարզի ադրբեջանաբնակ վայրերում էին ծավալել բնակարանների, արտադրական ձեռնարկությունների ու օբյեկտների լայնածավալ շինարարություն: 1989թ. մայիսի 25-ին Մոսկվայում աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարը: Հայաստանի բնակչության զանգվածային բողոքները իշխանություններին ստիպեցին թույլատրել ազատ հանրահավաքներն ու ցույցերը: Նոր թափ առած ժողովրդական շարժման պահանջով իշխանությունները մայիսի վերջին ազատ արձակեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին: Այդ ժամանակահատվածում չէր դադարում պայքարը նաև Արցախում, որտեղ երկու ամսից ավելի գործադուլ էր անում մարզի ողջ աշխատավորությունը, իսկ չարտոնված հանրահավաքները ամենօրյա երևույթ էին: Շրջափակման և գործադուլների մեջ պայքարող Արցախը հայտնվել էր ճգնաժամի շեմին: Քանի որ Հատուկ կառավարման կոմիտեն չէր պաշտպանում արցախահայերի իրավունքները, ուստի նրանք որոշեցին ստեղծել ազգային նոր մարմին: Նման պայմաններում 1989թ. օգոստոսին մարզկենտրոն Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրվեց Ազգային խորհուրդ, որն էլ գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը: 1989թ. դեկտեմբերի 1-ին Երևանում տեղի ունեցած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համա-

տեղ նիստը պատմական որոշում կայացրեց Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին: Դրանով Հայաստանի ազգային իշխանությունները քայլ կատարեցին սրբագրելու 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի անարդար որոշումը:

Արցախյան շարժման ընթացքում հայ ժողովուրդը կորցրեց կոմունիստական կուսակցության հանդեպ ունեցած հավատը, իսկ ԽՍՀՄ-ում տեղի ունեցող ազգային-քաղաքական խմորումները մոտեցնում էին այդ պետության վախճանը:

Հանրապետություններում ազգային շարժումները ղեկավարում էին ժողովրդի վստահությունը վայելող կազմակերպությունները:

Հայաստանում ազգային շարժման ղեկավարությունը ստանձնած Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի հիմքի վրա 1989թ. նոյեմբերին առաջացավ «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ) կազմակերպությունը, որն իր հիմնական նպատակն էր համարում Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին:

Հայերի բռնագաղթը Ադրբեջանից: Արցախյան շարժման առաջին օրերից Ադրբեջանի տարածքում բնակվող հայությունը սկսեց ենթարկվել մշտական հարձակումների ու թալանի: 1988թ. գարնանից Կիրովաբադից (Գյանջա), Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Շաքիից և հայաշատ այլ բնակավայրերից հայ ազգաբնակչությունը, թալանի ու բռնությունների ենթարկվելով, զանգվածաբար արտաքսվեց:

Առավել ուժեղ ճնշումների ենթարկվեց Կիրովաբադի հայությունը: Երկու շաբաթ շարունակ հայկական եկեղեցում հավաքված հայերը դիմադրություն ցույց տվեցին ադրբեջանական ամբոխին: Քաղաք մտցվեցին զինվորական ստորաբաժանումներ: Բայց վիճակը չկարգավորվեց: Մարդիկ հարկադրված դիմում էին արտագաղթի:

Բռնագաղթածների մեծ մասը չկարողացավ իր հետ դուրս բերել ունեցվածքը, որը թալանվեց ադրբեջանցիների կողմից: Միայն 1988թ. մարտից մինչև դեկտեմբեր Ադրբեջանից բռնագաղթել է շուրջ 200 հազար հայ:

Բռնագաղթի հաջորդ խոշոր ալիքը սկսվեց 1990թ. հունվարին, երբ մեկ շաբաթվա ընթացքում Բաքվում սպանվեցին 100-ից ավելի հայեր, իսկ շուրջ 200 հազարը ստիպված հեռացան քաղաքից: Ընդհանուր առմամբ 1988–1991թթ. Ադրբեջանի հակահայ քաղաքականության հետևանքով այդ երկրից բռնագաղթի ենթարկվեցին շուրջ 400 հազար հայ բնակիչներ, որոնց մեծ մասը ապաստանեց Հայաստանում, մյուսները ապաստանեցին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում և արտերկրում:

Ազգամիջյան լարվածության հետևանքով 1988թ. աշնանը կազմակերպվեց Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթը: Ընդ որում, եթե Ադրբեջանից գաղթող հայերը թալանվեցին ու հալածվեցին, ապա Հայաստանից գաղթող ադրբեջանցիների համար ընդունելի պայմաններ ստեղծվեցին: Իրենց ունեց-

վածքը տեղափոխելու համար նրանց տրամադրվեց տրանսպորտ, հնարավորություն ընձեռվեց տները վաճառելու և այլն: Ադրբեջանից բռնագաղթածների կարիքները հոգալը ծանր էր ճգնաժամային պայմաններում գտնվող Հայաստանի համար, հատկապես այն պատճառով, որ ներգաղթածները հիմնականում քաղաքաբնակներ էին: Այդ վիճակը վատթարացավ աղետալի երկրաշարժի հետևանքով:



Սպիտակի երկրաշարժի հետևանքները

1988թ. Սպիտակի երկրաշարժը: 1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկեց հանրապետության տարածքի մոտ 40%-ը: Վայրկյանների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Սպիտակ, Լենինական, Կիրովական, Ստեփանավան քաղաքները, հարյուրից ավելի գյուղեր ու բնակավայրեր: Զոհվեց 25 հազարից ավելի մարդ, անօթևան դարձավ կես միլիոնը:



Նիկոլայ Ռիժկով

Երկրաշարժի հենց հաջորդ օրը Մոսկվայից Հայաստան ժամանեց հատուկ հանձնաժողովը ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովի ղեկավարությամբ: Հանձնաժողովը մեծ եռանդով կազմակերպչական վիթխարի աշխատանք կատարեց՝ ազգաբնակչությանը օգնություն ցույց տալու, աղետի հետևանքները վերացնելու համար: ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովը դադարեցրեց իր պաշտոնական այցը ԱՄՆ-ում և ժամանեց Հայաստան:

Հանրապետություն ժամանեցին հարյուրավոր փրկարարներ և բժիշկներ: ԽՍՀՄ հանրապետությունները երկրաշարժի առաջին ժամերից սկսեցին Հայաստան տեղափոխել դեղորայք, բուժսարքավորումներ, շինարարական տեխնիկա, վրաններ, սննդամթերք: 1989 թվին աղետի գոտում աշխատում էին Խորհրդային Միության տարբեր շրջաններից ժամանած ավելի քան 40 հազար մասնագետներ, զինծառայողներ:

Երկրաշարժի հետևանքները Գյումրիում

Հազարավոր մարդիկ դուրս բերվեցին աղետի գոտուց և հանգրվան գտան ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում, Կովկասի առողջարաններում ու հանգստյան տներում: Բազմաթիվ խեղված երեխաներ բուժման նպատակով տեղափոխվեցին Խորհրդային Միության և արտասահմանի բուժարաններ:

Հայաստանին համակողմանի օգնություն ցույց տվեցին աշխարհի ավելի քան 113 երկրներ և 7 միջազգային կազմակերպություններ:

Երկրաշարժի առաջին ժամերից Սփյուռքի հայությունը համախմբվեց և բազմակողմանի օգնություն ցույց տվեց իր հայրենակիցներին: Ստեղծվեցին «ՍՈՍ Արմենի», «Ազնավուրը՝ Հայաստանին» և տասնյակ այլ կազմակերպություններ: Բազմաթիվ սփյուռքահայեր շտապեցին հայրենիք՝ իրենց հետ բերելով սննդամթերք, հագուստ, դեղորայք: Նրանցից շատերը՝ բժիշկներ, հոգեբաններ, շինարարներ, ճարտարապետներ, մնացին Հայաստանում և անմիջականորեն մասնակցեցին փրկարարական ու վերականգնողական աշխատանքներին: Այստեղ էր նաև Շառլ Ազնավուրը, որը հետագայում նույնպես մեծ եռանդով շարունակեց օգնություն կազմակերպելու իր ազգանվեր գործունեությունը: Մեծ երգահանի կողմից գրվեց երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված սրտառուչ երգ:

Հայաստանին օգնություն բերող հարավսլավական ինքնաթիռը աղետի ենթարկվեց, և նրա 7 հոգուց բաղկացած անձնակազմը զոհվեց Երևանի մատույցներում: Հայ ժողովուրդը մշտապես կպահպանի նրանց հիշատակը:

Տարբեր պետություններ շարունակեցին օգնությունը Հայաստանին նաև հետագա տարիներին: Իտալացիները մի ամբողջ բնակելի թաղամաս կառուցեցին Սպիտակում, նորվեգացիները՝ ժամանակակից հիվանդանոց, որը կրում է մեծ հայասեր Ֆ. Նանսենի անունը: Թաղամաս են կառուցել ավստրիացիները: Գյումրիում շահագործման հանձնվեց անգլիացիների կառուցած դպրոցը, որի բացմանը մասնակցեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեթչերը: Աղետի գոտում ծավալված շինարարական աշխատանքներին խանգարում էր Ադրբեջանի կողմից իրականացվող տնտեսական շրջափակումը, որի հետևանքով անհրաժեշտ շատ շինանյութեր ու ապրանքներ տեղ չէին հասնում:

Զոհված հարավսլավացի օդաչուներին նվիրված հուշարձանը

Չնայած դրսից եկած անշահախնդիր զգալի օգնությանը՝ աղետի գոտու բնակչության մի մասը շարունակում էր մնալ անօթևան և առանց աշխատանքի: Դա ավելի էր սրում սոցիալ-տնտեսական վիճակը հանրապետությունում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ԽՄԿԿ Կենտկոմը Արցախյան հիմնահարցը ինչո՞ւ էր փորձում ներկայացնել սոսկ որպես սոցիալ-տնտեսական բնույթի խնդիր: Փորձե՛ք ապացուցել, որ Կենտկոմի այդ որակումը չէր համապատասխանում իրականությանը: Ե՞րբ և ինչո՞ւ ստեղծվեց Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, ովքե՞ր էին մտնում նրա կազմի մեջ: Ինչպե՞ս ընթացավ Արցախյան շարժման հետագա ծավալումը:
2. Ե՞րբ և ինչո՞ւ Հայաստան ժամանեց Մ. Գորբաչովը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակ էր հետապնդում ԼՂԻՄ-ի կառավարման կարգավիճակը փոխելը: Փորձե՛ք գնահատել Հայկական ԽՍՀ-ի և ԼՂ-ի վերամիավորման որոշումը:
3. Ե՞րբ սկսվեց հայերի բռնագաղթը, ի՞նչ բնակավայրեր հայաթափ եղան: Կարելի՞ է հավասարության նշան դնել Ադրբեջանից հայերի բռնագաղթի և Հայաստանից ադրբեջանցիների արտագաղթի միջև: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
4. Ե՞րբ տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը և ի՞նչ արձագանք գտավ համաշխարհային հանրության շրջանում: Ինչպե՞ս կարող եք գնահատել Սփյուռքի հայության օգնությունը մայր հայրենիքին:
5. Լրացրե՛ք «Ազատագրական շարժման վերելքը» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Իրադարձությունը

13-րդ թեմայի ամփոփում

1. 1985թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Մ. Ս. Գորբաչովը: ԽՍՀՄ-ը ճգնաժամից դուրս բերելու համար նա ձեռնամուխ եղավ վերակառուցման քաղաքականության մշակմանը:
2. Հավատալով վերակառուցման քաղաքականությանը՝ արցախահայությունը բարձրացրեց «Ղարաբաղյան հիմնախնդիրը»: 1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզխորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանին վերամիավորելու մասին: Հայաստանը և Հայկական սփյուռքը արցախահայության հետ համերաշխության զանգվածային ցույցեր կազմակերպեցին: Շարժումը ղեկավարելու համար ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն:
3. Ադրբեջանական իշխանությունները Սումգայիթում 1988թ. փետրվարի 27–29-ին կազմակերպեցին քաղաքի հայ բնակչության վայրագ կոտորած: ԽՍՀՄ ղեկավարությունը չտվեց կատարված ոճրագործության իրավաքաղաքական գնահատականը:

4. 1988թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմի մեջ մտցնելուն: Սակայն 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը մերժեց այդ որոշումը:
5. Իրադրությունը փոխվեց Սպիտակի երկրաշարժից հետո, երբ Հայաստան ժամանեց Մ. Գորբաչովը: Կենտրոնի հրահանգով ձերբակալվեցին և վեց ամսով մոսկովյան բանտերում արգելափակվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Խուսանավման նպատակով ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունները փոխեցին ԼՂԻՄ-ի կառավարման կարգավիճակը: Ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե, որից արցախահայերը դժգոհ մնացին: Նրանք ընտրեցին իրենց մարմինը՝ Ազգային խորհուրդը, որին շուտով հետևեց հաջորդ քայլը՝ Հայկական ԽՍՀ-ի և ԼՂ-ի վերամիավորման որոշումը:
6. Ստեղծված իրավիճակում լուրջ սպառնալիքի տակ էր դրվել Ադրբեջանում հայ բնակչության ֆիզիկական գոյությունը: 1988թ. գարնանից հայ բնակչությունը զանգվածաբար արտաքսվեց Կիրովաբադից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Շաքիից և հայաշատ այլ բնակավայրերից: Բռնագաղթի հաջորդ ալիքը սկսվեց 1990թ. հունվարին Բաքվում, որտեղից ստիպված հեռացավ շուրջ 200 հազար մարդ: 1988թ. աշնանը տեղի ունեցավ Հայաստանից ադրբեջանցիների կազմակերպված ու ապահով արտագաղթը:
7. 1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ: Համաշխարհային հանրությունը շտապեց օգնության ձեռք մեկնել աղետյալներին:

ԹԵՄԱ 14 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. Պայքար Հայաստանի անկախացման համար

Ժողովրդական շարժման խորացումը: Հայ ժողովուրդը երկու տարվա արցախյան ազատագրական ծանր ու հետևողական պայքարում չկորցրեց իր ողջամտությունը և դուրս չեկավ պայքարի սահմանադրական շրջանակներից: Նա ավելի համախմբվեց ու դարձավ միասնական: Սեփական ուժերի նկատմամբ հավատն ու վճռականությունը առաջ մղեցին ազգային անկախ պետականության վերականգնման խնդիրը: 1990 թվականին նոր ուժով ծավալվեց համաժողովրդական շարժումը:

Այդ ժամանակ հայ հասարակական-քաղաքական կյանքում որոշակի բևեռացում նկատվեց: Արցախի հարցում ԽՍՀՄ ղեկավարության միտումնավոր քաղաքականության և հանրապետության ղեկավարության անհեռատես քայլերի հետևանքով ժողովուրդը կորցրեց հավատը իշխանությունների

նկատմամբ: 1990թ. ապրիլին տեղի ունեցավ Հայկոմկուսի ղեկավարության փոփոխություն, բայց դա չբարձրացրեց ժողովրդի վստահությունը կոմունիստական իշխանությունների նկատմամբ: Նման պայմաններում 1990թ. մայիսի 20-ին առաջին անգամ կայացան Հայաստանի Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրություններ՝ մեծամասնական ընտրակարգով: Դրանք Խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին ժողովրդավարական ընտրություններն էին: Համաձայն 1989թ. դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ ԳԽ նիստի որոշման՝ ընտրություններին առաջին անգամ մասնակցեց նաև Արցախի հայ բնակչությունը: Ընտրական պայքարն ընթանում էր, մի կողմից, իշխանության լծակը դեռևս պահպանող Հայաստանի կոմունիստական կուսակցության (ՀԿԿ), մյուս կողմից՝ բնակչության ճնշող մեծամասնության աջակցությունը վայելող Հայոց համազգային շարժման միջև: Ընտրողների ձայները համարյա հավասարապես բաժանվեցին Հայկոմկուսի և ՀՀՇ-ի թեկնածուների միջև: Ընտրություններով ստեղծվեց հասարակության մեջ իշխող տրամադրություններն արտացոլող, իր կազմով սկզբունքորեն նոր Գերագույն խորհուրդ (խորհրդարան):

Նոր խորհրդարանը սկսեց գործել հուլիսի 20-ից և առաջին իսկ օրերից բարդ պայմաններում ակտիվորեն ձեռնամուխ եղավ անկախ պետականության ստեղծմանը: 1990թ. օգոստոսի 4-ին խորհրդարանը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց ՀՀՇ վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանին: Մի քանի օր անց Նախարարների խորհրդի նախագահ ընտրվեց Վազգեն Մանուկյանը: Դրանով վերջ դրվեց կոմունիստական կուսակցության մենիշխանության 70-ամյա շրջանին:

Հայաստանի անկախության հռչակագիրը: 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով Հայաստանի անկախացման գործընթացի սկիզբը դրվեց:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (Հայաստան): Այսպիսով՝ Հայաստանի պատմության մեջ սկսվում էր Երրորդ հանրապետության շրջանը:

Հռչակագրի հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը հավանություն չէր ստանում Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա չէր կարող գործել հանրապետությունում: Պետական դրոշ հաստատվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն, ապա ընդունվեց նոր պետականության մյուս խորհրդանիշը՝ զինանշանը, երկուսն էլ Առաջին հանրապետության խորհրդանիշներն էին, որով ընդգծվում էր կապը Առաջին և նորահռչակ Երրորդ հանրապետությունների միջև:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, ձեռնարկությունները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն սեփականության բազմազանության և ազատ շուկայական հարաբերությունները: ՀՀ-ն պետք է ունենա իր ազգային բանակը, սեփական դրամական ու բանկային համակարգը և այլն:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբրև պետական լեզվի, կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն:

Մինչև նոր սահմանադրության ընդունումը հռչակագիրը ծառայելու էր իբրև ծրագրային փաստաթուղթ, որը հետագայում դրվեց նոր սահմանադրության հիմքում:

1990թ. ընտրություններով ձևավորվեց ըստ էության խորհրդարանական կառավարման հանրապետություն: Չկար նախագահի պաշտոն, խորհրդարանը նշանակում էր կառավարություն, որի ձեռքին էր ամբողջ գործադիր իշխանությունը: Այդ կարճ «պառլամենտական հանրապետության» ժամանակաշրջանում (1990թ. օգոստոսից 1991թ. սեպտեմբեր) իրականացվել են բազմաթիվ ծրագրեր. հողի սեփականաշնորհում, գազամուղի անցկացում Վրաստանի տարածքով, միջազգային կապի առաջին միջոցների կառուցում, որոնց շնորհիվ Հայաստանն անմիջական կապ հաստատեց աշխարհի հետ:

Պատերազմական գործողությունների սանձազերծումը Ադրբեջանի կողմից: 1990թ. հունվար–փետրվար ամիսներին ադրբեջանական գրոհայինները զինված հարձակումներ սկսեցին Հայաստանի սահմանների ամբողջ երկայնքով: Սակայն հայ աշխարհազորային ինքնապաշտպանական ջոկատները Երասխավանում ու սահմանամերձ մյուս հատվածներում հերոսաբար դիմադրեցին և կանխեցին հակառակորդի առաջխաղացումը: Ինչպես միշտ, այս անգամ ևս Մոսկվան հավասարապես հանդիմանեց երկու կողմերին:



Սիմոն Աչիքգյոզյան (1939-1991)

Սակայն ադրբեջանական իշխանությունները, օգտվելով Մոսկվայի աջակցությունից, շարունակում էին բռնագրավել հայերի բնակավայրերը Արցախում և արտաքսել նրանց գյուղերից: 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին Ադրբեջանը բացահայտ պատերազմ սկսեց Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ՝ իրականացնելով նախօրոք մշակված «Օղակ» («Կոլցո») ռազմական գործողության ծրագիրը: Այդ գործողությունը սկսվեց ապրիլին, որին մասնակցում էին խորհրդային զորամիավորումները,

ադրբեջանական օմոնի (ոստիկանության հատուկ նշանակության ջոկատներ) ստորաբաժանումներն ու տասնյակ ավարառու հրոսակախմբեր: Նրանք նախապես գրավել էին Գետաշենի շրջակա բարձունքները, շրջափակել գյուղը: Ձրահամեքենաներով, տանկերով և զենքերի տարբեր տեսակներով հարձակվեցին հայկական գյուղերի վրա: Կատաղի մարտեր տեղի ունեցան Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում: Գետաշենցիների հերոսական պայքարը գլխավորում էր Թաթուլ Կրպեյանը, իսկ Մարտունաշենի պաշտպանության ղեկավարը Սիմոն Աչիքգյոզյանն էր: Անհավասար մարտում հերոսաբար զոհվեցին Թաթուլ Կրպեյանը (հետմահու՝ Հայաստանի Ազգային հերոս), Սիմոն Աչիքգյոզյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Հրաչ (Ձարգանդ) Դանիելյանը և շատ ուրիշներ: Ձավթիչները գրավեցին Գետաշենն ու Մարտունաշենը, որտեղից երեք հազարից ավելի բնակիչներ ռազմական ուղղաթիռներով տարհանվեցին ՀԽՍՀ: Ոգևորված այս վանդալիզմով՝ ադրբեջանցիները համատարած հարձակումներ սկսեցին շրջակա հայկական գյուղերի վրա: Մայիսի կեսերին բռնագաղթեցին Հադրութի և Շահումյանի (Հյուսիսային Արցախ) 24 հայկական գյուղերի բազմահազար հայ բնակիչները: Փաստորեն, 1991թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց հայ-ադրբեջանական պատերազմ:



Թաթուլ Կրպեյան
(1965-1991)

1991թ. հունիսին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների նիստում մշակվեց արցախահայության գոյության պահպանման ծրագիրը: Մոսկվայի կողմից մարզային և տեղական իշխանությունների կազմալուծման հետևանքով բնակչությունը մնացել էր առանց ղեկավարության: Նստաշրջանը պահանջեց վերականգնել մարզային և տեղական իշխանությունները, գլխավորել բնակչության ազատագրական պայքարը: Հուլիսի վերջերին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Դրանք մարզի բոլոր շրջաններում կազմակերպեցին զինված ջոկատներ: Հետագայում (1992թ. փետրվարին) ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ որոշում ընդունեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին, որտեղ նշվում էր, որ այդ զինված ջոկատները պետք է դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և համախմբել մեկ միասնական հրամանատարության ներքո: Այդ ուժերի հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս):



Արկադի
Տեր-Թադևոսյան
(Կոմանդոս)
(1939)

Անկախության հռչակագրից

Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ փոփոխությունների հանգեցրեց երկու տարվա Արցախյան ազատագրական պայքարը: Հիմնավորեք ձեր պատասխանը: Ինչով էին տարբերվում Հայաստանի Գերագույն խորհրդի 1990թ. ընտրությունները նախորդ բոլոր ընտրություններից: Երբ սկսեց գործել նոր խորհրդարանը, ով ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ:
2. Երբ ընդունվեց Հայաստանի անկախության հռչակագիրը: Որո՞նք են հռչակագրի հիմնական դրույթները: Փորձեք գնահատել Հայաստանի անկախության հռչակագիրը:
3. Երբ ադրբեջանական գրոհայինները սկսեցին զինված հարձակումները Հայաստանի սահմանների ողջ երկայնքով: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակ էր հետապնդում նրանց հարձակումը: Կարելի՞ է ասել, որ սկսելով «Օղակ» գործողությունը՝ Ադրբեջանը բացահայտ պատերազմ սանձազերծեց Արցախի դեմ: Նկարագրեք Գետաշենի և Մարտունաշենի հերոսական կռիվները: Ովքե՞ր ընկան այդ կռիվներում, ի՞նչ գիտեք նրանց մասին:
4. Լրացրեք «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» աղյուսակը:

Փաստաթուղթը	Բովանդակությունը			
Հայաստանի անկախության հռչակագիրը	Քաղաքական	Տնտեսական	Մշակութային	Իրավունքներ, ազատություններ

14-րդ թեմայի ամփոփում

1. Երկու տարվա Արցախյան ազատագրական պայքարը և սեփական ուժերի նկատմամբ հավատն ու վստահությունը առաջ մղեցին անկախ պետականության վերականգնման խնդիրը:
2. 1990թ. մայիսին ընտրված նոր խորհրդարանը օգոստոսի 23-ին ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»: ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի պատմության մեջ սկսվեց 3-րդ հանրապետության շրջանը:
3. 1990թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցան հայ-ադրբեջանական սահմանային բախումներ: Հայ աշխարհազորային ջոկատներն անառիկ պահեցին մեր սահմանները և կանխեցին Հայաստանը պատերազմի մեջ ներքաշելու ադրբեջանական փորձերը:

4. Ադրբեջանը 1991թ. իսկական պատերազմ սանձազերծեց Հայաստանի և Արցախի դեմ: Ադրբեջանական գրոհայինները ԽՍՀՄ ներքին զորքերի աջակցությամբ 1991թ. ապրիլ–մայիս ամիսներին գրավեցին և ավերեցին Գետաշենն ու Մարտունաշենը, հայաթափեցին Հադրութի և Շահումյանի 24 հայկական գյուղերը: 1991թ. մշակվեց արցախահայության գոյության ապահովման ծրագիր:

ԹԵՄԱ 15 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հետպատերազմյան տասնամյակները նշանավորվեցին հայ ժողովրդի մտավոր կյանքի տարբեր ճյուղերի՝ կրթության, գիտության, արվեստի որոշակի հաջողություններով: 1950-ական թվականների կեսերից, երբ դատապարտվեց անհատի պաշտամունքը և բացահայտվեցին նրա բացասական հետևանքները, հնարավորություն ստեղծվեց մշակույթի համեմատաբար ազատ զարգացման համար: Մեծ թափ հաղորդվեց հատկապես անցյալից ժառանգված մշակութային ավանդույթների ուսումնասիրմանը: Ժողովուրդն ըստ ամենայնի գնահատեց հազարամյակների ընթացքում իր ստեղծած արժեքները, որոնք արդի մշակույթի հետ դարձան հայության ինքնահաստատման հուսալի երաշխիք: Իզուր չէ, որ 1960-70-ական թվականները համարվեցին ազգային մշակույթի զարթոնքի տարիներ:

1. *Կրթությունը և գիտությունը*

Կրթությունը: Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո կրթության ասպարեզում նկատելի տեղաշարժեր կատարվեցին: Դպրոցական և բարձրագույն կրթության համակարգերը վերելք ապրեցին: 1958թ. օրենք ընդունվեց 8-ամյա պարտադիր ուսուցման անցնելու մասին: 1966թ. խնդիր դրվեց անցնելու ընդհանուր միջնակարգ կրթության: Դրա իրականացումը պահանջեց մեծ ջանքեր և շուրջ 10 տարի ժամանակ:

Սովետաշեն գյուղի միջնակարգ դպրոցի սաները իրենց աճեցրած սերմերը պատրաստում են ցանելու համար:

Հետևողական ուշադրություն էր դարձվում դպրոցները հարմարավետ շենքերով ապահովելուն: Բավական է նշել,

որ միայն 1966թ. հանրապետությունում շահագործման հանձնվեցին 150 դպրոցական շենքեր: Մեծ ուշադրություն դարձվեց միջնակարգ մասնագիտական կրթությանը և երեկոյան ուսուցմանը: 1980թ. միջնակարգ դպրոցների թիվը հասավ 943-ի, իսկ տեխնիկումներինը՝ 70-ի:

Որոշակի առաջընթաց կատարվեց նաև բարձրագույն կրթության ոլորտում: Հետպատերազմյան տարիներին կառուցվեցին պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի նոր ուսումնական շենքերը: Արդի տեխնիկական մասնագիտությունների գծով բացվեցին նոր ֆակուլտետներ ու բաժիններ: Մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղեր հիմնվեցին Լենինականում և Կիրովականում: 1980-ական թթ. կեսերին հանրապետությունում գործում էր 14 բուհ 55 հազար ուսանողներով, ուր կադրեր էին պատրաստում ավելի քան 100 մասնագիտությունների գծով:

Գիտությունը: Հայրենական պատերազմի եռուն շրջանում՝ 1943թ. հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նրա հիմնադիր անդամների մեջ էին գիտության տարբեր բնագավառների մեծանուն մասնագետներ՝ Լևոն և Հովսեփ Օրբելիները, Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, Վիկտոր Համբարձումյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, գրականագետ Մանուկ Աբեղյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց արևելագետ Հովսեփ Օրբելին, որին 1947թ. փոխարինեց աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը: Նրա երկարամյա նախագահության շրջանում (1947-1993) բացվեցին գիտական նոր ուղղությունների բազմաթիվ ինստիտուտներ, լաբորատորիաներ, Բյուրականի աստղադիտարանը դարձավ աստղագիտության ոլորտի գիտահետազոտական խոշոր կենտրոններից մեկը աշխարհում: Ակադեմիան լայն ճանաչման արժանացավ Խորհրդային Միությունում և արտասահմանում:

Աբրահամ Ալիխանյան (1904-1970)

Արտեմ Ալիխանյան (1908-1978)



Բյուրականի աստղադիտարանի մեծ աստղադիտակը

Գիտությունների ակադեմիայի ստեղծումը խթանեց հանրապետությունում գիտության զարգացումը:

Տեսական և կիրառական մաթեմատիկայի ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները հանգեցրին հանրահայտ մաթեմատիկական դպրոցի ստեղծմանը, որի հիմնադիրն էր Արտաշես Շահինյանը: Մաթեմատիկայի բնագավառում բեղմնավոր աշխատանքներ էին կատարում Մխիթար Ջրբաշյանը, Նորայր Առաքելյանը, Ալեքսանդր Թալալյանը և ուրիշներ: Այդ նույն դպրոցի երիտասարդ սաներից Սերգեյ Մերգելյանը շատ բարձր արդյունքների հասավ, նրա անունը հնչեց ոչ միայն Հայաստանի, այլև ԽՍՀՄ սահմաններից դուրս:

Սերգեյ Մերգելյան (1928-2008)

Մեխանիկայի բնագավառում գիտական դպրոց ստեղծվեց, որի հիմնադիրները եղան Նագուշ Հարությունյանը և Սերգեյ Համբարձումյանը: Ֆիզիկայի ասպարեզում Աբրահամ և Արտեմ Ալիխանյանների հետազոտական աշխատանքները համընդհանուր ճանաչման արժանացան: Արտեմ Ալիխանյանի ղեկավարությամբ 1967թ. Հայաստանում գործարկվեց ԽՍՀՄ խոշորագույն էլեկտրոնային արագացուցիչներից մեկը: Ֆիզիկայի տարբեր բնագավառներում կատարված հետազոտությունների հիման վրա զարգացան արտադրության միանգամայն նոր ճյուղեր՝ կիբեռնետիկան, ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արտադրությունը:

1950-ական թթ. վերջերից հայ գիտնականներն ու ճարտարագետները նախագծեցին և գործարկեցին «Հրազդան» և «Նաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենաները:

Նշանակալի հաջողություններ ձեռք բերվեցին քիմիական և կենսաբանական գիտությունների ասպարեզում: Քիմիայի տարբեր ուղղություններում գիտական արժեքավոր ներդրում են կատարել Հրաչ Բունիաթյանը, Արմենակ Մնջոյանը, Արամ Նալբանդյանը և նրանց գործընկերները:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մատենադարանը

Կենսաբանական գիտություններից ֆիզիոլոգիայի բնագավառում համաշխարհային ճանաչման արժանացավ Լևոն Օրբելու ներդրումը:

Լուրջ ձեռքբերումներ արձանագրվեցին հայագիտության տարբեր բնագավառներում՝ հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, կերպարվեստի, երաժշտության ասպարեզներում: Գաղափարական հարկադրանքի թուլացման պայմաններում 1950-ական թվականների վերջերից պատմաբանները սկսեցին Հայկական հարցի, ազգային-ազատագրական պայքարի, ցեղասպանության, հայկական

գաղթավայրերի և Սփյուռքի պատմության ուսումնասիրությունը: Հայաստանի հին շրջանի պատմության ու մշակույթի արժեքավոր նյութեր հայտնաբերվեցին Բորիս Պիոտրովսկու, Բաբկեն Առաքելյանի, Կարո Ղաֆադարյանի և մյուս հնագետների կողմից՝ Կարմիր Բլուրում, Գառնիում, Դվինում և այլ հնավայրերում կատարած պեղումներից:

Հայաստանի հին և միջնադարյան պատմության շատ հանգուցային հիմնահարցեր մշակեցին Սուրեն Երեմյանը, Լևոն Խաչիկյանը, Գագիկ Սարգսյանը:

Ավագ սերնդի մասնագետներից այս պատմափուլում գործում էր Աշոտ Հովհաննիսյանը: Նա ծանրակշիռ աշխատություններ ստեղծեց հայ ազատագրական շարժումների և Մ. Նալբանդյանի ու նրա ժամանակի մասին: XVIII դարի ազատագրական շարժումների վերաբերյալ, Հովսեփ Էմինին նվիրված մենագրություններ ստեղծեց Աբգար Հովհաննիսյանը: Թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի պայքարը լուսաբանեց Մկրտիչ Ներսիսյանը: Նա հասարակության ուշադրությանը ներկայացրեց նաև ցեղասպանության փաստաթղթերի ժողովածուն:

Պատմագրության ասպարեզում կատարված ուսումնասիրությունների հիմքի վրա ստեղծվեց «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակը, որը մեր ժողովրդի ամբողջական պատմությանը նվիրված, նախադեպը չունեցող ծանրակշիռ կոլեկտիվ աշխատություն է: Նույն ձևով ստեղծվեց «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը: Ակադեմիկոսներ Հրաչյա Աճառյանը, Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Գևորգ Ջահուկյանը, Էդվարդ Աղայանը և մյուս լեզվաբանները ծանրակշիռ ու բարձրարժեք բազմաթիվ աշխատություններ ստեղծեցին հայոց լեզվի պատմության, քերականության վերաբերյալ: Հրատարակվեցին մի շարք արժեքավոր բառարաններ:

Մատենադարանը գրադարանային կարգավիճակից վերափոխվեց գիտահետազոտական հիմնարկության և, տեղափոխվելով ձեռագրերի պահպանության հարմարավետ շենք, սկսեց արդյունավետ զբաղվել սկզբնաղբյուրների ուսումնասիրության և հրատարակման գործով: Հանրապետության կյանքում նշանակալի երևույթ էր «Հայկական սովետական հանրագիտարանի» ստեղծումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հետպատերազմյան տասնամյակները նշանավորվեցին մշակութային կյանքի վերելքով: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էր պայմանավորված այդ վերելքը:
2. Ի՞նչ տեղաշարժեր կատարվեցին կրթության ասպարեզում: Բերե՛ք փաստեր դպրոցական և բուհական նոր շենքերի շահագործման մասին:
3. Ե՞րբ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, ովքե՞ր էին հիմնադիր անդամների կազմում: Նշե՛ք ձեզ հայտնի գիտնականների անունները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:

4. Լրացրեք «Գիտության զարգացումը» աղյուսակը:

Գիտությունը	Առանձին բնագավառները	Գործիչները
Հայագիտություն		
Բնագիտամաթեմատիկական գիտություններ		

2–3. Գրականությունը և արվեստը

Հովհաննես Շիրազ
(1914-1984)

Գրականությունը: Հայրենական մեծ պատերազմը լայն արտացոլում գտավ գրականության մեջ: Պատերազմի տարիներին գեղարվեստական որոշ երկերի կողքին առաջատար էր դարձել հրապարակախոսությունը: Բազմաթիվ հոդվածներով հանդես եկան Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Հրաչյա Քոչարը, Նաիրի Զարյանը և ուրիշներ: Այդ շրջանի գեղարվեստական ծավալուն գործերից նշանավոր են Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը: Հետպատերազմյան առաջին տասնամյակում գրականության մեջ գերիշխող էր դարձել պատերազմի թեմատիկան: Պատերազմին նվիրված ծավալուն երկեր ստեղծեցին Սերո Խանզադյանը («Մեր գնդի մարդիկ») և ուրիշ գրողներ: Զինվորի սխրանքը չափածո երկերով գովերգեցին Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Գևորգ Էմինը և շատ ուրիշներ:

Գրողների ավագ սերնդի հետ արժեքավոր գործեր ստեղծեցին երիտասարդ գրողները: Ստեղծագործական նոր բարձունքներ նվաճեց հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից Հովհաննես Շիրազը: Նրա բանաստեղծությունների մեջ առաջնակարգ տեղ էին գրավում հայրենիքի, սիրո գաղափարները:

Պարույր Սևակ
(1924-1971)

Ամբողջ ուժով հնչեց Պարույր Սևակի տաղանդը՝ մարդու ազատությունն ու բարոյական վեհ հատկությունները գովերգող նրա մարտական քնարը: Նրա լավագույն ստեղծագործություններից էին «Անլռելի զանգակատուն» պոեմը, «Եղիցի լույս» և «Մարդը ափի մեջ» ժողովածուները:

Ստեղծագործական նոր բարձունքների հասան մեծ ժողովրդականություն վայելող Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը, երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից Ռազմիկ Դավոյանը, Լյուդվիգ Դուրյանը և ուրիշներ:

Մի խումբ անվանի գրողներ իրենց ստեղծագործություններում անդրադարձան հայ ժողովրդի պատմական անցյալին, նրա ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագներին: Լայն ճանաչում ստացավ Հրաչյա Քոչարի «Նահապետ» ստեղծագործությունը, ուր ներկայացվում են հայ ժողովրդի 1915թ. ողբերգությունը և կյանքը շարունակելու հայ մարդու հաստատակամությունը: Նույն թեմատիկայով գեղարվեստական արժեքավոր գործեր ստեղծեցին Խաչիկ Դաշտենցը, Գուրգեն Մահարին, Մուշեղ Գալշոյանը, Ստեփան Ալաջաջյանը և ուրիշներ:



Հրանտ Մաթևոսյան
(1935-2002)

Հասարակության լայն ընդունելությանն արժանացան տաղանդավոր արձակագիր Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունները, ինչպես նաև Վարդգես Պետրոսյանի և ուրիշների երկերը:

Առնո Բաբաջանյան
(1921-1983)

Նկատելի հաջողություններ ձեռք բերվեցին նաև հայ թատերագրության (Պերճ Զեյթունցյան) մեջ և արվեստի մյուս ճյուղերում:

Արվեստը: Հետպատերազմյան ժամանակաշրջանը դարձավ արվեստի տարբեր ճյուղերի՝ երաժշտության, թատրոնի ու կինոյի, կերպարվեստի, ճարտարապետության զարգացման պատմական կարևոր փուլ:

Հայ երաժշտական արվեստը նշանավորվեց ժանրերի բազմազանությամբ: Հայ երգահանների համաստեղության մեջ առաջատար դեր էր կատարում համաշխարհային ճանաչման արժանացած Արամ Խաչատրյանը: Նրա «Սպարտակ» բալետը, բեմադրվելով աշխարհի շատ երկրներում, մեծ համբավ բերեց նրան:

Ալեքսանդր Հարությունյան
(1920-2012)

Երաժշտության տարբեր ժանրերում լավագույն գործեր ստեղծեցին երգահաններ Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Էդվարդ Միրզոյանը, Էդգար Հովհաննիսյանը, Ավետ Տերտերյանը, Տիգրան Մանսուրյանը և ուրիշներ:

Հայ դասական և ժողովրդական երաժշտությունը լայն հասարակայնությանը հասկանալի ու հոգեհարազատ դարձնելուն նպաստեցին կատարողական լավագույն կոլեկտիվները: Երաժշտական-ազգագրական մի շարք խմբեր մեծ աշխատանք էին տանում պատմական Հայաստանի տարբեր շրջանների ինքնատիպ

ժողովրդական պարերի ու երգերի վերականգնման և անհետացումից փրկելու ուղղությամբ:

Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս լայն ճանաչման արժանացավ երգչուհիներ Գոհար Գասպարյանի, Զարուհի Դոլուխանյանի, դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանի, դիրիժորներ Միքայել Թավրիզյանի, Օհան Դուրյանի, ջութակահարներ Ռուբեն Ահարոնյանի, Ժան Տեր-Մերկերյանի և այլ կատարողների վարպետությունը:

Հետպատերազմյան տասնամյակները դարձան հայ թատերական արվեստի և կինոարվեստի վերելքի ժամանակաշրջան: Թատերական արվեստում մեծ է Վարդան Աճեմյանի ծառայությունը: 1963թ. Երևանում Հրաչյա Ղափլանյանի ջանքերով հիմնվեց դրամատիկական նոր թատրոն: Հետագայում բացվեցին երիտասարդական, կամերային, մնջախաղի թատրոնները: Ճանաչված դերասաններից շատերը՝ Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Ավետ Ավետիսյանը, Դավիթ Մալյանը, Բաբկեն Ներսիսյանն ու Արուս Ասրյանը, այս փուլում ստեղծեցին դերասանական կենսագրության թերևս ամենավառ կերպարները:

Գոհար Գասպարյան
(1914-2007)

Հանդիսատեսի բարձր գնահատականին արժանացան երիտասարդ դերասաններ Մետաքսյա Սիմոնյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Միեր (Ֆրունզիկ) Մկրտչյանը, Սոս Սարգսյանը, Խորեն Աբրահամյանը և ուրիշներ:

Կինոարվեստի զարգացումը սկսվեց 1960-ական թվականներից: Այն նշանավորվեց Ֆրունզե Դովլաթյանի «Բարև, ես եմ», «Երկունք», Հենրիկ Մալյանի «Հայրիկ», «Նահապետ», «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», Ներսես Հովհաննիսյանի «Հարսնացուն հյուսիսից» գեղարվեստական կինոնկարներով: Հայ կինոարվեստում նշանավոր երևույթ էր մեծատաղանդ ռեժիսոր Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» կինոնկարը, որը նվիրված է հայ մեծ բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովային:

Ֆրունզիկ Մկրտչյան
(1930-1993)



Խորեն Աբրահամյան
(1930-2004)



Սերգեյ Փարաջանով
(1924-1990)

Այս շրջանում մեծ ներշնչանքով գործում էր հայ գեղանկարչության նահապետ Մարտիրոս Սարյանը: Անվանի վարպետի ստեղծագործությունը վիթխարի ազդեցություն ունեցավ հայ գեղանկարչության զարգացման վրա: Մնայուն գործեր ստեղծեցին նկարիչներ Հովհաննես Ջարդարյանը, Գրիգոր Խանջյանը, Էդուարդ Իսաբեկյանը, հայրենադարձ նկարիչներ Հարություն Կալենցը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ: Լայն ճանաչման արժանացավ կյանքից վաղաժամ հեռացած Մինաս Ավետիսյանը: Նրա կտավները՝ «Ջաջուռ», «Ծնողներս», կյանքը բացահայտում են հավերժական արժեքներով, խոսում են հազվագյուտ տոկունության և գեղեցկության մասին:



Մինաս Ավետիսյան (1928-1975)

Քանդակագործության մեջ իրենց ստեղծագործություններով աչքի ընկան Ղուկաս Չուբարյանը, Սարգիս Բաղդասարյանը, Նիկողայոս Նիկողոսյանը, Լևոն Թոքմաջյանը և ուրիշներ: Հայ արվեստի նվաճումներից են Սասունցի Դավթի (քանդ.՝ Երվանդ Քոչար), Ալեքսանդր Թամանյանի (քանդ.՝ Արտաշես Հովսեփյան), Մարտիրոս Սարյանի (քանդ.՝ Լևոն Թոքմաջյան) արձանները Երևանում, Դավիթ Բեկի հուշարձանը (քանդ.՝ Ս. Բաղդասարյան) Կապանում և այլն:

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը

Հայ կերպարվեստի լավագույն ստեղծագործությունները բազմիցս ներկայացվել են միջազգային ցուցահանդեսներում և արժանացել բարձր գնահատանքի:

Այս շրջանում հայ ճարտարապետությունը լուրջ առաջընթաց ապրեց: Կառուցապատվեցին քաղաքները, կառուցվեցին մշակույթի, արտադրական բազմաթիվ շենքեր, հուշահամալիրներ և այլն: Ճարտարապետության մեջ որոշակի էր հայկական ճարտարապետության ավանդույթներից ստեղծագործաբար օգտվելու ձգտումը:



Ռաֆայել Իսրայելյան (1908-1973)

Համընդհանուր ճանաչման արժանացան ճարտարապետական այնպիսի կոթողներ, ինչպիսին են Սարդարապատի հերոսամարտի համալիրը (ճարտարապետ՝ Ռաֆայել Իսրայելյան), Հայոց մեծ եղեռնի հուշահամալիրը (ճարտ.՝ Արթուր Թարխանյան, Սաշուր Քալաշյան), Երևանի մարզահամերգային համալիրը, «Զվարթնոց» օդանավակայանը, ՀՀ ԳԱԱ նախագահության շենքը (ճարտ.՝ Սամվել Սաֆարյան), «Հրազդան» մարզադաշտը, «Ռոսիա» կինոթատրոնը, մետրո-

պոլիտենի մի քանի կայարան, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը և այլն:

Այսպիսով՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, չնայած գաղափարական որոշ կաշկանդումներին, հայ մշակույթը մեծ նվաճումներ ունեցավ:

Սփյուռքահայ գրականությունը և արվեստը: Սփյուռքի հետպատերազմյան տարիներին սկիզբ առած զարգացումը վերաբերում է նաև սփյուռքահայերի մշակութային գործունեությանը, որի հիմնախնդիրն է՝ ազգային կեցության և էության պահպանումը: Հենց այդ նպատակն էին հետապնդում ոչ միայն հայկական դպրոցները և մամուլը, այլև բազմաթիվ մշակութային միությունները, նրանց ստեղծած տարատեսակ երգեցիկ, պարային, թատերական և այլ խմբերը: Կարևորն այն է, որ նման՝ հիմնականում երեխաներից և երիտասարդներից բաղկացած գեղարվեստական խմբերը սկսեցին գործել գրեթե բոլոր հայկական համայնքներում:



Մուշեղ Իշխան (1914-1990)

Ստվար և դեռևս հայախոս համայնքները, նրանց բնորոշ ազգային կենսաձև ու հոգևոր մթնոլորտը հնարավոր դարձրին նաև արևմտահայ գրականության ավանդույթների պահպանումն ու զարգացումը: Արևելքի երկրներում դրա վկայությունն են, օրինակ, Մուշեղ Իշխանի, Անդրանիկ Ծառուկյանի, Վահե Օշականի, Վահե Վահյանի երկերը: Եվրոպայում՝ Փարիզում, որը երկար տարիներ Սփյուռքի մշակութային կենտրոնն էր, ստեղծագործում էին անվանի գրողներ Արշակ Չոպանյանը, Շահան Շահնուրը, Համաստեղը և ուրիշներ:

Սակայն Արևմուտքի հայ համայնքներում տիրող մշակութային մթնոլորտը չէր նպաստում հայալեզու գրականության զարգացմանը, հակառակը՝ այն մեծապես խթանել է հայազգի օտարագիր գրողների ի հայտ գալը: Իրենց երկրների գրականության ճանաչված դեմքերից էին Վիլյամ Սարոյանը (ԱՄՆ), Անրի Թրուայան և Արթյուր Ադամովը (Ֆրանսիա), Մայքլ Արլենը (Անգլիա) և ուրիշներ: Նշանակալից է հայազգի արվեստագետներ՝ նկարիչներ Արշիլ Գորկու, Գառզուի, Ժանսեմի, քանդակագործ Ռուբեն Նաքյանի, կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի, կինոբեմադրիչներ Ռուբեն Մամուլյանի, ով 1935թ. Հոլիվուդում նկարահանեց կինոյի պատմության մեջ առաջին լիամետրաժ գունավոր ֆիլմը՝ «Բեքքի Շարպ», Անրի Վեռնոյի («Մայրիկ»), Ատոմ Էգոյանի, երգիչներ ու դերասաններ Շառլ Ազնավուրի, որը հռչակվել է «20-րդ դարի

Արշիլ Գորկու կտավներից

ֆրանսիական շանսոնի արքա», Շերի (Շերիլին Սարգսյան) և շատ ուրիշների ավանդը տարբեր երկրների մշակույթի զարգացման գործում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է պատերազմի թեմայով ձեր ամենասիրած ստեղծագործությունը: Նշեք հետպատերազմյան շրջանի խորհրդահայ արձակի և պոեզիայի նշանավոր ներկայացուցիչներին: Ի՞նչ գիտեք նրանց մասին: Նշեք սփյուռքահայ անվանի գրողներին: Ձեր կարծիքով՝ ո՞րն է նրանց ստեղծագործությունների հիմնական թեման և ինչո՞ւ:
2. Արվեստի ո՞ր ճյուղն է ձեզ ավելի հոգեհարազատ: Նշեք հետպատերազմյան շրջանի նշանավոր երգահաններին Հայաստանում և Սփյուռքում: Ի՞նչ գիտեք նրանց մասին: Ինչո՞վ նշանավորվեց թատրոնի և կինոյի բուռն վերելքը Հայաստանում 1945-80-ական թթ.: Ովքե՞ր են հայ բեմի ձեր սիրած դերասանները: Թվարկեք հայկական լավագույն կինոնկարներից մի քանիսը: Ո՞վ է հայ գեղանկարչության նահապետը: Ի՞նչ գիտեք նրա մասին: Նշեք սփյուռքահայ նշանավոր արվեստագետներին, ո՞ւմ ստեղծագործություններն են ձեզ ավելի մոտ ու հարազատ և ինչո՞ւ: Թվարկեք հետպատերազմյան տասնամյակների նշանավոր ճարտարապետներին և ճարտարապետական կոթողները:
3. Լրացրեք «Գրականություն և արվեստ» աղյուսակը:

Մշակույթ	Հայաստան		Սփյուռք	
Մշակույթի ճյուղեր	Գործիչները	Ստեղծագործությունները	Գործիչները	Ստեղծագործությունները
Գրականություն				
Երաժշտություն				
Թատրոն և կինոարվեստ				
Կերպարվեստ				
Ճարտարապետություն				

15-րդ թեմայի ամփոփում

1. Հետպատերազմյան տասնամյակները նշանավորվեցին հայ ժողովրդի մշակույթի վերելքով, որը կապված էր անհատի պաշտամունքը դատապարտելու հետ:

2. Մեծ զարգացում ապրեց կրթությունը: Ավելացավ դպրոցների քանակը: 1980թ. միջնակարգ դպրոցների թիվը հասավ 943-ի: Մեծ ուշադրություն դարձվեց միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությանը: Հայաստանում գործում էր 14 բուհ, որոնք պատրաստում էին կադրեր 100-ից ավելի մասնագիտությունների գծով:
3. Գիտության զարգացման նոր փուլը սկսվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրմամբ (1943թ.), որի 1-ին պրեզիդենտն էր Հ. Օրբելին: Նշանակալի հաջողություններ ձեռք բերվեցին մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և այլ գիտությունների բնագավառներում: Ակնառու նվաճումների հասավ աստղագիտությունը, որի զարգացումը մեծապես կապված էր աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի անվան հետ: Մեծ էին նվաճումները նաև հայագիտության ասպարեզում:
4. Գրականության մեջ շարունակեցին ստեղծագործել ավագ սերնդի գրողներ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Հր. Քոչարը և ուրիշներ: Ստեղծագործական նոր բարձունքներ նվաճեցին հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներ Հ. Շիրազը և Պ. Սևակը: Հայ պոեզիան իրենց ստեղծագործություններով հարստացրին Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Հ. Սահյանը և այլք: Այս շրջանում զարգացման մի շարք փուլեր անցավ սփյուռքահայ գրականությունը, որին բնորոշ էին հայրենի հողի կարոտի և ազգաձուլման վտանգի հաղթահարման թեմաները: Արևմտահայ հին սերնդի ներկայացուցիչների կողքին ստեղծագործում էին Վահե Վահյանը, Վահե Օշականը, Անդրանիկ Ծառուկյանը, Մուշեղ Իշխանը, Անրի Թրուայան և ուրիշներ: Օտար լեզուներով ստեղծագործող ամենանշանավոր հայազգի գրողներից էր Վիլյամ Սարոյանը, որն իր ստեղծագործություններով համաշխարհային ճանաչում է ձեռք բերել:
5. Հետպատերազմյան տասնամյակներում նոր հաջողություններ ձեռք բերվեցին երաժշտության, թատրոնի, կինոյի, կերպարվեստի և ճարտարապետության բնագավառներում: Շոնդալից հաջողություն ունեցավ Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը: Թատերական արվեստի վերելքը կապվում էր նշանավոր դերասաններ Մ. Սիմոնյանի, Վ. Վարդերեսյանի, Ֆ. Մկրտչյանի, Խ. Աբրահամյանի, Ս. Սարգսյանի և այլ անունների հետ: Հայ կինոարվեստում նշանակալի երևույթ էր Ս. Փարաջանովի «Նռան գույնը» նկարը: Մեծ ներշնչանքով էր շարունակում ստեղծագործել հայ գեղանկարչության նահապետը՝ Մ. Սարյանը:

   Բուռն վերելք ապրեց սփյուռքահայ արվեստը: Սփյուռքահայ կոմպոզիտորական դպրոցի վառ անհատականություններից է Ալան Հովհաննեսը (ԱՄՆ): Աշխարհահռչակ երգիչ է Շառլ Ազնավուրը՝ «20-րդ դարի ֆրանսիական շանսոնի արքան»: Նշանակալից է հայազգի արվեստագետների (Արշիլ Գորկի, Գառզու, Ռ. Մամուլյան, Ա. Վեռնոյ, Ա. Էգոյան և ուրիշներ) ներդրումը տարբեր երկրների մշակույթի զարգացման գործում:

ԲԱԺԻՆ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՑԱԽԻ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԹԵՄԱ 16 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. *Անկախ Հայաստանի Հանրապետության կերտումը*

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Հայաստանի անկախության հռչակագրի դրույթներից ելնելով՝ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը 1991թ. մարտի 1-ին որոշել էր նույն թվականի սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու նպատակով, հետևյալ հարցադրումով. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս»: Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 2 մլն 43 հազար մարդ (կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը), «այո» ասաց անկախությանը: Համաժողովրդական հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991թ. սեպտեմբերի 23-ին հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն: Այսպիսով՝ Հայաստանը միակ նախկին խորհրդային հանրապետությունն էր, որն անկախացման հանրաքվե անցկացրեց ԽՍՀՄ սահմանադրությանը և «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» 1990թ. ապրիլի 3-ի օրենքին լիակատար համապատասխան: Դրանով նախատեսվում էր միութենական հանրապետության կողմից ԽՍՀՄ-ից դուրս գալու կարգը, ըստ որի անկախացման հարցով հանրաքվեի մասին որոշումն ընդունելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո միայն հնարավոր է իրականացնել հանրաքվեն, որի ընթացքը գտնվելու էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերահսկողության տակ:

Սեպտեմբերի 21-ը, որպես անկախության տոնական օր, Հայաստանում նշվում է ամեն տարի:

Այսպիսով՝ իրականացավ անկախություն ձեռք բերելու հայ ժողովրդի երազանքը: Օրակարգային խնդիր էր իշխանության նոր մարմինների ձևավորումը: Պետական կարգն ամրապնդելու համար կարևորվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

1991թ. օգոստոսի 1-ին «ՀՀ նախագահի մասին» օրենքի ընդունումից հետո, նույն թվականի հոկտեմբերի 16-ին, Հայաստանում առաջին անգամ անցկաց-

վեցին նախագահական համաժողովրդական ընտրություններ: Ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Լևոն Տեր-Պետրոսյան (1945)

Անկախության ուղին բռնած հանրապետությանը և նրա նորընտիր ղեկավարությանը ծանր փորձություններ էին սպասում:

Սկսվեց ՀՀ միջազգային ճանաչման գործընթացը, նախապատրաստվեց ՀՀ սահմանադրությունը:

ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ ստեղծումը: 1991թ. գարնանը ԽՍՀՄ-ը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը Միությունը փրկելու նպատակով որոշեց մարտի 17-ին անցկացնել հանրաքվե բարեփոխված ԽՍՀՄ-ի պահպանման համար: Հանրաքվեի մասնակիցների մեծ մասը (9 հանրապետությունների բնակչության) կողմ քվեարկեց նորացված ԽՍՀՄ-ի պահպանման օգտին՝ դիտելով այն որպես ինքնավար հանրապետությունների միություն (ֆեդերացիա): Հանրաքվեին չմասնակցեցին և այն մերժեցին մերձբալթյան երեք հանրապետությունները, Վրաստանը, Հայաստանը և Մոլդովան: Մ. Գորբաչովը 1991թ. ապրիլին բանակցային գործընթաց սկսեց խորհրդային ինքնիշխան հանրապետությունների միություն ստեղծելու համար: Պայմանագրի ստորագրումը նշանակվեց օգոստոսի 20-ին: Սակայն ԽՍՀՄ մի խումբ պահպանողական ղեկավարներ 1991թ. օգոստոսի 19-ին կազմակերպեցին խռովություն և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Երկրի կառավարման համար ստեղծվեց Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ): Մ. Գորբաչովը մեկուսացվեց: Օգոստոսի 21-ին Մոսկվայում ժողովրդավարական ուժերի վճռականության շնորհիվ «հակասահմանադրական հեղաշրջման» փորձը ձախողվեց, խռովարարները ձերբակալվեցին: Արագացավ ԽՍՀՄ փլուզման գործընթացը:

1991թ. դեկտեմբերի 8-ին Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները (Բորիս Ելցինը, Լեոնիդ Կրավչուկը և Ստանիսլավ Շուշկևիչը) ստորագրեցին ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու համաձայնագիր: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին: Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությունը, որը ողջունեց նաև ԱՊՀ-ի ստեղծումը՝ հայտնելով նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Աթայում 11 ինքնիշխան պետություններ (նախկին խորհրդային հանրապետություններ), բացի Վրաստանից (որը մի որոշ ժամանակ անց ստորագրեց) և մերձբալթյան

երեք հանրապետություններից, ստորագրեցին համաձայնագիր ԱՊՀ ստեղծման մասին: Դրանով ԽՍՀՄ-ը դադարեց գոյություն ունենալուց: Մ. Գորբաչովը դեկտեմբերի 25-ին վայր դրեց այլևս գոյություն չունեցող ԽՍՀՄ նախագահի լիազորությունները:

ՀՀ զինանշանը

ՀՀ սահմանադրության ընդունումը: Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ միջազգային ճանաչում: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը:

Հանրապետության պետական-քաղաքական կյանքի ամենակարևոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունումը: Այդ նպատակով ստեղծվել էր ՀՀ Գերագույն խորհրդի Սահմանադրական հանձնաժողով: ՀՀ Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո սահմանադրության նախագիծը դրվեց համաժողովրդական հանրաքվեի 1995թ. հուլիսի 5-ին՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Հիմնական օրենքի օգտին քվեարկեց ընտրողների 68,4%-ը: Այսպիսով՝ ՀՀ սահմանադրությունն ընդունվեց 1995թ. հուլիսի 5-ին, համաժողովրդական հանրաքվեով: ՀՀ սահմանադրությունը կարևոր երևույթ էր, որը դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետության անցնելու իրավական հիմքերը, իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, սահմանեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի երրորդ հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը: Դեռևս 1990թ. օգոստոսի 24-ին հանրապետության պետական դրոշ ճանաչվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ և ծիրանագույն, որը Առաջին հանրապետության դրոշն էր: ՀՀ Գերագույն խորհուրդը 1992թ. ապրիլի 12-ին ընդունեց ՀՀ զինանշանի մասին օրենքը: ՀՀ պետական զինանշան դարձավ Առաջին հանրապետության զինանշանը՝ մասնակի փոփոխություններով: Որպես օրհներգ ընդունվեց նույնպես Առաջին հանրապետության պետական հիմնը՝ «Մեր հայրենիք» հայրենասիրական երգը:

Սկսեցին ձևավորվել պետահիրավական նոր կառույցներ: Սահմանադրությունը նախատեսում էր հանրապետության նախագահական համակարգ: Պետության ղեկավարը հանրապետության նախագահն էր, որն ընտրվում էր հինգ տարի ժամկետով, ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: Նախագահն ուներ լայն լիազորություններ, օրինակ՝ նշանակում էր վարչապետին և, վերջինիս առաջարկությամբ, կառավարության մյուս անդամներին: ՀՀ գործադիր իշխանությունն իրականացվում էր ՀՀ կառավարության կողմից, որը կազմված էր վարչապետից ու նախարարներից: Ժամանակի ընթացքում

կառավարությունը բազմաթիվ փոփոխությունների ենթարկվեց: Բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, սահմանադրության ընդունումից հետո վերանվանվեց Ազգային ժողով:

ՀՀ տարածքային կառավարման կառուցվածքի բարելավմանն էին ծառայում 1995թ. դեկտեմբերին կատարված վարչատարածքային փոփոխությունները: Հանրապետության շուրջ չորս տասնյակի հասնող շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 10 մարզեր՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Տավուշի: Դրանց գումարվեց մարզի կարգավիճակ ստացած քաղաքամայր Երևանը: Մարզերը բաժանվեցին համայնքների:

Կազմավորվեց նոր դատական համակարգ, որի առաջին փուլն ավարտվեց 1999 թվականին: Այդ ուղղությամբ կարևոր քայլեր էին առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ, ինչպես նաև սահմանադրական, վարչական դատարանների հիմնումը, դատախազության համակարգի վերափոխմանն ուղղված միջոցառումները:

Հանրապետությունում կատարված հետագա տեղաշարժերը առաջացրին սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Դրանցից էին ՀՀ նախագահին ընձեռված լայն լիազորությունները սահմանափակելը, ՀՀ Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և այլն: 2005թ. նոյեմբերի 27-ի համաժողովրդական հանրաքվեով հաստատվեց ՀՀ սահմանադրության փոփոխված տարբերակը, որով նախագահականից անցում կատարվեց կիսանախագահական կառավարման ձևին:

ՀՀ Ազգային ժողովի շենքը

Փոխվեց նաև Երևանի կարգավիճակը՝ մարզից դառնալով համայնք: Երևանն ունեցավ սեփական բյուջե, իսկ Երևանի քաղաքապետի պաշտոնը դարձավ ընտրովի: Սահմանադրական երկրորդ փոփոխությունները հաստատվեցին 2015թ. դեկտեմբերի 6-ին՝ սահմանադրական համաժողովրդական հանրաքվեով: Հարկ է նշել, որ ինչպես այս, այնպես էլ նախորդ հանրաքվեների արդյունքները կեղծվել են: Նորացված սահմանադրությամբ գործադիր իշխանությունն ամբողջությամբ պատկանում է կառավարությանը, որտեղ վարչապետն ունի բավական ուժեղ դիրք: Գործադիր իշխանությունը մշտապես գտնվելու է խորհրդարանական վերահսկողության ներքո և պատասխանատու է լինելու խորհրդարանի առջև: Այսինքն՝ կառավարման կիսանախագահական ձևը փոխարինվեց խորհրդարանականով:

Հայոց ազգային բանակը: Առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անկախության պահպանման հարցը, որի երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը: 1989թ. ապրիլին կամավորներից ստեղծվել

էր Հայոց ազգային բանակ (ՀԱԲ) ռազմական կազմակերպությունը, որը տարբեր վայրերում հիմնել էր իր կառույցները: 1990թ. օգոստոսի 29-ին, ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, ՀԱԲ-ը լուծարվեց: Անկախության հռչակագրով

Վազգեն Սարգսյան
(1959-1999)

իրավական և գործնական ուղիներ էին մատնանշվում ազգային բանակի ստեղծման համար: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ), որի հիմքի վրա հետագայում ձևավորվեց պաշտպանության նախարարությունը: ՀՀ նախագահի 1991թ. դեկտեմբերի 5-ի հրամանագրով պաշտպանության առաջին նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը, ով մեծ դեր խաղաց մարտունակ և կարգապահ բանակ ստեղծելու գործում: 1992 թվականի հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը: Հենց այս փաստաթուղթն էլ ազդարարեց ազգային բանակի ստեղծման սկիզբը: Այդ օրն էլ հանրապետությունում տոնվում է որպես հայոց ազգային բանակի ծննդյան օր: Պատերազմի բովում իրարից անկախ գործող շուրջ 80 երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով 1992թ. ստեղծվեց հայոց ազգային բանակը: Հայոց բանակի ակունքներում կանգնած էին նաև դեռևս 1990 թվականի սեպտեմբերին կազմավորված Երևանի հատուկ գունդը և Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի ու Մեղրու ինքնապաշտպանական վաշտերը:

Գուրգեն Դալիբալթայան
(ՀՀ ռազմական նշանավոր գործիչ, գեներալ-գնդապետ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ)
(1926-2015)

1992թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: Նոր կազմավորված հայոց ազգային բանակի զորամասային անձնակազմը 1992թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում տվեց առաջին զինվորական երդումը:

Հայկական զինված ուժերի կանոնավոր զորամիավորումները ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի հիմքի վրա: Աստիճանաբար աճեց բանակի թվաքանակը: Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակում: Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում և հանդիսացավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Այն այսօր տարածաշրջանի ամենամարտունակ և կարգապահ բանակներից է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունից

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Հոդված 10. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Հոդված 15.

1. Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը:
2. Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

Հոդված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

Հոդված 27. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք:

Հոդված 38. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Հոդված 41. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք:

Հոդված 60. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ի՞նչ նպատակով Հայաստանում անցկացվեց հանրաքվե: Նշե՛ք հանրաքվեի արդյունքները: Հայաստանը ե՞րբ հռչակվեց անկախ պետություն: Ի՞նչ է ձեզ համար անկախ պետականությունը: Ե՞րբ տեղի ունեցան նախագահական ընտրությունները, ո՞վ ընտրվեց հանրապետության նախագահ:
2. Ե՞րբ սկսվեց ԽՍՀՄ փլուզումը և ի՞նչ ընթացք ունեցավ: Ի՞նչ եք կարծում, օրինաչա՞փ էր արդյոք ԽՍՀՄ փլուզումը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ հետևանքներ կարող էր ունենալ օգոստոսյան խռովությունը, եթե չճնշվեր:
3. Ե՞րբ ընդունվեց Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը: Ինչպիսի՞ պետություն է Հայաստանն ըստ սահմանադրության: Ի՞նչ սահմանադրական փոփոխություններ կատարվեցին և ինչո՞ւ: Կառավարման ո՞ր ձևն եք դուք ընդունելի համարում: Որո՞նք էին Հայաստանի 3-րդ հանրապետության խորհրդանիշները: Փորձե՛ք կազմել սահմանադրական փոփոխությունները ներկայացնող աղյուսակ:
4. Ձեր կարծիքով՝ ո՞րն է բանակի դերը նորանկախ պետության համար: Ինչպիսի՞ն կուզեիք տեսնել հայ զինվորին:
5. Լրացրե՛ք «Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը» աղյուսակը:

Տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Իրադարձությունը

ԹԵՄԱ 17 ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանը տնտեսական վերափոխումների ճանապարհին

Տնտեսական քաղաքականությունը: ԽՍՀՄ փլուզման և շրջափակման հետևանքով խզվեցին միջհանրապետական տնտեսական ավանդական կապերը, դադարեց հումքի մատակարարումը: Հայաստանի տնտեսությունը հայտնվեց ճգնաժամային վիճակում: Մեծ տերության մի մասը կազմող և նրա միջոցներից օգտվող հանրապետությունից Հայաստանը դարձավ սեփական վառելիքաէներգետիկ պաշարներից զուրկ, հանքահումքային սուղ հնարավորություններ ու փոքր տարածք ունեցող անկախ երկիր: Սկզբնական շրջանում, շրջափակման պայմաններում, կարևորագույն խնդիրը բնակչության կենսական նվազագույն պայմանների ապահովումն էր: Խնդրի լուծումն ավելի էր դժվարացնում նախկին միջհանրապետական տնտեսական կապերի խզումը: Եթե ավելացնենք հանրապետության շրջափակումը, պատերազմական իրավիճակը, երկրաշարժի հետևանքները, փախստականների օրհասական դրությունն ու էներգետիկ ճգնաժամը, ապա հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի ծանր պատկերը կամբողջանա:

Այս ծանր պայմաններից դուրս գալու նպատակով ծրագրվեց, նոր պահանջներին համապատասխան, անցում կատարել խորհրդային պլանային տնտեսությունից դեպի ազատ շուկայական հարաբերություններ: Տնտեսավարման ազատական համակարգի ներդրումը Հայաստանում հիմնականում ծավալվեց 1990-1995թթ.:

1990–1991թթ. Հայաստանի Գերագույն խորհուրդը մի շարք որոշումներ ընդունեց, որոնք ուղղված էին տնտեսական հարաբերությունները կարգավորելուն: Կարևոր նշանակություն ուներ խորհրդարանի 1990թ. սեպտեմբերի 10-ին ընդունած օրենքը պետական սեփականության մասին: Դրա համաձայն՝ հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական հաստատությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի Հանրապետության սեփականություն:

Գյուղատնտեսությունը և հողի սեփականաշնորհումը: Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ 1991թ., կարճ ժամանակամիջոցում, սեփականաշնորհեց հողը: Հանրապետության խորհրդարանը 1991թ. հունվարի 29-ին ընդունեց հողի մասնավոր սեփականության մասին օրենքը: Ընդունվեց նաև ՀՀ հողային նոր օրենսգիրքը: Ընդունված օրենքի համաձայն՝ 1991–1992թթ. լուծարվեցին հանրապետությունում գործող 865 կոլեկտիվ ու պետական տնտեսությունները: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ: Հողի սեփականատեր

դարձան գրեթե բոլոր գյուղացիները, որոնք նման ցանկություն էին հայտնել: Հողի սեփականաշնորհումը, որը կատարվեց տնտեսական ճգնաժամի պայմաններում, գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և մեղմեց սովի վտանգը: Պետության ագրարային քաղաքականության իրականացման շնորհիվ հնարավոր եղավ էապես ավելացնել պարենամթերքի արտահանման ծավալները: Որոշ չափով բարձրացավ գյուղացիության նյութական շահագրգռվածությունը:

Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրվեցին նաև անարդարություններ: Եղան դեպքեր, երբ համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք մասնակցություն չէին ունեցել դրա ստեղծմանը: Որոշ չարաշահումներ եղան կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների անասնագլխաքանակը բաշխելիս:

Կատարվեցին նաև որոշ շինարարական աշխատանքներ: 1995թ. շահագործման հանձնվեցին Հերհերի ջրամբարը և Երևանի ջրանցքը, Արաքսի կամուրջը: Վերջինիս շահագործումը հնարավորություն տվեց Հայաստանի Հանրապետությանը դուրս գալու արտաքին աշխարհի հետ կապի մեկուսացումից, ամրապնդելու առևտրատնտեսական կապերը հարավային հարևան Իրանի հետ: Դա չափազանց կարևոր հանգամանք էր, եթե հաշվի առնենք, որ հյուսիսում մեր հարևան Վրաստանը քաղաքացիական պատերազմի մեջ էր, և տրանսպորտի անխափան գործունեության համար պայմաններ չկային: 1998թ. ավարտվեց Գորիս-Շուշի մայրուղու շինարարությունը, որը ՀՀ-ն կապեց Արցախի հետ:

2008թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի վրա: 2011թ. մարտին գյուղատնտեսության ոլորտը ՀՀ գերակա ճյուղ հայտարարվեց: Մշակվեց գյուղատնտեսության զարգացման նոր ծրագիր:

Արդյունաբերությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը զրկվեց դրսից ներմուծվող էժան հումքից ու էներգիայից, հզոր արդյունաբերության մի շարք ճյուղեր դադարեցին գործելուց:

1992թ. օգոստոսին ընդունվեց օրենք արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման մասին: Այդ օրենքի հիման վրա 1992-1993թթ. սկսվեց փոքր, իսկ 1995 թվականից միջին ու խոշոր ձեռնարկությունների զանգվածային սեփականաշնորհումը, որն ավելի մեծ ծավալով շարունակվեց հետագա տարիներին:

Այս բնագավառում ևս թույլ տրվեցին սխալներ: Սեփականաշնորհվեցին ու ցածր գներով առանձին անհատների վաճառվեցին արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց մեծագույն մասը դադարեց աշխատելուց: Հազարավոր բանվորներ և մասնագետներ դարձան գործազուրկ:

Արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհելիս բավարար չափով հոգ չտարվեց դրանց հետագա գործարկումն ապահովելու համար:

Իրավիճակը բարելավելու նպատակով 1996թ. ապրիլին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության արդյունաբերողների և ձեռնարկատերերի հիմնադիր համագումարը, որը ստեղծեց արդյունաբերողների միություն:

Արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության դժվարին վիճակի հիմնական պատճառներից մեկը էներգետիկ ճգնաժամն էր: Սա հետևանք էր Հայկական ատոմակայանի փակման, շրջափակման հետևանքով մազութի ու բնական գազի մատակարարման ընդհատումների: 1992-1993թթ. կենցաղային կարիքների համար օրական միայն 2-3 ժամ էր էլեկտրաէներգիա տրվում: Այդ տարիները մեծ հաղթանակների հետ միասին բնակչության հիշողության մեջ մնացել են որպես ցրտի ու մթի տարիներ:

Բնակարանների ջեռուցման համար բնակչությանը օգնության կարգով հատկացվում էր դիզելային վառելիք:

Այսպիսի պայմաններում անխուսափելի էին Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) վերագործարկումը (1996թ.) և Հրազդանի ջէկի 5-րդ բլոկի շահագործումը: Դրանք վերացրին էներգետիկ սովը և արդյունաբերության զարգացման հնարավորություն տվեցին:

Եթե 1994թ. երկրի համախառն ներքին արդյունքը մինչ անկախացումը եղած առավելագույն ցուցանիշին զիջում էր շուրջ 10 անգամ, ապա 1995թ. առաջին անգամ գրանցվեց աճ: Հաջորդ տարիներին աճի տեմպերը մեծացան: 1990-ական վերջերից հանրապետության տնտեսական կյանքում որոշակի դրական փոփոխություններ նկատվեցին:

1993թ. նոյեմբերին հանրապետության կառավարությունը շրջանառության մեջ դրեց հայկական ազգային դրամը: Դրանից հետո Հայաստանը հնարավորություն ստացավ ինքնուրույն տնօրինելու տնտեսական ամբողջ ոլորտը: Ազգային դրամի գործարկումը անկախ պետականության դրսևորման արտահայտությունն էր:

Անկախության երկրորդ տասնամյակում հիմնվեցին ավելի քան 2500 միջին և փոքր արդյունաբերական ձեռնարկություններ: Մեծ ուշադրություն դարձվեց ճանապարհային հաղորդակցության ուղիների կառուցմանն ու բարելավմանը, կապին ու տրանսպորտին, շինարարության և սպասարկման ոլորտներին: Շահագործման հանձնվեցին հանրային նշանակության բազ-

մաթիվ նորակառույց շենքեր: Հայրենական ու օտարերկրյա գործարարների ներդրումների շնորհիվ ստեղծվեցին բազմաթիվ նոր աշխատատեղեր:

Սակայն 2008թ. սեպտեմբերից սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը մեծ վնաս հասցրեց հանրապետության արդյունաբերությանը:

Հանրապետության տնտեսական կյանքը դեռևս ցանկալի հունով չէր ընթանում: Առկա էին սոցիալ-տնտեսական բազմաթիվ դժվարություններ և չլուծված խնդիրներ:

Հայաստանի տնտեսության մեջ առաջացած դժվարին իրավիճակը հանգեցնում էր այնպիսի բացասական երևույթի ծավալմանը, ինչպիսին արտագաղթն է: Այն գնալով ավելի մեծ ծավալներ ընդունեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հայաստանի տնտեսական ճգնաժամի պատճառները անկախացումից հետո: Ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս դա անդրադարձավ բնակչության սոցիալական վիճակի վրա:
2. Ե՞րբ ընդունվեցին ՀՀ հողի մասնավորեցման մասին օրենքը և հողային նոր օրենսգիրքը: Փորձե՛ք պարզել, թե ինչ սխալներ թույլ տրվեցին սեփականաշնորհման գործընթացում, ինչ հետևանքներ ունեցան դրանք:
3. Ե՞րբ ընդունվեց արդյունաբերական ձեռնարկությունների մասին օրենքը, ի՞նչ էր նախատեսվում դրանով: Կարո՞ղ ենք ասել, որ արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացում ևս թույլ տրվեցին սխալներ և բացթողումներ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հայաստանի տնտեսության մեջ առաջացած դժվարին իրավիճակը: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր ամենաբացասական հետևանքը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
5. Լրացրե՛ք «Հայաստանի տնտեսական դրությունը» աղյուսակը:

Տնտեսության ճյուղերը	Պետության միջոցառումները	Հաջողությունները	Դժվարությունները և բացթողումները	Չլուծված խնդիրները
Գյուղատնտեսություն				
Արդյունաբերություն				
Այլ ոլորտներ				

2. Հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը

Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Անկախության հռչակումից հետո ՀՀ-ում քայլեր ձեռնարկվեցին հասարակական կյանքի ժողովրդավարացման և նոր հարաբերությունների հաստատման ուղղությամբ: 1990թ. նոյեմբերի 5-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ: Միաժամանակ, ընդունած որոշումով արգելվեց հասարակության մեջ ցանկացած գաղափարական պարտադրանք:

1991թ. փետրվարին նույն խորհրդարանը ընդունեց օրենք «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին», որով հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ: Հայրենիքում ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար-ազատական և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունները:

Աստիճանաբար առաջացան նոր կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ: Դրանցից են Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ) և այլն: Ավելի ուշ հիմնվեցին Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Ժառանգություն», «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ), «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊԿ), «Լուսավոր Հայաստան» (ԼՀԿ) կուսակցությունները և այլն: Կուսակցությունների թիվը հետզհետե աճեց՝ հասնելով մի քանի տասնյակի:

1994թ. դեկտեմբերի վերջին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով ժամանակավորապես կասեցվեց ՀՅԴ-ի գործունեությունը, որը չկարողացավ մասնակցել առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Դա բացասաբար անդրադարձավ ժողովրդավարական վերափոխումների ընթացքի վրա և երկրում ստեղծեց քաղաքական լարված իրավիճակ:

Հասարակական-քաղաքական կյանքը հանրապետությունում աշխուժացավ 1995թ. հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Այդ ընտրությունները ընթացան նկատելի ընտրակեղծիքներով և ընտրախախտումներով: Դրանք «ավանդույթի ուժով» կրկնվեցին հետագա խորհրդարանական ու նախագահական ընտրությունների ժամանակ և բացասաբար անդրադարձան ՀՀ միջազգային հեղինակության վրա: 1995թ. խորհրդարանական ընտրություններում իշխող ՀՀՇ կուսակցությունը ստեղծեց «Հանրապետություն» միավորումը, որը, ըստ Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի (ԿԸՀ) հրապարակած պաշտոնական տվյալների, բացարձակ մեծամասնություն ստացավ խորհրդարանում:

Բնակչության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացմանը նպաստող կարևոր իրադարձություններից էին 1996թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունները: «Հանրապետություն» միավորումը առաջադրեց հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը, իսկ ընդդիմությունը, միավորելով հինգ քաղաքական կազմակերպությունների, առաջադրեց ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանի թեկնածությունը: Երկրորդ անգամ հանրապետության նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Դժգոհելով նախագահական ընտրությունների արդյունքներից, դրանք համարելով կեղծված, մարդիկ դուրս եկան հանրահավաքների, որոնց մասնակիցները սեպտեմբերի 25-ին անգամ ներխուժեցին խորհրդարանի շենք: Սկսվեցին ընդդիմության առաջնորդների և շարժման ակտիվիստների ձերբակալությունները, արգելվեցին հանրահավաքներն ու ցույցերը: Ներքաղաքական պայքարն ու Արցախյան հիմնախնդրի չլուծված մնալը և դրա վերաբերյալ իրարամերժ տեսակետների առկայությունը 1998թ. փետրվարին հանգեցրին Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին:

1998թ. մարտի արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ հիմնական պայքարը ընթանում էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանի և քաղաքական ասպարեզ վերադարձած, ՀԿԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի միջև:



Ռոբերտ Քոչարյան (1954)

Արտահերթ նախագահական ընտրություններում, ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական տվյալներով, ԼՂՀ նախկին նախագահ, ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը ընտրվեց նախագահ:

Ընտրություններից հետո վերականգնվեց ՀՅԴ-ի գործունեությունը: 1999թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրություններում, ըստ ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական տվյալների, հաղթեց «Միասնություն» դաշինքը: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Կ. Դեմիրճյանը, վարչապետ նշանակվեց Վ. Սարգսյանը:

Հանրապետության վիճակը ծանրացավ 1999թ. հոկտեմբերի 27-ի՝ նախադեպ չունեցող ահաբեկությամբ, երբ զինված 5 ահաբեկիչներ ներխուժեցին ԱԺ-ի նիստերի դահլիճ և կրակ բացեցին ներկաների վրա: Խորհրդարանում զոհվեցին պետական 8 գործիչներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահները, պատգամավորներ: Դա ծանր հարված էր հայոց պետականության կայացմանը, ժողովրդավարությանը, երկրի ներքին

և արտաքին, միջազգային հեղինակությանը: Այդուհանդերձ՝ հաջողվեց խուսափել անցանկալի զարգացումներից և կայունացնել ներքաղաքական վիճակը:

Ներքաղաքական զարգացումները XXI դ. սկզբին: Հայաստանի Հանրապետության նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին 2003թ. փետրվարի 19-ին: Մարտի 5-ին (երկրորդ փուլով) ընդդիմության թեկնածու Ստեփան Դեմիրճյանի հետ պայքարում Ռ. Քոչարյանը վերընտրվեց նախագահ: Ընդդիմությունը ընտրությունների արդյունքները համարելով կեղծված՝ բողոքարկեց Սահմանադրական դատարանում: Սահմանադրական դատարանը, մի կողմից, հաստատեց ընտրությունների արդյունքները, հայտարարելով, որ արձանագրված խախտումները չէին կարող ազդել քվեարկության ելքի վրա, և ուժի մեջ թողեց Ռ. Քոչարյանի ընտրվելու մասին ԿԸՀ-ի որոշումը, մյուս կողմից՝ առաջարկեց մեկ տարի անց նախագահի վստահության հանրաքվե անցկացնել, ընտրություններից հետո հասարակության մեջ խորացած հակասությունները հարթելու համար: Մեկ տարի անց, 2004թ. ապրիլի 9-12-ը Երևանում ընդդիմությունը բողոքի ցույցեր կազմակերպեց նախագահի հրաժարականի պահանջով: Իշխանությանը հաջողվեց ոստիկանության օգնությամբ ցրել ցույցը:

2003թ. թվականի մայիսի 25-ին տեղի ունեցած Ազգային ժողովի հերթական ընտրությունների արդյունքում, անկախության հռչակումից ի վեր առաջին անգամ կազմվեց քաղաքական կոալիցիոն կառավարություն (ՀՀԿ, ՕԵԿ և ՀՅԴ): Վարչապետ նշանակվեց 2000 թվականից այդ պաշտոնում գտնվող Անդրանիկ Մարգարյանը:

Քաղաքական կոալիցիա ստեղծելու մշակույթը շարունակվեց նաև Ազգային ժողովի չորրորդ գումարման՝ 2007թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններից հետո: Մեծամասնություն ստացած Հանրապետական կուսակցությունը դաշինք կազմեց «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) և ՀՅԴ կուսակցությունների հետ, ձևավորվեց նոր կառավարություն: Վարչապետ նշանակվեց Սերժ Սարգսյանը:

Հայաստանի Հանրապետության նախագահական հինգերորդ ընտրությունները տեղի ունեցան 2008 թվականի փետրվարի 19-ին: Հիմնական պայքարն ընթանում էր հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և վարչապետ Ս. Սարգսյանի միջև: ԿԸՀ-ի պաշտոնական տվյալներով՝ շուրջ 53% ձայնով վարչապետ Ս. Սարգսյանը ընտրվեց ՀՀ նախագահ: Չընդունելով ընտրության արդյունքները՝ ընդդիմությունը, Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, փետրվարի 21-ից 10 օր խաղաղ հանրահավաքներ կազմակերպեց: Մարտի 1-ին տեղի ունեցան բախումներ, կիրառվեց ուժ, որի արդյունքում զոհվեց 10 մարդ՝ 8 խաղաղ քաղաքացիներ և 2 ոստիկան, հարյուրավոր մարդիկ վիրավորվեցին, տասնյակ մարդիկ բանտարկվեցին: Սկսվեցին ընդդիմության առաջնորդների և ակտիվիստների հետապնդումներն ու

ձերբակալությունները: Երևանում մտցվեց 20-օրյա արտակարգ դրություն: Ծանր հարված հասցվեց Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավար պետության միջազգային վարկանիշին: Այս ողբերգական իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության նպատակով ՀՀ Ազգային ժողովում ստեղծվեցին ժամանակավոր հանձնաժողով և առանձին փաստահավաք խումբ: Կատարվեց մեծածավալ աշխատանք, սակայն հիմնական մեղավորները չհայտնաբերվեցին: Ներկայումս շարունակվում է մարտի 1-ի դեպքերի բացահայտման գործընթացը:

2008թ. մարտին Ազգային ժողովի չորս մեծ խմբակցությունները (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ և ՀՅԴ) քաղաքական համաձայնագիր ստորագրեցին և ձևավորեցին նոր կառավարություն: Ընդդիմությունը միավորվեց և հիմնեց Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) դաշինքը Լ. Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ:

Վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը:

ՀՅԴ-ն 2009թ. ապրիլի 22-ին դուրս եկավ կոալիցիայից և հայտարարեց, որ ծավալում է ընդդիմադիր գործունեություն:

2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրություններում, ըստ ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական տվյալների, հաղթանակ տարավ Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Կրկին վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը, որին 2014թ. ապրիլին փոխարինեց Հովիկ Աբրահամյանը: Վերջինս 2016թ. ապրիլին ՀՀ կառավարության նիստում հրաժարական տվեց, նրան փոխարինեց Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը:

Սերժ Սարգսյան (1954)

ՀՀ նախագահական վեցերորդ ընտրություններն անցկացվեցին 2013թ. փետրվարի 19-ին: Առավել շատ ձայներ ստացան ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը և «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը: ԿԸՀ-ի տվյալներով՝ ՀՀ նախագահ վերընտրվեց Սերժ Սարգսյանը: Նախագահական ընտրությունների արդյունքներից դժգոհ ընդդիմությունը մարտ–ապրիլ ամիսներին Ռաֆֆի Հովհաննիսյանի ղեկավարությամբ հանրահավաքներ էր կազմակերպում: Ընտրությունները համարելով կեղծված՝ պահանջում էին նոր ընտրություններ: Շուրջ երկու ամիս շարունակվող ցույցերը աստիճանաբար մարեցին՝ որևէ արդյունք չտալով:

2017թ. ապրիլի 2-ին տեղի ունեցան ՀՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի հերթական ընտրությունները: Ըստ ԿԸՀ-ի հրապարակած տվյալների՝ ձայների առավելությամբ խորհրդարան անցավ ՀՀԿ-ն, որին հաջորդեցին «Ծառուկյան» դաշինքը, ՀՅԴ-ն և ընդդիմադիր «Ելք» դաշինքը: Մայիսի 12-ին ՀՀԿ-ն և ՀՅԴ-ն ստորագրեցին քաղաքական կոալիցիայի հուշագիր:

Արմեն Սարգսյան
(1953)

Նիկոլ Փաշինյան
(1975)

Վարչապետ վերանշանակվեց Կարեն Կարապետյանը: 2018թ. փետրվարին լրանում էր ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի պաշտոնավարման ժամկետը: 2018թ. մարտի 2-ին Ազգային ժողովի կողմից 7 տարի ժամկետով ՀՀ նախագահ ընտրվեց նախկին վարչապետ Արմեն Սարգսյանը: ՀՀ նորացված սահմանադրության ընդունումից հետո առաջին անգամ երկրի նախագահն ընտրվեց օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կողմից:

«Թավշյա հեղափոխություն»: հասարակական-քաղաքական կյանքում կարևորագույն իրադարձություն էր 2018թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած «թավշյա», անարյուն հեղափոխությունը, որի արդյունքում տեղի ունեցավ խաղաղ իշխանափոխություն: Շարժման համար հիմք հանդիսացան տասնամյակների ընթացքում ժողովրդի մեջ կուտակված բազմաբնույթ դժգոհությունները, մարդկանց սոցիալ-տնտեսական վիճակը, գործազրկությունը, արտագաղթը, կոռուպցիոն երևույթները, արդարության պակասը, հովանավորչությունը: Այդ հանգամանքներից ելնելով՝ շարժման առաջնորդ, ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը կարողացավ փողոց հանել բազմահազար դժգոհ մարդկանց, այդ թվում՝ անկախության երիտասարդ սերնդին, և նրանց պահանջով, փոփոխված սահմանադրության համաձայն, ընդամենը մեկ շաբաթ առաջ վարչապետ դարձած նախկին նախագահ Ս. Սարգսյանը ապրիլի 23-ին հրաժարական տվեց: ԱԺ-ի քննարկումներից հետո շարժման առաջնորդ Ն. Փաշինյանը մայիսի 8-ին ընտրվեց վարչապետ: Կազմվեց նոր կառավարություն:

Իշխող ՀՀԿ-ն և մյուս կուսակցությունները փաստորեն դարձան ընդդիմություն, ծրագրվեց արտահերթ խորհրդարանական ընտրություն: Այսպիսով՝ Հայաստանում տեղի ունեցավ խաղաղ, անարյուն իշխանափոխություն:

ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունները տեղի ունեցան 2018թ. դեկտեմբերի 9-ին: Ազգային ժողովի 7-րդ գումարման ընտրություններին մասնակցած 11 քաղաքական ուժերից խորհրդարան անցան երեք ուժեր: «Իմ քայլը» դաշինքը ստացավ բացարձակ մեծամասնություն, իսկ «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները ձևավորեցին խորհրդարանական ընդդիմություն: Կազմվեց նոր կառավարություն:

Մշակութային կյանքը: Անկախության հռչակումով նոր և ավելի լայն հնարավորություններ ստեղծվեցին ազգային մշակույթի զարգացման համար: Սակայն Հայաստանի անկախացումից հետո ստեղծված տնտեսական դժվա-

ին դրությունը ծանր վիճակի մեջ դրեց մշակույթը: Հանրապետությունում տարվող բարեփոխումների ընդհանուր հայեցակետում գիտությունն ու արվեստը դիտարկվում էին որպես չափազանց ծախսատար և, փաստորեն, պետական միջոցներից ֆինանսավորվում էին մնացորդային սկզբունքով: Մշակութային բազմաթիվ օջախներ դադարեցին գործելուց, իսկ դրանց մի մասը սեփականաշնորհվեց: Պետական հոգածության բացակայության պատճառով արվեստի բազմաթիվ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, կինոյի, թատրոնների շենքեր հայտնվեցին անմխիթար վիճակում:

Չնայած դժվարին պայմաններին, այնուամենայնիվ, արվեստի նվիրյալները ամեն կերպ ձգտում են համընթաց քայլել ժամանակի հետ: Հաջողություններ են արձանագրում Հայաստանի թատրոնները, երգի և պարի համույթները, ստեղծագործական ուրիշ կոլեկտիվներ:

Կրթությունը: Փոփոխություններ կատարվեցին նաև կրթության համակարգում: 1995 թվականից սկսվեցին կրթական ոլորտի բարեփոխումները:

Հանրակրթությունը (միջնակարգ կրթությունը) բաժանվեց երեք աստիճանի՝ տարրական (4 տարի), միջին (5 տարի) և ավագ (3 տարի): Հանրակրթությունը 2006թ. դարձավ 12-ամյա, որից պարտադիր էր 9-ամյա հիմնական կրթությունը: Ավելի ուշ՝ 2017թ., պարտադիր դարձավ 12-ամյա կրթությունը:

Պետությունը չէր խոչընդոտում տարբեր տիպի, այդ թվում՝ մասնավոր դպրոցների ստեղծմանը:

Աշակերտներն ապահովվեցին դպրոցական դասագրքերով:

Փոփոխություններ կատարվեցին հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում: Բուհերը հիմնականում անցան ուսման նոր՝ եռաստիճան համակարգի. բակալավրիատ՝ 4 տարի, մագիստրատուրա՝ 2 տարի, և ասպիրանտուրա:

Բուհերում ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը: Ստեղծվեցին մասնավոր բուհեր, որոնց քանակն աստիճանաբար ավելացավ:

Վերաբացվեցին ու հիմնադրվեցին արհեստագործական ուսումնարաններ և քոլեջներ:

Գիտությունը: ԽՍՀՄ գոյության պայմաններում Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով առաջնակարգ դիրքեր էր գրավում միութենական հանրապետությունների շարքում:

Անկախացումից հետո ստեղծված ֆինանսատնտեսական ծանր վիճակը հանգեցրեց Հայաստանում գիտական կյանքի լճացմանը: Խաթարվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության՝ տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը:

Հանրապետության գիտական համալիրի քայքայումը հանգեցրեց գիտական կադրերի («ուղեղների») արտահոսքի: Գիտության, մշակույթի գործիչների մի մասը հարկադրված լքում էր հայրենիքը կամ զբաղվում էր այլ աշխատանքով:

Այդ ամենով հանդերձ՝ անկախության պայմաններում հնարավոր դարձավ կապեր հաստատել աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ, ուսումնասիրել և կիրառել գիտության կազմակերպման համաշխարհային փորձը: Հայաստանի գիտության համար լուրջ ձեռքբերում եղավ ակադեմիական համակարգային տեղեկատվական ցանցի ստեղծումը: Հայ գիտնականները սկսեցին ավելի շատ դրամաշնորհներ շահել միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, նոր սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում: Նոր խնդիրներ դրվեցին բնական, ճշգրիտ գիտությունների առջև: Նախ անհրաժեշտ էր հնարավորինս պահպանել եղած գիտական ներուժը, ապա նպաստել Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը, ներքին բնական պաշարների հայտնաբերմանն ու խելամիտ կիրառմանը:

Զգալի աշխատանք էր տարվում հայագիտության զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ էր հաղթահարել խորհրդային դարաշրջանի գաղափարական կապանքները: Հայոց պատմության մի շարք թեմաներ ենթարկվեցին ավելի խոր և համակողմանի ուսումնասիրության, հայ պատմաբանները հնարավորություն ստացան անաչառ լուսաբանելու պատմական իրողությունները: Կարևոր էր հայոց պետականության վերականգնման, հայ ժողովրդի անկախության համար մղվող պայքարի պատմության ուսումնասիրությունը, հայ ազգային-ազատագրական շարժման, այդ թվում՝ Արցախյան ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության և մի շարք այլ թեմաների հետազոտումը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտն սկսեց «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակի հրատարակությունը: Միաժամանակ զարգանում էին հնագիտությունը, ազգագրությունը, տնտեսագիտությունը, գրականագիտությունը և հումանիտար այլ ուղղություններ:

Շարունակվեցին «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի աշխատանքները (17 հատոր), «Հայ ժողովրդի հեքիաթների» (17 հատոր), «Հայաստանի ազգային ատլասի» (2 հատոր), «ԼՂՀ ատլասի» (եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն) հրատարակությունները: Իրականացվեցին նաև հանրագիտարանի համառոտ քառահատորյակի, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի», «Հայկական սփյուռք» և հանրագիտարանային այլ հրատարակությունները:

21-րդ դարասկզբին ՀՀ գիտության ոլորտում առաջնային խնդիր էր օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի կարգավորումը: 2001թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «ՀՀ գիտության զարգացման հայեցակարգը», որը նախանշում էր ոլորտի զարգացման ուղիները: Հայագիտության ոլորտում Հայաստանի և արտերկրի մասնագետների աշխատանքները համակարգելու և զարգացումն ապահովելու

նպատակով կարևոր նշանակություն ունեցան 2003թ. սեպտեմբերին և 2013թ. հոկտեմբերին ՀՀ ԳԱԱ-ում կազմակերպված՝ հայագիտության արդի վիճակին ու զարգացման հեռանկարներին նվիրված երկու միջազգային համաժողովները: Հայագիտության զարգացմանն էր ուղղված նաև ՀՀ կառավարության 2012թ. ընդունած «Հայագիտության զարգացման հայեցակարգը»:

Համո Սահյան (1914-1993)

Արդի պայմաններում ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն) կազմած վիճակագրական տվյալներով՝ միջազգային գիտական ոլորտում Հայաստանի գիտությունը պատվավոր տեղ է զբաղեցնում:

Գրականությունը: Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո ստեղծագործական գործունեությունը շարունակեցին հայ գրողները: Չափածո երկերի նոր ժողովածուներով ու շարքերով հանդես եկան նշանավոր բանաստեղծներ Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ռազմիկ Դավոյանը և ուրիշներ:

Սիլվա Կապուտիկյան (1919-2006)

Արձակի ասպարեզում լավագույն գործեր ստեղծեցին Պերճ Զեյթունցյանը, Ռուբեն Հովսեփյանը, Նորայր Ադալյանը և ուրիշներ:

Գրական կյանքի զարգացմանը մասնակցեցին ավագ սերնդի ականավոր ներկայացուցիչներ Հրանտ Մաթևոսյանը, Աղասի Այվազյանը, Զորայր Խալափյանը և ուրիշներ: Ազգային, հասարակական և հոգեբանական խնդիրներ են շոշափում Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոց», «Սպանել փրկչին», Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ», «Խնկի ծառեր», Արմեն Շեկոյանի «Մետաքսի ճանապարհը» ժողովածուները:

Մեծ եղեռնի թեմային է անդրադարձել ժամանակակից արձակագիրներից Վահագն Գրիգորյանն իր «Ժամանակի գետը» ստեղծագործության մեջ:

Շարունակում են տպագրվել գրական նախկին պարբերականները՝ «Գրական թերթ», «Գարուն», «Նորք» և այլն:

Միհեր Մկրտչյանի հուշարձանը Գյումրիում: Քանդակագործ՝ Ա. Շիրազ

Նկարչությունը և քանդակագործությունը: 1990–ական թթ. ևս, ինչպես խորհրդային շրջանում, հայ կերպարվեստի առաջատար ճյուղը գեղանկարչությունն էր: Այդ ասպարեզում աչքի ընկան Սարգիս Մուրադյանը («Զարթոնք»), Փարավոն Միրզոյանը («Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով»), Ռուդոլֆ Խաչատրյանը («Բազմաչափ օբյեկտ»), Սոնիա Պալասանյանը («Անվերնագիր») և ուրիշներ:

Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում

1997թ. աշնանը Սալոնիկում (Հունաստան) կազմակերպվեց XIX–XX դարերի հայ գեղանկարիչների և գծանկարիչների շուրջ 60 աշխատանք ներկայացնող «Հայաստանի գույներ» ցուցահանդեսը, որը մեծ արձագանք գտավ արտերկրում:

Դարասկզբի առաջին տասնամյակում Երևանում կանգնեցված հուշարձաններից հայտնի են Արա Շիրազի «Զորավար Անդրանիկ» (2002), Նորայր Կարգանյանի «Հովհաննես Բաղրամյան» (2003), Յուրի Պետրոսյանի «Հովհաննես Այվազովսկի» (2003) արձանները և այլն: Վերջին տարիների ստեղծագործություններից են Գյումրիում տեղադրված Միեր Մկրտչյանի հուշարձանը (Ա. Շիրազ), Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում (Գ. Գևորգյան) և այլն:

Երաժշտությունը: Անկախության առաջին տարիներին երաժշտական խմբերը և անհատ ստեղծագործողները ինքնուրույն պիտի լուծեին նյութական ու կազմակերպչական խնդիրները:

Հայ երաժշտության համայնապատկերում կարևորվում է ակադեմիական երգչախմբի արդյունավետ գործունեությունը: Այն պայմանավորված է երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, հայ խմբերգային արվեստի տաղանդավոր կազմակերպիչ Հովհաննես Չեքիջյանի արդյունաշատ գործունեությամբ, որի համար էլ նա 2016թ. արժանացավ ՀՀ Ազգային հերոսի կոչման:

Հովհաննես Չեքիջյան (1928)

Սփյուռքահայ շատ արվեստագետներ եկան Հայաստան, մասնակցեցին մշակութային վերաշինության գործին: Առաջիններից էր դիրիժոր և կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանը, որը ստանձնեց Հայաստանի

ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը մինչև 2000թ.: 1991թ. նա հիմնեց Գյումրու մշակութային կենտրոնը:

Հայաստանում վերսկսեց իր գործունեությունը անվանի դիրիժոր Օհան Դուրյանը:

Օհան Դուրյան (1922-2011)

Սփյուռքահայ հանրահայտ երաժիշտներից Արամ Ղարաբեկյանը ստանձնեց պետական կամերային նվագախմբի ղեկավարությունը՝ բարձրացնելով այն նոր աստիճանի: Իրենց կատարողական վարպետությամբ աչքի էին ընկնում դիրիժորներ Էդուարդ Թոփչյանը, Տիգրան Հեքեքյանը, երգիչներ Գեղամ Գրիգորյանը, Բարսեղ Թումանյանը, դաշնակահար Սվետլանա Նավասարդյանը և ուրիշներ:

Մեծ հռչակ ձեռք բերեց բալետների և օպերաների հեղինակ, ճանաչված կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը: Շարունակում են ստեղծագործել կոմպոզիտորներ Ռոբերտ Ամիրխանյանը, Արամ Սաթյանը և ուրիշներ:

Անկախության տարիներն արդյունավետ էին կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի համար, որի ստեղծագործությունը համաեվրոպական երաժշտական մշակույթի լավագույն ավանդույթների սինթեզն է՝ հիմնված կոմիտասյան սկզբունքների վրա: Տ. Մանսուրյանի ինքնատիպ ստեղծագործությունները հնչում են արտերկրում՝ հայտնի երաժիշտների կատարմամբ:

Հանրությանն այսօր ժամանակակից բեմադրություններով է ներկայանում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը: Երկարատև ընդմիջումից հետո թատրոնի երկացանկում հայտնվեց Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը, կայացան Ջ. Վերդիի «Աիդա» օպերայի և Ս. Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» բալետի բեմադրությունները:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման հետ թատրոնների աշխատանքը աստիճանաբար կարգավորվեց: 1990-ական թվականների վերջից սկսեցին ավելի հաճախ կազմակերպել հանրապետական և միջազգային թատերական փառատոներ:

Հայաստանում նմանապես կազմակերպվում են կինոփառատոներ, որոնց մեջ առաջնությունը, իբրև մշակութային իրադարձություն, պատկանում է «Ոսկե ծիրան» ամենամյա միջազգային կինոփառատոնին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012թ. Երևանը հայտարարվեց գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Այսպիսով՝ հայոց մշակույթը, չնայած առկա դժվարություններին, շարունակում է զարգանալ և հնարավորություն է տալիս ներկայացնելու աշխարհին հայ ժողովրդի ստեղծած մտավոր, հոգևոր և նյութական արժեքները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կարո՞ղ ենք ասել, որ Հայաստանում աստիճանաբար ձևավորվեց բազմակուսակցական համակարգ: Ի՞նչ նոր կուսակցություններ առաջացան: Որո՞նք են նրա առավելությունները միակուսակցական համակարգի նկատմամբ:
2. Ինչպե՞ս ընթացան ներքաղաքական զարգացումները 1990-ական թթ. վերջերին: Ե՞րբ և ի՞նչ իրադարձություն ծանր հարված հասցրեց ժողովրդավարությանը:
3. Ի՞նչ քաղաքական ուժեր էին գործում ընդդիմադիր դաշտում: Որո՞նք են տարբեր ժամանակներում իշխանությունների հետ քաղաքական կոալիցիա կազմած կուսակցությունները: Ի՞նչ կարող եք ասել նրանց մասին:
4. Ե՞րբ տեղի ունեցավ շրջադարձային իրադարձություն ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում: Որո՞նք են թավշյա որակվող հեղափոխության պատճառները: Փորձե՛ք գնահատել Ն. Փաշինյանի գլխավորած շարժումը: Որպես ժամանակակից՝ դուք հավատո՞ւմ էիք այդ շարժման հաղթանակին: Ի՞նչ հույսեր արթնացրեց իշխանափոխությունը ձեր մեջ, արդյոք իրականանո՞ւմ են դրանք: Ձեր կարծիքով՝ որո՞նք են իշխանափոխությունից հետո կատարված ամենակարևոր բարեփոխումները: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
5. Լրացրե՛ք «ՀՀ հասարակական-քաղաքական կյանքը» աղյուսակը:

Ընտրությունները	Տարեթիվը	Քաղաքական ուժերը	Արդյունքները
Նախագահական			
Խորհրդարանական			

6. Որո՞նք են Հայաստանի անկախացումից հետո մշակույթի անկման պատճառները: Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին կրթական համակարգում: Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին հայագիտության վիճակի բարելավման և զարգացման ուղղությամբ: Ի՞նչ նպատակ էր հետապնդում հայագիտությանը նվիրված միջազգային համաժողովների կազմակերպումը: Թվարկե՛ք հայագիտական նոր հրատարակությունները: Ձեր կարծիքով՝ ինչի՞ հետևանք էր գիտության լճացումը:
7. Ինչպե՞ս ընթացավ գրական կյանքը Հայաստանի անկախացումից հետո: Ի՞նչ արժեքավոր գրական գործեր ստեղծվեցին: Ի՞նչ գործերով նշանավորվեց հայ կերպարվեստը անկախության պայմաններում: Նշե՛ք կերպարվեստի հայտնի գործերը և դրանց հեղինակներին: Որո՞նք են երաժշտության, թատրոնի և կինոյի ձեռքբերումները մշակութային

վերաշինության ճանապարհին: Ովքե՞ր են ձեր սիրած երգահանները և դերասանները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:

8. Լրացրեք «Գիտության և մշակույթի գործիչները» աղյուսակը:

Ոլորտներ	Գործիչներ	Ստեղծագործություններ	Նախընտրելի գիտական, գրական ստեղծագործություններ, արվեստի գործեր
Գիտություն			
Գրականություն			
Կերպարվեստ			
Երաժշտություն			
Թատրոն և կինո			
Ճարտարապետություն			

ԹԵՄԱ 18 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. *Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և արտաքին քաղաքականությունը*

Հայաստանի միջազգային ճանաչման գործընթացը և դիվանագիտական հարաբերությունները: Հայաստանի անկախ հանրապետությունը սկսեց միջազգային ճանաչում գտնել 1991 թվականի վերջերից: 1991թ. նոյեմբերի 21-ին ՀՀ անկախությունն առաջինը ճանաչել և նրա հետ դիվանագիտական կապեր է հաստատել նորանկախ Լիտվայի Հանրապետությունը: Այդ տարվա դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1991թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ ավագը հայտարարեց, որ իր երկիրը պաշտոնապես ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ ու ինքնիշխան պետություն: 1992թ. հունվարի 7-ից ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: ՀՀ անկախությունը ճանաչեցին նաև Չինաստանը, Իրանը, Հնդկաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Եգիպտոսը և այլ երկրներ:

ՄԱԿ-ի խորհրդանշանը

1992թ. մարտին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), 2001-ին՝ Եվրախորհրդի, 2003-ին՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ: Այնուհետև անդամագրվեց միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ Սևծովյան տնտեսական համագործակցությանը (ՍԾՏՀ), 2012թ. հոկտեմբերին դարձավ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ), 2015թ. հունվարին՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) լիիրավ անդամ: Դա հնարավորություն է տալիս ՀՀ-ին միջազգային բարձր ամբիոններից բարձրացնելու Արցախի և այլ հիմնախնդիրներ:

Հայաստանի միջազգային հարաբերությունների մեջ կարևոր տեղ են գրավում հարաբերությունները ԱՊՀ անդամ Ռուսաստանի Դաշնության հետ: 1991թ. դեկտեմբերի 17-ին Ռուսաստանի Դաշնությունը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Հաջորդ օրը Հայաստանի Հանրապետությունը իր հերթին ճանաչեց Ռուսաստանի Դաշնության անկախությունը և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց 1992թ. ապրիլին: Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետությունը վարում է բազմակողմանի համագործակցություն, այդ թվում՝ ռազմապաշտպանական, տնտեսական, գիտակրթական, մշակութային և այլն:

Երկու երկրների հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին Հայաստանի և Ռուսաստանի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին 1997թ. օգոստոսի 29-ին կնքված պայմանագրով:

21-րդ դարասկզբին ՌԴ և ՀՀ նախագահների պաշտոնական փոխայցելությունների արդյունքում ստորագրվեց նոր պայմանագիր ՀՀ-ում գտնվող ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարաձգելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Հայաստանը կարևոր նշանակություն է տալիս իր հարևանների, հատկապես Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատմանը: Թեև 1991թ. դեկտեմբերին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին: Անկարան հայկական իշխանություններին նախապայմաններ ներկայացրեց՝ չարծարծել 1915թ. Հայոց ցեղասպանության հարցը, հրաժարվել պահանջատիրությունից և ընդունել Արցախի պատկանելությունը Ադրբեջանին:

Թուրքիան մինչև օրս չի բացել ՀՀ-ի հետ պետական սահմանը, որը փակել էր Արցախյան պատերազմի օրերից՝ 1993թ. ապրիլից: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ կարևոր քայլ էին 2009թ. հոկտեմբերին Ցյուրիխում ՀՀ-ի և Թուրքիայի միջև ստորագրված «երկկողմ» դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին արձանագրությունները: Սակայն Թուրքիայի ղեկավարությունը հրաժարվեց խելամիտ ժամկետում ստորագրությունը խորհրդարանում վավերացնելուց՝ հանդես գալով Արցախյան հիմնահարցի լուծման նախապայմաններով: ՀՀ նախագահը ստիպված 2015թ. Ազգային ժողովից հետ կանչեց վերոնշյալ արձանագրությունները:

Հատկապես կարևոր էր Վրաստանի հետ հարաբերությունների ամրապնդումը, որի տարածքով շրջափակման տարիներին շարունակվեց Հայաստանի կապը արտաքին աշխարհի հետ: Վրաստանը Հայաստանի համար կարևորվում է նաև այդ երկրում բնակվող մեծաքանակ վիրահայության, այդ թվում՝ Ջավախքի հայ համայնքի առկայությամբ: 1992թ. հունիսին երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Հայ-վրացական առևտրական և գիտամշակութային կապերի ընդլայնման համար կարևոր նշանակություն ունեցավ 2001թ. կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը:

Սերտ հարաբերություններ հաստատվեցին հարևան Իրանի հետ: Իրանը հենց սկզբից էլ արտաքին աշխարհի հետ կապվելու և տնտեսական գործունեություն ծավալելու Հայաստանի հուսալի կամուրջներից էր և այսօր էլ մնում է Հայաստանի կարևոր առևտրային գործընկերը: ՀՀ-ն Իրանի հետ էներգետիկ ու տրանսպորտային համատեղ ծրագրեր է իրականացնում:

Եվրամիության հետ հարաբերությունները շարունակում են մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից: 1996 թվականից

սկսեցին զարգանալ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև փոխհարաբերությունները ամենատարբեր ոլորտներում: «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում 1996թ. ապրիլից սկիզբ դրվեց Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ ՀՀ անհատական գործընկերությանը:

Եվրախորհրդի խորհրդանշանը

ՀՀ–Եվրամիություն հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանն է ուղղված ՀՀ-ի և Եվրոպական միության միջև Բրյուսելում 2017թ. նոյեմբերի 24-ին կայացած ԵՄ Արևելյան գործընկերության գագաթաժողովի շրջանակներում ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերություն» համաձայնագիրը, որը ուժի մեջ կմտնի ՀՀ-ի և Եվրամիության բոլոր 28 երկրների խորհրդարանների վավերացումից հետո:

Հարաբերությունները ԱՄՆ-ի և Հայաստանի միջև զարգանում են բնականոն ճանապարհով՝ ընդգրկելով քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտները: Դժվարին տարիներին ԱՄՆ-ը Հայաստանին հատկացրել է միլիոնավոր դոլարների մարդասիրական օգնություն: Հայաստանում գործում են ԱՄՆ սեփականություն հանդիսացող մի շարք ընկերություններ: ԱՄՆ-ը ՀՀ-ի երկրորդ առևտրային գործընկերն է Ռուսաստանից հետո:

Հայաստանը հարաբերություններ հաստատեց նաև Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի և այլ երկրների հետ: 2019թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունը հաստատել է դիվանագիտական հարաբերություններ 175 երկրների հետ, աշխարհի չորս տասնյակից ավելի երկրներում գործում են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ: Այսպիսով՝ ՀՀ արտաքին քաղաքականությունը ուղղված է երկրի անվտանգության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանում իր դերի բարձրացմանը:

Ցեղասպանության պետական թանգարան-ինստիտուտի սրահներից

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Հայաստանի անկախության վերականգնումից հետո կենսական նշանակություն ուներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, որն իր արտացոլումը գտավ Անկախության հռչակագրում: ՀՀ-ն 1991թ. դեկտեմբերի 10-ին միացավ «Ցեղասպանության հանցագործությունների կանխման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիային: Հատկապես 20-րդ դարավերջից հետո հանրապետու-

թյան արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը դարձավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Ցեղասպանությունը ճանաչել են Ուրուգվայը, Ռուսաստանի Պետական դուման, Հունաստանի, Լիբանանի խորհրդարանները, Կիպրոսը, Շվեդիան, Լեհաստանը, Կանադան, Սլովակիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրիան, Չեխիան, Գերմանիան, Պորտուգալիան և այլ երկրներ: Միջազգային կազմակերպություններից առաջինը Հայոց ցեղասպանությունը ճանաչել է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, ապա՝ Եվրախորհրդարանը:

Բելգիան և Արգենտինան նույնիսկ օրենք են ընդունել Հայոց ցեղասպանությունը մերժող անձանց դատապարտելու մասին: 2012թ. Ֆրանսիայի Սենատը նույնպես ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտման համար պատիժ սահմանող օրենք, սակայն այն մերժվեց երկրի Սահմանադրական խորհրդի կողմից: Հայոց ցեղասպանության ճանաչման գործում չափազանց կարևոր էին 2016թ. հունիսի 2-ին Գերմանիայի Դաշնության Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը, Առաջին աշխարհամարտում որպես Թուրքիայի դաշնակից երկիր Գերմանիայի մեղսակցության ընդունումը:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող Արգենտինայում

Փաստորեն, ներկայումս ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը շուրջ 3 տասնյակ է: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են նաև ԱՄՆ-ի 49 նահանգներ և տարբեր քաղաքների քաղաքապետարաններ: 2019թ. հոկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը ձայների բացարձակ մեծամասնությամբ ընդունեց Հայոց ցեղասպանության դատապարտման բանաձևը, որը կարևոր ուղերձ է ցեղասպանության չարիքի ժխտման և արդարության վերականգնման պայքարում:

Եղեռնի նահատակների հիշատակին քանդակած խաչքար Գլենդելում, ԱՄՆ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որոշակի ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայում՝ հասարակական կարծիքի վրա, դառնալով նրա քննարկումների առարկան: Դրա վկայությունն էր դեռևս 2007թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկության զոհ դարձած

«Ակօս» թերթի խմբագիր, հայտնի հասարակական գործիչ Հրանտ Դինքի սպանությունից հետո ծավալված շարժումը: Նրա թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի: Կատարվածը մեծ ազդեցություն ունեցավ թե՛ Թուրքիայի, թե՛ միջազգային հասարակական կարծիքի վրա: Թուրք հանրության առաջադեմ հատվածը փողոց դուրս եկավ «Մենք բոլորս հայ ենք», «Մենք բոլորս Հրանտ Դինքն ենք» կարգախոսներով:

Հայոց ցեղասպանության հուշարձանը Լիբանանում

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներն ամբողջ աշխարհում անցկացվեցին «Հիշում եմ և պահանջում» կարգախոսի ներքո: 2015թ. հունվարի 29-ին ընդունվեց համազգային նշանակության մի փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Փաստաթղթում մատնանշվում են ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու պահանջատիրության պատմական ու իրավական հիմքերը, այլև դրա հետևանքների վերացման ուղիներն ու սպասելիքները, պատգամները ապագա սերունդներին:

2015թ. ապրիլի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում Հռոմի պապ Ֆրանցիսկոսը պատարագ մատուցեց նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Իր խոսքում Հռոմի պապը 1915թ. հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները որակեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Նրա այս խոսքերը նոր թափ հաղորդեցին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Այդ միջոցառումները ցույց տվեցին, որ ՀՀ-ն 21-րդ դարում լինելու է ցեղասպանության դեմ պայքարի առաջամարտիկներից: Դրա լավագույն վկայությունն էր 2015թ. ապրիլի 22–23-ին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» համաշխարհային համաժողովների հրավիրումը և անցկացումը Երևանում, որը դարձավ պարբերական:

«Հիշում եմ և պահանջում» կարգախոսով ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում նշվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Պատմական աննախադեպ այդ միջոցառմանը մասնակցեցին ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակություններ, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Սիրիայի և Կիպրոսի նախագահները:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նշումը նոր ազդակ հանդիսացավ դրա միջազգային ճանաչման գործում: Ներկայումս Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացը շարունակվում է:

Այդուհանդերձ՝ Թուրքիան շարունակում է ժխտել Հայոց ցեղասպանության կատարված փաստը և չառերեսվել սեփական պատմության հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ սկսվեց Հայաստանի միջազգային ճանաչումը: Առաջինը որ երկրները ճանաչեցին Հայաստանի անկախությունը: Երբ ՀՀ-ն դարձավ ՄԱԿ-ի և Եվրախորհրդի անդամ: Փորձեք բնութագրել հայ-ռուսական փոխհարաբերությունները: Ինչու՞ են կարևորվում հատկապես հայ-վրացական հարաբերությունները: Ինչ նախապայմաններ է առաջ քաշում Թուրքիան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար:
2. Երբ է կնքվել գործընկերության և համագործակցության համաձայնագիր Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև: Երբ է ստորագրվել «Համապարփակ և ընդլայնված գործընկերություն» համաձայնագիրը: Ինչո՞վ է պայմանավորված նրա ուժի մեջ մտնելը:
3. Որո՞նք են ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղությունները: Ինչ միջազգային կազմակերպությունների է անդամակցել Հայաստանը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակներ է հետապնդում Հայաստանի անդամակցությունը միջազգային կառույցներին, և ի՞նչ է վկայում դա:
4. Ինչ գործոններով էր պայմանավորված Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալումը: Ինչ ազդեցություն ունեցավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը թուրքական հասարակական կարծիքի վրա: Ինչ փաստաթուղթ ընդունվեց Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ: Ինչ նշանակություն ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նշումը: Ինչ եք կարծում՝ կարելի՞ է ասել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը աստիճանաբար վերածվում է համաշխարհային շարժման: Հիմնավորեք ձեր պատասխանը: Որքա՞ն է այսօր ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած երկրների թիվը:
5. Լրացրեք «Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Իրադարձությունը

16-18-րդ թեմաների ամփոփում

1. Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանը հռչակեց անկախ պետություն: 1991թ. հոկտեմբերի 16-ին հանրապետության նախագահ ընտրվեց Լ. Տեր-Պետրոսյանը: Շուտով ԽՍՀՄ-ը փլուզվեց, ստեղծվեց Անկախ Պետությունների Համագործակցությունը, որի մեջ մտավ նաև Հայաստանը:
2. Անկախության հռչակումից հետո շրջադարձային իրադարձություններից էր ՀՀ սահմանադրության ընդունումը 1995թ. հուլիսի 5-ին: Սահմանադրությամբ իրավական ձևակերպում ստացավ նոր քաղաքական համակարգը: Հայաստանը դարձավ նախագահական հանրապետություն: Կազմավորվեց նոր դատական համակարգ: Ժամանակի ընթացքում ՀՀ-ում տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով կատարվեցին սահմանադրական երկու փոփոխություններ, որոնց արդյունքում այսօր Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է: 1992–93թթ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով ստեղծվեց հայոց բանակը:
3. Անկախացումից հետո Հայաստանը անցում կատարեց դեպի շուկայական հարաբերություններ: 1991թ. սկզբներին հողը սեփականաշնորհվեց: Գյուղատնտեսությունն ընկավ ծանր կացության մեջ: Խիստ կրճատվեցին արտադրության ծավալները: Սակայն շուտով գյուղատնտեսական արտադրանքի աճ նկատվեց: Ավելացան արտահանման ծավալները: Արդեն 2010թ. այդ ծավալները ավելացան 2,5 անգամ: 2011թ. ՀՀ գյուղատնտեսության ոլորտը գերակա ճյուղ հայտարարվեց:
4. 1993թ. սկսվեց արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը: 1993–1995թթ. սեփականաշնորհվեց մոտ 1300 ձեռնարկություն: 1996թ. վերագործարկվեց Հայկական ատոմակայանը և շահագործվեց Հրազդանի ջէկի 5-րդ բլոկը, ինչը վերացրեց էներգետիկ սովը և արդյունաբերության զարգացման հնարավորություն տվեց: Այդ ժամանակ առաջին անգամ գրանցվեց համախառն ներքին արդյունքի աճ, հաջորդ տարիներին աճի տեմպերն արագացան: Անկախության երկրորդ տասնամյակում հիմնվեցին բազմաթիվ մանր ու միջին ձեռնարկություններ: Չնայած այդ ամենին՝ տնտեսության մեջ դեռևս ցանկալի արդյունքներ չեն գրանցվել, կան չլուծված բազում խնդիրներ:
5. 1991թ. ընդունված օրենքի համաձայն՝ Հայաստանում ստեղծվեց բազմակուսակցական համակարգ: Հայրենիքում գործելու իրավունք ստացան ազգային ավանդական կուսակցությունները: Աստիճանաբար առաջացան նոր կուսակցություններ:
6. Ստեղծված տնտեսական ծանր վիճակը բացասական ազդեցություն ունեցավ հանրապետության մշակութային կյանքի վրա: Անկում ապրեցին գիտության, գրականության և արվեստի ճյուղերը, տեղի ունեցավ մտավորականության արտահոսք:

7. Անկախացումից հետո սկսվեց նորանկախ հանրապետությունների միջազգային ճանաչման գործընթացը: 1991թ. վերջերին ՀՀ-ն ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան և այլ պետություններ: 1992թ. Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի, իսկ 2001թ. հունվարին՝ Եվրախորհրդի անդամ:
8. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ևս լուրջ հաջողություններ արձանագրվեցին: 2015թ. նշվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, որն անցավ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով: Մշակվեց և ընդունվեց համազգային նշանակության համահայկական հուշակագիրը: Ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած երկրների թիվը մոտենում է 30-ի:

ԹԵՄԱ 19 ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Հանրապետության պետականության կայացման գործընթացը

Արցախի անկախության հռչակումը և պետականության ձևավորումը: ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով սկսված անկախացման գործընթացները չէին կարող անտարբեր թողնել արցախահայությանը: 1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հայտարարեց իր անկախությունը: Դրան ի պատասխան՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, որը, արտահայտելով Արցախի ժողովրդի կամքը, ընդունեց հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին: Նույն թվականի դեկտեմբերին 10-ին արցախահայությունը, օգտվելով ինքնորոշման սահմանադրական իրավունքից, անցկացրեց հանրաքվե և ժողովրդի միահամուռ ձայնատվությամբ հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը ԼՂՀ բնակչության 80%-ը մասնակցեց հանրաքվեին, մասնակիցների 99%-ից ավելին քվեարկեց անկախության օգտին: Հանրաքվեն անցկացվեց միջազգային դիտորդների ներկայությամբ, միջազգային իրավունքի և ժողովրդավարության սկզբունքների լիակատար պահպանումով: Անկախության հռչակումից հետո սկսվեց ԼՂՀ իշխանության մարմինների կազմավորումը:

Արցախի Հանրապետության զինանշանը

Արցախի Հանրապետության դրոշը

1991թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություն: Ձևավորվեց հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը (հետո՝ Ազգային ժողով): 1992թ. հունվարի 8-ին անկախ հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը, որի կյանքը, սակայն, 1992թ. ապրիլին ողբերգական մահով ընդհատվեց: Անհրաժեշտ է նշել, որ հետագայում ևս ԼՂՀ (Արցախ) Ազգային ժողովի բոլոր ընտրությունները տեղի են ունեցել իրավական և ժողովրդավարական պետություններին հարիր ընթացակարգով: Ստեղծվեց բարձրագույն գործադիր մարմինը՝ ԼՂՀ Նախարարների խորհուրդը (կառավարություն), վարչապետ նշանակվեց Օլեգ Եսայանը: ՀՀ օրինակով ձևավորվեց նաև ԼՂՀ դատական համակարգը: 1992թ. հանրապետությունն ունեցավ իր պետական դրոշն ու զինանշանը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն շերտերով, ուղղանկյունաձև է և հորիզոնական: Նրա աջ կողմի երկու ծայրերից սկսվում են սպիտակ հնգատամ սանդղանման գորգանախշեր, որոնք միանում են դրոշի մեկ երրորդ հատվածում: ԼՂՀ պետական զինանշանում օգտագործված է՝ գլխավերևում արևի ճառագայթներով, Արտաշեսյանների հարստության թագով պսակված, թևատարած արծվի խորհրդանիշը: Կենտրոնում՝ ԼՂՀ պետական դրոշի և Քիրս լեռան պատկերի ֆոնին, «Մենք ենք, մեր լեռները» հուշարձանի պատկերն է: Ներքևում՝ արծվի ճանկերում, խաղողի վազերի, թթենու պտուղների, ցորենի հասկերի պատկերներն են: Վերևի կիսաշրջանում կա հայերեն մակագրություն. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ Արցախ»:

Արթուր Մկրտչյան (1959-1992)

Ինքնապաշտպանական մարտերում սկսեց կազմավորվել նաև ԼՂՀ հաղթական բանակը:

Հետագայում ԼՂՀ-ում մտցվեց նախագահական կառավարում: 1994թ. դեկտեմբերին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից Ռոբերտ Քոչարյանը ընտրվեց հանրապետության նախագահ, իսկ 1996թ. նոյեմբերից պաշտոնավորեց համաժողովրդական ընտրությամբ:

ԼՂՀ հռչակումն ու պետական իշխանության ձևավորումը մեծապես նպաստեցին Արցախյան շարժման հաջողություններին և Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողություններին վերջ տալուն:

Արցախյան պատերազմի ծավալումը: 1991թ. վերջից գնալով ուժեղանում էր ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ծավալած ռազմական ագրեսիան: Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ի հետ հետևողական պայքար սկսեց շրջափակման վերացման և պատերազմական գործողությունների դադարեցման համար: Սակայն Ադրբեջանի իշխանությունները սկսեցին անընդհատ ռմբակոծել

Արցախի բնակավայրերը: Համապարփակ շրջափակումը և շուրջօրյա հրետակոծությունները ավերել ու կաթվածահար էին արել Արցախի տնտեսությունը: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի վերացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը, ինչին 1992թ. ձմռանից ձեռնամուխ եղան ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը: Դաժան մարտերից հետո 1992թ. հունվարին ազատագրվեց Ստեփանակերտի արվարձան Կրկժանը: 1992թ. հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Շուշիի բարձունքից ադրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող գյուղը մնում էր անառիկ: Ադրբեջանի ազգային բանակն այդ ուղղությամբ նոր լայնածավալ հարձակում սկսեց 1992թ. հունվարի 25–26-ին, սակայն պարտություն կրելով հետ շպրտվեց:

Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր (այժմ՝ Իվանյան), որը փակում էր Ստեփանակերտ–Ասկերան մայրուղին:

Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնել օդանավակայանը: Հայկական ջոկատները Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ առանց զոհերի առաջացան դեպի օդանավակայան և շրջափակեցին հակառակորդին, որը անակնկալի եկած նահանջեց: Հայկական ուժերը գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որ Խոջալուի բնակիչները հեռանային Աղդամ: Փետրվարի 26–ին՝ մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով մի քանի զոհեր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը: Վիճակը շտկելու համար Ադրբեջանի ժողովրդական ճակատը կազմակերպեց Խոջալուի մահմեդական բնակչության (հիմնականում՝ ադրբեջանցիներ) կոտորածը՝ փորձելով դա վերագրել հայկական կողմին: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր: Վերականգնվեց Ստեփանակերտ–Ասկերան մայրուղու բնական գործունեությունը:

Տեսարան Շուշիից

Շուշիի ազատագրումը: Հայոց ազատամարտի մեր նորօրյա պատմության փառավոր էջերից է Շուշիի ազատագրումը: Երկու տարի շարունակ Ստեփանակերտի խաղաղ բնակչության ռմբակոծումը կատարվում էր Շուշի քաղաքից: 1992թ. մայիսի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում օրհասական դրություն էր: Թշնամին շարունակում էր ռմբակոծել Ստեփանակերտը հրթիռային կայանքներից: Մայրաքաղաքը սովի եզրին էր: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր:

Շուշիի ազատագրման ծրագիրը կազմելու և իրագործելու պատասխանատվությունը դրված էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) վրա: Նրա գերխնդիրը Շուշիի ազատագրման միջոցով ՀՀ-ի հետ ճանապարհային ուղիղ կապ ապահովելն էր:

1992թ. մայիսի սկզբին որոշվեց իրագործել Շուշիի ազատագրման «Հարսանիք լեռներում» խիստ գաղտնի ծրագիրը: Ռազմական գործողությունները ղեկավարում էր գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), նրա կողքին էին գեներալ Գուրգեն Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆելիքս Գզողլյանը և ուրիշներ:

Թշնամին ուներ 2300 զինյալ, իսկ գրոհող հայկական ուժերի թիվը հասնում էր 1700-ի: Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցում էր մոտ 60 ջոկատ: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներ էին նշանակվել խիզախ հրամանատարներ Վիտալի Չիթչյանը, Արկադի Կարապետյանը, Մեյրան Օհանյանը, Աշոտ Ղուլյանը, Վարդան Ստեփանյանը (Դուշման), Յուրա Հովհաննիսյանը, Սամվել Բաբայանը, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլյանը և այլք:

Մայիսի 8-ի գիշերը հրետանային կրակի ներքո բոլոր ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը: Մայիսի 9-ին թշնամին խուճապահար փախուստի դիմեց:

Շուշիի ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում:

Այս մարտերում իրենց հերոսությամբ աչքի ընկան բազմաթիվ հայ մարտիկներ, որոնց թվում էին իրենց կյանքը հայրենիքին նվիրաբերած Գագիկ Ստեփանյանը, Արթուր Ղարիբյանը, Աշոտ Ղուլյանը և ուրիշներ: Շուշիի հաղթանակն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը վերջնական հաղթանակի հանդեպ: Դրանով վերջ տրվեց Արցախի տևական շրջափակմանը:

Հետապնդելով խուճապի մատնված հակառակորդին՝ Արցախի ազատամարտիկները մայիսի 18-ին ազատագրեցին Լաչինը (Բերձորը) և նրա շրջակա գյուղերը: Լաչինի մարդասիրական միջանցքով սկսվեց Հայաստանի Հանրապետությունից Արցախին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը: Սակայն Ադրբեջանը չհաշտվեց պարտության հետ:

1992թ. ամռանը ադրբեջանական կանոնավոր բանակը օտարերկրյա վարձկանների աջակցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում: Հակառակորդին հաջողվեց գրավել Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը:

Այս շրջաններից մազապուրծ գաղթականների նոր խմբեր հայտնվեցին Հայաստանի Հանրապետությունում և Արցախում: Ադրբեջանցիների գրաված տարածքներում սկսվեց պարտիզանական շարժում: 1992թ. ամռանը ռազմա-

կան դրություն հայտարարվեց ԼՂՀ տարածքում: Օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ) Ռ. Քոչարյանի գլխավորությամբ: Իր ձեռքը վերցնելով գործադիր իշխանությունը՝ ՊՊԿ-ն կազմակերպեց արցախահայության ինքնապաշտպանությունը: Նրա ջանքերով կարգավորվեց տնտեսական վիճակը, կազմակերպվեց Արցախի մարտունակ բանակը:



Արայիկ Խանդոյան (Միայնակ գայլ) (1971-2018), Լաչինի ազատագրման օրը

Ձեռնարկված միջոցառումները շուտով տվեցին դրական արդյունքներ: Վերախմբավորելով ուժերը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը կարողացավ կանգնեցնել թշնամու բազմահազարանոց ուժերի առաջխաղացումը և անցնել հակահարձակման, ազատագրել զավթված տարածքները: 1993թ. ապրիլին արցախյան ուժերի ճնշման տակ թշնամին ստիպված թողեց Քելբաջարի (Քարվաճառի) տարածքները: Փաստորեն, ռազմական գործողությունների երկրորդ շրջադարձային կետը Քելբաջարի ազատագրումն էր: 1993թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը Մարտակերտ քաղաքի ազատագրումն էր (հունիսի 28): Թշնամին պարտություն կրեց հուլիսի 23-ին Աղդամի մոտ, և քաղաքն ազատագրվեց: Շուտով ազատագրվեցին Ֆիզուլիի, Ջաբրայիլի (օգոստոսի 23), Կուբաթլիի (օգոստոսի 31), Հորադիզի (հոկտեմբերի 24) և Ջանգելանի (Կովսական) շրջանները: Ազատագրական այդ մարտերում զոհվեցին հայ քաջորդիներ Լեոնիդ Ազգալդյանը, Սամվել Շահմուրադյանը, Մոնթե Մելքոնյանը, Շահեն Մեղրյանը, Յուրա Հովհաննիսյանը և շատ ուրիշներ:

Լեոնիդ Ազգալդյան (1942-1992)

Շուտով իշխանափոխությամբ Ադրբեջանի նախագահ դարձավ Հեյդար Ալիևը: Վերջինս ժամանակ շահելու նպատակով իբր սկսեց զինադադարի գործընթաց, իրականում ուժեղացրեց հակահայկական քարոզչությունը և դրսից վարձկանների հավաքագրումը: 1993թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակման անցավ ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ փորձելով բեկում առաջացնել ռազմական գործողությունների մեջ: Հակառակորդի բանակը զինված էր ժամանակակից տեխնիկայով: Նրան օգնում էին տարբեր երկրների զինվորական խորհրդատուներ, իսկ նրա շարքերում կռվում էին աֆղան ու թուրք վարձկաններ:



Մոնթե Մելքոնյան (1957-1993)

Սակայն թշնամուն չհաջողվեց բեկում մտցնել ռազմական գործողությունների մեջ: 1994թ. փետրվարի կեսերից արցախյան ուժերը անցան հակահարձակման և ազատագրեցին թշնամու զավթած Օմարի լեռնանցքը, Մարտակերտի ու Ասկերանի շրջակա տարածքները: Շուրջ երկամյա թեժ մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 5 հազարից ավելի զինվոր ու սպա, 72 միավոր տեխնիկա: Ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994թ. մայիսին զինադադար կնքել: Դադարեցվեցին ռազմական գործողությունները, սկսվեց հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը դեռ շարունակվում է: Այսպիսով՝ Ադրբեջանը կրեց ջախջախիչ պարտություն և ունեցավ սպառազինության ու մարդկային մեծ կորուստներ: Հաղթելով Արցախյան պատերազմում՝ արցախահայությունը և ընդհանրապես համայն հայությունը ապացուցեցին, որ կարելի է հաղթել փոքր ուժերով՝ ունենալով աներեր հավատ սեփական հայրենիքի ու հաղթանակի նկատմամբ, ազգային միասնական կամք և գերազանց կազմակերպվածություն: Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի բոլոր հերոսներին:

Այսպիսով՝ հայ ժողովուրդն իր միասնության և աննկուն ոգու շնորհիվ իրեն պարտադրված պատերազմից հաղթականորեն դուրս եկավ և ազգային երկրորդ պետությունը ստեղծեց Հայաստանի ազատագրված հատվածում:

Ապրիլյան քառօրյա պատերազմը: Չնայած 1994թ. հաստատված զինադադարին՝ շուրջ 22 տարի ադրբեջանական կողմը մշտապես խախտում էր զինադադարը՝ պարբերաբար ռմբակոծելով արցախա-ադրբեջանական սահմանային հայկական դիրքերն ու ՀՀ սահմանամերձ գյուղերը: Այս ամենին հայկական կողմը հաճախ պատասխանում էր պատժիչ գործողություններով: 2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը՝ ժամը 3-ի սահմաններում, Ադրբեջանը Արցախի դեմ դիմեց աննախադեպ լայնամասշտաբ հարձակման շփման գծի ողջ երկայնքով՝ կիրառելով սպառազինությունների ողջ համալիրը, այդ թվում՝ զրահատեխնիկա, ծանր հրետանի և օդուժ, հատկապես անօդաչու

թռչող սարքեր: Ծավալված մարտական գործողությունները առավել թեժ էին ռազմաճակատի վերածված հյուսիսարևելյան (Թալիշ–Մատաղիս–Մարտակերտ) և հարավային (Հադրութ) ուղղություններում: Ծավալվեցին արյունահեղ մարտեր: Թշնամին, հույսը դնելով հատուկ պատրաստություն անցած գրոհայինների վրա, անակնկալի եկավ՝ հանդիպելով 18–20 տարեկան հայ զինվորների համառ դիմադրությանը: Հայրենիքի մերօրյա հերոս պաշտպանները՝ քաջարի դիրքապահները, ինչպես միշտ, իրենց սպաների հրամանատարությամբ սառնասրտորեն դիմակայեցին հակառակորդի մինչև ատամները զինված հատուկջոկատայիններին և կանոնավոր զորամասերին: Ապրիլի 2-ին և 3-ին հակառակորդի գերազանցող ուժերի առաջին հարվածն իրենց վրա վերցրին հյուսիսարևելյան ուղղության հրաձգային վաշտերից մեկի քաջարի մարտիկները աննկուն հրամանատար Արմենակ Ուրֆանյանի գլխավորությամբ: Կատաղի մարտերի ընթացքում հակառակորդը բազմիցս համառ փորձեր արեց տիրելու արցախյան դիրքերին, սակայն ամեն անգամ հետ շպրտվեց՝ տալով բազմաթիվ զոհեր ու վիրավորներ: Կապիտան Ուրֆանյանը կարողացավ դիպուկ կրակով ոչնչացնել հակառակորդի տասնյակից ավելի զինյալների: Կրակով ապահովելով իր զինվորների տեղաշարժը՝ վաշտի հրամանատարը մինչև վերջին փամփուշտը կռվեց, տեսնելով, որ ուժերն անհավասար են, և զինամթերքը սպառվում է, ընդունեց խրամատ հետ քաշվելու, այնտեղ վերախմբավորվելու և հակագրոհի անցնելու որոշում: Սակայն չհասցրեց, հերոսաբար զոհվեց արկի պայթյունից: Սիրված հրամանատարի կողքին էր ազգությամբ եզդի, 20-ամյա շարքային Քյարամ Սլոյանը, ով, չենթարկվելով նահանջի հրամանին, մինչև վերջ մնաց ու կռվեց ոսոխի դեմ: Զոհված հերոսի հետ հակառակորդը դաժան վարվեց՝ գլխատելով նրան: Անձնուրաց հերոսությամբ աչքի ընկավ նաև 19-ամյա Ռոբերտ Աբաջյանը: Նա հակառակորդի հետ կռիվ տվեց մինչև վերջին փամփուշտը, չհանձնվեց ու չնահանջեց, իսկ վերջում իր մոտ եղած միակ նռնակով պայթեցրեց իրեն և հակառակորդի մոտ մեկ տասնյակ զինվորների: Անձնազոհ հայորդին հետմահու արժանացավ «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագույն կոչմանը:

Մինչ ռազմաճակատի ողջ երկայնքով մարտական գործողությունները շարունակվում էին, մեր հայրենիքի տարբեր շրջաններից հազարավոր ազատամարտիկներ շտապում էին առաջնագիծ՝ անվարան կանգնելու իրենց կրտսեր ընկերների և որդիների կողքին: Ապրիլի 2-ից հակառակորդի մարտական ուղղաթիռները սկսեցին հրթիռային հարվածներ հասցնել հարավային ուղղությամբ գտնվող մեր դիրքերին՝ նպատակ ունենալով ապահովելու իրենց տանկերի ու հետևակի առաջխաղացումը: Սակայն այստեղ ևս հակառակորդը հանդիպեց համառ դիմադրության և հետ մղվեց: Այս ուղղությամբ իրենց սխրագործություններով աչքի ընկան շարքային Նարեկ Մալխասյանը, հրաձիգ-զենիթային Գևորգ Մանուկյանը, որոնք խոցեցին թշնամու մարտական ուղղաթիռներ: Հակառակորդի դեմ մարտերում իրենց քաջագործություններով

աչքի ընկան շարքայիններ Շուլի Հակոբյանն ու Մարատ Պետրոսյանը: Շուլին խոցել էր թշնամու երեք, իսկ Մարատը՝ հինգ տանկ:

Քառօրյա մարտերում հակառակորդը հուժկու հակահարված ստացավ և խնդրեց նոր զինադադար: Ապրիլի 5-ին հաստատվեց հրադադար արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Քառօրյա պատերազմում հայկական կողմը տվեց շուրջ 100 զոհ, իսկ ադրբեջանցիները՝ հինգ անգամ ավելին:

Արցախյան պատերազմի այս նոր փուլն ապացուցեց, որ հայ ժողովուրդն իր համախմբվածությամբ, զինվորի ու բանակի կողքին կանգնելու հաստատակամությամբ անպարտելի է:

Արցախյան հիմնահարցը խաղաղ բանակցություններում: Զինադադարի կնքումից հետո շարունակվեցին բանակցային գործընթացները, որոնք դարձան Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտեի (ԵԱՀԿ) քննարկման առարկա, քանզի 1992թ. հունվարին ՀՀ-ն անդամակցել էր ԵԱՀԿ-ին: Ըստ էության իր գոյության ընթացքում ԵԱՀԿ-ն առաջին անգամ դարձավ միջազգային առճակատման լուծման միջնորդ: ԵԱՀԿ-ն հենց սկզբից ակտիվ գործունեություն ծավալեց պատերազմը դադարեցնելու և Արցախյան հիմնախնդիրը բանակցային ճանապարհով լուծելու ուղղությամբ: Նրա ջանքերով Արցախյան հարցը միջազգայնացվեց: ԵԱՀԿ-ն կոչ էր անում միջազգային հեղինակավոր կառույցներին միջոցներ ձեռնարկելու Ադրբեջանի վայրագությունները կանխելու և Լեռնային Ղարաբաղի ժողովրդին կոնկրետ առարկայական օգնություն ցուցաբերելու նպատակով: Պատահական չէ, որ հենց ԵԱՀԿ ձևաչափով ստեղծվեց Արցախյան հիմնահարցի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համանախագահությամբ: Մինսկի խմբի երկրների տարբեր պատվիրակություններ շարունակաբար եղել են տարածաշրջանում, կազմակերպել բազմապիսի հանդիպումներ ու քննարկումներ: Այսօր ամերիկյան յոթ և Ավստրալիայի մեկ նահանգ, ինչպես նաև բասկերի խորհրդարանը ճանաչել են Արցախի Հանրապետության անկախությունը:

ԵԱՀԿ Մինսկի խումբը առ այսօր նորանոր առաջարկություններով բազում հանդիպումներ է ունեցել երկու երկրների և Արցախի ղեկավարների հետ: Ցավոք, այդ բոլոր հանդիպումներն ու բանակցությունները շոշափելի արդյունքներ չեն տվել:

Սկզբնական փուլում ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններում, Հայաստանի Հանրապետությունից բացի, մինչև 1998 թվականը մասնակցում էր ԼՂՀ ներկայացուցիչը: Այդ բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «ՀՀ-ն կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Արցախի ժողովրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»: ԼՂՀ ղեկավարությունը բացառում է որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին: ՀՀ նոր իշխանությունը այն կարծիքին է, որ պետք է Արցախը վերադարձնել բանակցությունների սեղանին, և միայն

Ադրբեջան–Արցախ ուղղակի բանակցությունների միջոցով հնարավոր կդառնա որոշել հակամարտող կողմերի փոխզիջումների շրջանակը և քննել քաղաքական կարգավորման երկուստեք ընդունելի տարբերակ: Հակառակ սրան՝ Ադրբեջանը համառորեն չի ճանաչում Արցախը որպես հակամարտող կողմ: Դեռևս 1999թ. սկսվեցին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ղեկավարների ուղղակի շփումները, որոնք շարունակվում են մինչ այժմ և նույնպես որևէ արդյունք չեն տվել: ՀՀ-ն և Արցախը կողմ են հիմնահարցի խաղաղ կարգավորմանը, միջազգային իրավունքի նորմերի պահպանմանը և պատմական արդարության վերականգնմանը, ինչը չի կարելի ասել Ադրբեջանի վերաբերյալ:

Մինչ այսօր Արցախյան հիմնահարցի լուծման ուղիներ են որոնվում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և ինչպես ընթացավ ԼՂՀ անկախացման գործընթացը: Երբ տեղի ունեցավ ԼՂՀ անկախության հանրաքվեն, ինչ գիտեք այդ մասին: Որոնք են ԼՂՀ բարձրագույն իշխանության մարմինները: Ինչ կարող եք ասել ԼՂՀ դրոշի և զինանշանի մասին:
2. Երբ սկսվեց և գնալով ուժեղացավ Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ-ի դեմ: Երբ և ինչու ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ձեռնամուխ եղան թշնամու կրակակետերի ոչնչացմանը: Փորձեք գնահատել Խոջալուի կոտորածի կազմակերպումը Ադրբեջանի իշխանությունների կողմից: Նկարագրեք Շուշիի և Լաչինի ազատագրումը և ներկայացրեք դրա նշանակությունը: Ինչով վերջացան ԼՂՀ ինքնապաշտպանական բանակի հակահարձակումները 1993թ.: Ովքեր զոհվեցին ազատագրական այդ կռիվների ժամանակ: Ինչ գիտեք նրանց մասին: Ո՞վ է Արցախյան ազատամարտի ձեր սիրելի հերոսը: Ինչպես կբնութագրեք նրան: Կցանկանայիք նմանվել նրան:
3. Երբ և ում միջնորդությամբ կնքվեց հայ-ադրբեջանական զինադադարը: Ինչ կարող եք ասել այդ մասին: Ձեր կարծիքով՝ ինչու է Ադրբեջանը մշտապես խախտում զինադադարի պայմանները: Արցախի դեմ երբ սանձազերծեց Ադրբեջանը քառօրյա պատերազմը, և ինչով ավարտվեց այն: Փորձեք նկարագրել քառօրյա պատերազմում մեր զինվորների խիզախությունը և քաջությունը, նրանց անմահ սխրանքները: Մեր օրյա հերոսներից ում կուզենայիք նմանվել և ինչու:
4. Զինադադարից հետո ինչ ընթացք ունեցավ բանակցային գործընթացը: Միջազգային ո՞ր կառույցն է զբաղվում Արցախյան հարցի խաղաղ կարգավորմամբ: Ինչ փուլերի կարելի է բաժանել բանակցային գործընթացները: Փորձեք ներկայացնել և գնահատել այդ փուլերը: 2018թ. «թավշյա հեղափոխությունից» հետո ինչ առաջարկով են հանդես գալիս Հայաստանի իշխանությունները:

2. Հանրապետության ներքին դրությունը

Տնտեսությունը: Արցախահայությունը դժվարին պայմաններում պետք է ձեռնամուխ լիներ անկախ պետականության կերտմանը:

Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, բռնագաղթերը, հացահատիկային դաշտերի հրդեհումները, էլեկտրաէներգիայի անջատումները, ջրատար խողովակների պայթեցումներն ու անասունների հափշտակությունները վիթխարի վնաս հասցրին երկրի տնտեսությանը:

Ռազմական ագրեսիայի հետևանքները հիրավի աղետալի էին: Մինչև 1994թ. մայիսի զինադադարը ԼՂՀ իշխանությունները ժառանգեցին ավերված և քայքայված տնտեսություն:

ԼՂՀ-ն էլեկտրահաղորդման գծով միացավ Հայաստանին: Դրանով վերականգնվեց ԼՂՀ էներգետիկ համակարգը: Վերագործարկվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ:

Կարևոր էր այն, որ ԼՂՀ ղեկավարությունը չհրապուրվեց սեփականաշնորհման արագ կենսագործմամբ, որի ժամանակ սխալներն անխուսափելի են: Դրա շնորհիվ, եթե 1995թ. ԼՂՀ-ում անհատական ձեռնարկությունների քանակը 74 էր, ապա 2000թ. նրանց թիվը հասավ 253-ի:

Վերջին տարիներին Արցախի Հանրապետությունում արձանագրվել է շարունակական տնտեսական աճ՝ միջինը 10%, որի արդյունքում բարելավվել են երկրի կայուն զարգացումն ու բնակչության կենսապայմանները:

1995թ. ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ օրենքով ամբողջ հողը հայտարարեց պետական սեփականություն: 1998թ. արցախյան իշխանություններն ընդունեցին օրենքներ, որոնցով նախատեսվում էր սեփականաշնորհման ենթակա հողատարածքները որպես սեփականություն տալ անհատույց: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ այստեղ հողաբաժնի չափը սահմանվում էր ոչ թե մեկ պայմանական ծխի, այլ յուրաքանչյուր շնչի հաշվով: Սեփականաշնորհման էին ենթակա վարելահողերը: Իսկ խոտհարքները և արոտավայրերը սեփականաշնորհման ենթակա չէին, մնում էին համայնական օգտագործման:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ Արցախում նպատակահարմար համարվեց կոլեկտիվ տնտեսությունները հախուռն կերպով չքայքայել, չսեփականաշնորհել գյուղատնտեսական տեխնիկան և անասնապահական ֆերմաները: Դրա շնորհիվ հնարավոր եղավ այս ոլորտում որոշակի առաջընթաց ապահովել:

Հասարակական-քաղաքական կյանքը: Արցախում ևս խորհրդային միակուսակցական համակարգից անցում կատարվեց բազմակուսակցական համակարգին: Ավանդական ԼՂ կոմունիստական կուսակցության կողքին ազատորեն սկսեցին գործել ԼՂ Հայ հեղափոխական դաշնակցություն, Արցախի Արմենական կուսակցությունները: Առաջացան նոր կուսակցություններ՝ «Ազատ հայրենիք», «Սոցիալական արդարություն», «Շարժում-88» և այլն:

1997թ. ԼՂՀ առաջին նախագահ Ռ. Քոչարյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, ուստի 1997թ. սեպտեմբերին ԼՂՀ-ում տեղի ունեցան նախագահի արտահերթ ուղղակի ընտրություններ: Հանրապետության նախագահ ընտրվեց Արկադի Ղուկասյանը: Նա երկրորդ անգամ ընտրվեց 2002թ. օգոստոսին: ԼՂՀ կյանքում դեպի ժողովրդավարություն գնացող ճանապարհին կարևոր նշանակություն ունեցան 1998թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որոնց փոխանցվեցին պետական մարմինների իրավունքները:



Արկադի Ղուկասյան (1957)

Աննախադեպ ակտիվությամբ ընթացան ԼՂՀ երրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները, որոնք տեղի ունեցան 2000թ. 33 ընտրատարածքներում: Ամենաշատ ձայներ ստացավ «Ժողովրդավարական Արցախ» միությունը:

ԼՂՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները կայացան 2005 թվականին, ամենաշատ ձայներ ստացավ «Արցախի Ժողովրդավարական կուսակցությունը» (ԱԺԿ): Ազգային ժողովի պատգամավորների 2010թ. և 2015թ. ընտրություններում հաղթեց վարչապետ Արայիկ Հարությունյանի ղեկավարած «Ազատ հայրենիք» կուսակցությունը:

ԼՂՀ նախագահական չորրորդ ընտրությունները տեղի ունեցան 2007թ. հուլիսին, նախագահ ընտրվեց Բակո Սահակյանը: Նա երկրորդ անգամ նախագահ ընտրվեց 2012թ. հուլիսին տեղի ունեցած ընտրությամբ, իսկ երրորդ անգամ՝ 2017թ. օգոստոսին՝ խորհրդարանում:

Բակո Սահակյան (1960)

2006թ. դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունվեց ԼՂՀ սահմանադրությունը, ինչը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ամենակարևոր իրադարձություններից էր:

ԼՂՀ մշակութային կյանքը: ԼՂՀ պետականության կայացման ընթացքում սկսվեց դպրոցական կրթության կատարելագործման ուղիների որոնումը: Համակարգի բարեփոխման ուղղությամբ 2005-2012թթ. իրականացվեցին մի շարք միջոցառումներ: Որոշակի աշխատանքներ են տարվել ԼՂՀ գյուղական և վերաբնակեցվող բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով համալրելու, դպրոցները տեխնիկական նորագույն միջոցներով ապահովելու ուղղությամբ:

Ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների մասնագետների պատրաստման գործում մեծ ներդրում ունի Արցախի պետական համալսարանը:

Արցախյան շարժմանը և ԼՂՀ կազմավորմանը զուգընթաց նոր թափ ստացավ հրատարակչական գործը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթը վերանվանվեց «Արցախ», «ԼՂ Հանրապետություն», այնուհետև՝ «Ազատ Արցախ»: Հանրապետության շրջաններում և քաղաքներում սկսեցին լույս տեսնել «Ստեփանակերտ», «Շուշի», «Դիզակ», «Ամարաս» և այլ թերթեր: Հրատարակվել են «Արցախ», «Գիտությունը և կրթությունը Արցախում», Մ. Մաշտոցի անվան համալսարանի «Լրատու» և «Գիտական Արցախ» հանդեսները:

ԼՂՀ-ում անկախության տարիներին լուրջ ուշադրություն դարձվեց ոչ միայն մշակութային ոլորտի մեջ ընդգրկված գրադարանների, այլև թանգարանների, արվեստի՝ թատերարվեստի, երաժշտության և պարարվեստի զարգացմանը, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության գործին:

Ստեփանակերտին մի առանձին վեհություն է հաղորդում դեռևս 1967թ. կառուցված՝ քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր լեռները» կոթողը, որը դարձել է Արցախի խորհրդանիշը:

Միջազգային մշակութային համագործակցության կարևորագույն և անբաժանելի մասն են կազմում Հայաստան-Սփյուռք-Արցախ մշակութային կապերը, որոնք իրականացվում են «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակներում: Հանրապետության տարածքում հաշվվում են բազմահազար հուշարձաններ, որոնց զգալի մասը եկեղեցիներ ու խաչքարեր են: Վերջին տարիներին հայ հնագետների կատարած պեղումների շնորհիվ բացվեց Տիգրան Մեծի հիմնադրած Տիգրանակերտը (Արցախի Տիգրանակերտը), որը մեկ անգամ ևս փաստեց հայերի վաղնջական ներկայությունը, բնիկությունը Արցախում: Անկախ Արցախի մշակույթը զարգացման փուլում է՝ արձանագրելով նորանոր ձեռքբերումներ, որոնք նրա պետականության կայացման լավագույն վկայությունն են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փորձեք փաստերով ցույց տալ, որ Ադրբեջանը տասնամյակներ շարունակ Լեռնային Ղարաբաղում վարել է կողմնակալ քաղաքականություն:
2. Ինչպես ընթացան ԼՂՀ արդյունաբերական ձեռնարկությունների և հողի սեփականաշնորհումները:
3. Ինչ կուսակցություններ էին գործում ԼՂՀ-ում: Ինչ կարող եք ասել ԼՂՀ նախագահական և Ազգային ժողովի ընտրությունների մասին:
4. Երբ է ընդունվել ԼՂՀ սահմանադրությունը: Ինչ գիտեք դրա մասին:
5. Լրացրեք «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 1991–2018թթ.» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Իրադարձությունը

19-րդ թեմայի ամփոփում

1. 1991թ. սեպտեմբերի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագրով սկսվեց ԼՂՀ անկախ պետականության ձևավորման գործընթացը: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին հանրաքվեով հաստատվեց ԼՂՀ անկախությունը: Ձևավորվեցին ԼՂՀ Գերագույն խորհուրդը, կառավարությունը, բանակը: Հաստատվեցին ԼՂՀ պետական խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը:
2. 1992թ. ձմռանը ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ոչնչացրին Խոջալուի ռազմական խմբավորումը: 1992թ. մայիսի 9-ին թշնամուց ազատագրվեց Շուշին, այնուհետև՝ Լաչինը և շրջակա գյուղերը: Դրանով Ղարաբաղը սահմանակից դարձավ Հայաստանին: ԼՂՀ ազատամարտիկները 1993թ. գարնանը ազատագրեցին Մարտակերտի մեծ մասը, Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլու, Կուբաթլիի, Ջաբրայիլի և Ջանգելանի շրջանները: 1994թ. մայիսին Ռուսաստանի միջնորդությամբ կնքվեց զինադադար, որը, սակայն, մշտապես խախտվում է Ադրբեջանի կողմից: Վերջինս 2016թ. ապրիլի սկզբին աննախադեպ լայնամասշտաբ պատերազմ սանձազերծեց Արցախի դեմ, բայց արժանի հակահարված ստացավ: Չնայած Ադրբեջանի սադրանքներին ու սպառնալիքներին՝ մինչև օրս շարունակվում է դեռևս հրադադարից հետո սկսված բանակցային գործընթացը:
3. Անկախացումից և Արցախյան պատերազմից հետո աշխուժացան ԼՂՀ տնտեսությունը, հասարակական-քաղաքական կյանքը: Վերագործարկվեցին մի շարք ձեռնարկություններ, առաջընթաց ապրեց գյուղատնտեսությունը: ԼՂ կոմկուսի կողքին սկսեցին գործել ԼՂ Հայ հեղափոխական դաշնակցություն, «Ազատ հայրենիք», «Սոցիալական արդարություն», «Շարժում–88» և այլ կուսակցություններ: ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր 2006թ. դեկտեմբերի 10-ին սահմանադրության ընդունումը: ԼՂՀ-ում Ազգային ժողովի պատգամավորական և նախագահական գրեթե բոլոր ընտրությունները ընթացել են բուռն ակտիվության պայմաններում:
4. Նոր հարաբերություններին համապատասխան՝ 1990-ական թթ. ԼՂՀ-ում ստեղծվում է կրթական ու մշակութային նոր համակարգ: Բարեփոխվում է դպրոցական, նախադպրոցական կրթությունը, առաջընթաց է ապրում բարձրագույն դպրոցը: Նոր թափ է ստանում հրատարակչական գործը:
   Կարևոր ձեռքերում էր հնագետների կողմից Արցախի Տիգրանակերտ քաղաքի հայտնաբերումը: Արցախի մշակույթի անբաժան մասն են կազմում Հայաստան–Սփյուռք–Արցախ մշակութային կապերը:

ԹԵՄԱ 20 ՍՓՅՈՒՌՔԸ 1991-Ի Մ ԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

1–2. Ժամանակակից Սփյուռքը: Սփյուռք-հայրենիք հարաբերությունները

Սփյուռքահայ համայնքները արդի փուլում: Սփյուռքը XX դարի վերջին կրեց զգալի փոփոխություններ: Դրանք հետևանք էին Խորհրդային Միությունում ընթացող բախտորոշ գործընթացների: 1988-1992թթ. Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած հայերի հալածանքների ու սպանությունների հետևանքով տեղի ողջ հայ բնակչությունը (շուրջ 400 հազ.) հարկադրաբար արտագաղթեց Հայաստան, Ռուսաստան և այլուր: Շարունակվեցին նաև ներսփյուռքյան տեղաշարժերը՝ Արևելքի երկրներից դեպի Արևմուտքի երկրներ: Իրաքում և հատկապես Սիրիայում երկարատև ու ծանր զինված բախումների պատճառով տեղի հայության զգալի մասը ստիպված եղավ արտագաղթել և հաստատվել տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

Սփյուռքահայությունը զգալի աճ ունեցավ, երբ 1990-ական թթ. սկսվեց նախադեպը չունեցող զանգվածային արտագաղթը Հայաստանից: Ավելի քան 1 մլն արտագաղթածների մեծ մասը բնակություն հաստատեց Ռուսաստանում, ինչպես նաև ԱՄՆ-ում և այլ երկրներում:

Հայկական եկեղեցական համալիրը Մոսկվայում

Մուրադ-Ռափայելյան վարժարանի սրահներից (Իտալիա)

Սփյուռքահայերի հիմնական զանգվածը այսօր բնակվում է Ռուսաստանում (շուրջ 2 մլն), ԱՄՆ-ում (շուրջ 1,2 մլն), Ֆրանսիայում (շուրջ 450 հազար), խոշոր համայնքներ գոյություն ունեն Վրաստանում, Ուկրաինայում, Լիբանանում, Իրանում, Արգենտինայում, Կանադայում, Ավստրալիայում և այլ երկրներում:

Ինչպես Արևելքի երկրներից Արևմուտքի երկրներ ներգաղթած հայերը, անպես էլ Հայաստանից Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս և այլուր գնացածները նպաստեցին ազգային կյանքի աշխուժացմանը: Դրան մեծապես նպաստեց այն, որ Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետությունները թույլատրել են ազգային փոքրամասնությունների ինքնակազմակերպումը և ազգամշակութային գործունեությունը:

Հայկական նոր համայնքներ են ձևավորվել գրեթե բոլոր հայաբնակ վայրերում, վերաբացվել կամ հիմնվել են հայկական եկեղեցիներ (օրինակ՝ Սբ Կատարինե՝ Սանկտ Պետերբուրգում, Սբ Գրիգոր Լուսավորիչ՝ Օդեսայում), կիրակնօրյա հայկական դպրոցներ, մշակութային, ուսանողական, բարեսիրական և այլ կազմակերպություններ, սկսել են հրատարակվել պարբերականներ (օրինակ՝ «Արմյանսկի վեստնիկ»՝ Կիևում, «Երկրամաս»՝ Կրասնոդարում, «Անիվ»՝ Մինսկում):

Սփյուռք–հայրենիք համագործակցությունը: Սփյուռքի, նրա ազգային-քաղաքական ուժերի համար անակնկալ եղավ 1988թ. Հայաստանում սկիզբ առած ժողովրդական շարժման այդչափ զանգվածային և վճռական բնույթը: Շատ շուտով, սակայն, համոզվելով տեղի ունեցող գործընթացների անդառնալիության մեջ, Սփյուռքի հայությունը հնարավոր բոլոր միջոցներով աջակցեց Հայաստանի անկախացմանը, ինքնիշխան պետության կայացմանը:

Նոր պայմաններում Սփյուռքի բոլոր կարևոր կազմակերպությունները շտապեցին Հայաստան և սկսեցին գործել՝ յուրաքանչյուրը իր ոլորտում: Արդեն 1990-1991թթ. իրենց կառույցները հիմնեցին երեք հայ ազգային կուսակցությունները՝ ՀՅԴ, ՌԱԿ և ՍԴՀԿ, ինչպես նաև որոշ բարեսիրական միություններ:

Հայ ժողովրդի երկու հատվածների միջև հարաբերությունները առավել արդյունավետ դարձնելու նպատակով 1999 թվականից Երևանում պարբերաբար հրավիրվել են Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովներ: Խորհրդաժողովների ընթացքում սփյուռքահայ տարբեր կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչները ՀՀ ղեկավարության հետ քննարկել են համազգային նշանակության հարցեր: Նման քննարկումների արդյունքներից էր, օրինակ, 2007-ին ՀՀ խորհրդարանի ընդունած օրենքը երկքաղաքացիության մասին, որը հնարավորություն է տալիս սփյուռքահայերին դառնալու ՀՀ քաղաքացի՝ չհրաժարվելով այլ երկրի քաղաքացիությունից: 2008թ. ստեղծվեց Սփյուռքի նախարարությունը, որը 2019թ. փոխարինվեց ՀՀ վարչապետի աշխատակազմի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակով:

Հայաստանի ամերիկյան համալսարանը

Սփյուռքի հետ տարվող իր աշխատանքներում Հայաստանը առանձնահատուկ կարևորություն է տալիս երիտասարդությանը: 1999-ից Հայաստանում կազմակերպվել են համահայկական մարզական խաղեր՝ աշխարհի տարբեր քաղաքներ ներկայացնող հավաքական թիմերի մասնակցությամբ: 2009-ին մեկնարկեց «Արի տուն» ծրագիրը, որի շնոր-

հիվ ավելի քան 2000 հայազգի երեխաներ աշխարհի 36 երկրներից արդեն այցելել են Հայաստան, եղել պատմամշակութային վայրերում, ծանոթացել մշակութային ավանդույթներին: «Իմ Հայաստան» փառատոնի շրջանակներում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի քաղաքներում կազմակերպվում են տարբեր երկրներից ժամանած պարային, երգչախմբային և այլ համույթների ու անհատ կատարողների համերգներ, ինչպես նաև գրողների ու լրագրողների համաժողովներ, Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և այլ միջոցառումներ:

Այս և նման այլ ծրագրերին մասնակցող հազարավոր երիտասարդների նորահաստատ բարեկամությունը Հայաստանի և Սփյուռքի իրենց հասակակիցների հետ աննախադեպ երևույթ է հայ իրականության համար:

Հայաստանի անկախացումից հետո, երբ երկիրը հայտնվեց համընդհանուր ճգնաժամի մեջ, Սփյուռքի օգնությունը ծառայեցվեց հիմնական խնդրի՝ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Սկսվեցին ավանների, հիվանդանոցների, դպրոցների, ճանապարհների կառուցում, համատեղ ձեռնարկությունների հիմնում, գործարանների վերագործարկում և այլն:

1992թ. ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որի մասնաճյուղերը գործում են մի քանի տասնյակ երկրներում: Հիմնադրամը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում իրականացնում է մեծ թվով ծրագրեր, որոնցից մի քանիսը ունեն ռազմավարական նշանակություն՝ ճանապարհների ու կամուրջների շինարարություն սահմանամերձ գոտում, էլեկտրահաղորդման գծերի և ենթակայանների, ջրատարների կառուցում և այլն:

Ինչպես և սպասվում էր, Հայաստանի հետ համագործակցողների շարքում հատկապես առանձնանում են համասփյուռքյան բարեսիրական կազմակերպությունները: ՀԲԸՄ-ի ամենախոշոր ծրագրերից էին 1991-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնումը և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ֆինանսավորումը՝ սկսած 1992թ.: 1993-ից գործում են մանկապատանեկան Հայորդյաց տները, բարեգործական ճաշարանները և այլն: 2004-ից ՀԲԸՄ-ն Լեռնային Ղարաբաղում վերակառուցում է գյուղեր և դպրոցներ, իսկ 2004-ին հիմնել է Ղարաբաղի կամերային նվագախումբը:

1991-ից բազմապիսի գործունեություն է ծավալել նաև ՀՕՄ-ը՝ երկրաշարժից տուժած շրջանների հինգ գյուղերում մոտ 200 տների կառուցում, սննդամթերքի, դեղորայքի, բժշկական սարքավորումների, հագուստի և այլնի առաքում, շուրջ 8000 որբերի ու զոհված ազատամարտիկների երեխաների խնամատարություն և այլն:

Անհատ բարերարների շարքում առանձնանում է ամերիկահայ Քըրք Քըրքորյանը, որի «Լինսի» հիմնադրամի տրամադրած միջոցներով (շուրջ 220 միլիոն դոլար) միայն աղետի գոտում կառուցվել է 49 շենք, ընդհանուր՝ 3700

բնակարանով, հիմնանորոգվել են 240 կմ երկարությամբ ճանապարհներ, դպրոցներ, մշակութային հաստատություններ:

Խոշոր ներդրողներից է Էդուարդո Էռնեկյանը (Արգենտինա), որը լայնածավալ ծրագրեր է իրականացնում՝ «Զվարթնոց» օդանավակայանի նոր համալիրի կառուցում, գյուղմթերքների արտադրություն ու մշակում և այլն:



Քըրք Քըրքորյան
(1917-2015)

Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Սփյուռքի հետ գնալով խորանում են, մի կողմից՝ ավելի շոշափելի դարձնելով սփյուռքահայերի մասնակցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը, մյուս կողմից՝ նոր լիցք հաղորդելով սփյուռքահայերի ազգային ինքնության պահպանման գործին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին 20-րդ դարի վերջին Սփյուռքում կատարված քանակական և որակական փոփոխությունները: Ինչի՞ հետևանք էին դրանք:
2. Նշեք Հայաստանից հայերի արտագաղթի պատճառները: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը արտագաղթի նկատմամբ: Դուք երբևէ մտածե՞լ եք Հայաստանից արտագաղթելու մասին:
3. Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից որտե՞ղ է կենտրոնացել հայերի ճնշող մեծամասնությունը: Ի՞նչ հաջողություններ ունեցան հայկական համայնքները հետխորհրդային հանրապետություններում:
4. Ի՞նչ ծրագրեր է իրականացնում Հայաստանի կառավարությունը Սփյուռքի հետ համատեղ: Ի՞նչ նպատակներ են հետապնդում դրանք: Այդ ծրագրերից ո՞րն է ձեզ գրավում և ինչո՞ւ:
5. Ինչպիսի՞ն էին սփյուռքահայության ցույց տված օգնության ձևերը Հայաստանին: Ինչպե՞ս եք գնահատում հայ բարերարների գործունեությունը:
6. Լրացրե՛ք «Հայաստան–Սփյուռք համագործակցություն» աղյուսակը:

Բնագավառները	Համագործակցության ձևերը, բովանդակությունը
Տնտեսական	
Քաղաքական	
Մշակութային	
Բարեսիրական	

20-րդ թեմայի ամփոփում

1. Հայկական սփյուռքում XX դարի վերջին կատարվեցին զգալի փոփոխություններ, որոնք հետևանք էին ԽՍՀՄ-ում կատարված բարդ գործընթացների: Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի տարբեր քաղաքներում ձևավորվեցին հայկական նոր համայնքներ:
2. Անկախությունից հետո Հայաստան–Սփյուռք համագործակցությունը մտավ որակական նոր փուլ: Հայաստանում պարբերաբար կազմակերպվեցին հայրենիք–Սփյուռք խորհրդաժողովներ, գիտաժողովներ, մշակութային միջոցառումներ և փառատոներ, Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, համահայկական մարզական խաղեր և այլն: Սփյուռքահայերը ստացան երկքաղաքացիության իրավունք:
3. Սփյուռքահայությունը մեծ օգնություն ցույց տվեց հայրենիքին: Սկզբում Սփյուռքի օգնությունը հիմնականում մարդասիրական բնույթ էր կրում: Սփյուռքի օգնությունը անկախացումից հետո ծառայեցվեց համընդհանուր ճգնաժամի մեջ հայտնված Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Հայաստանում մեծ գործունեություն ծավալեցին համասփյուռքյան բարեսիրական կազմակերպությունները (ՀԲԸՄ, ՀՕՄ և այլն): Անուրանալի է նաև անհատ բարերարների օգնությունը (Քըրք Քըրքորյան, Էդուարդո Էռնեկյան և ուրիշներ): ՀՀ-ի հետ համագործակցությունը նոր լիցք է հաղորդում սփյուռքահայերի ազգային ինքնության պահպանմանը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1945թ. նոյեմբեր – ԽՍՀՄ կառավարության որոշումը հայրենադարձություն կազմակերպելու վերաբերյալ:

1946–1948թթ. – Մեծ հայրենադարձության կազմակերպումը:

1949թ. հունիսի 14 – Հայ բնակչության զանգվածային արտաքսումը Ալթայի երկրամաս:

1956թ. հունիսի 30 – ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին»:

1965թ. ապրիլ – Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի նշումը:

1988թ. փետրվարի 20 – Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի նստաշրջանի որոշումը:

1988թ. դեկտեմբերի 7 – Սպիտակի ավերիչ երկրաշարժը:

1988թ. նոյեմբեր – «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ) կազմակերպության առաջացումը:

1991թ. փետրվար – Հայաստանում բազմակուսակցական համակարգի մասին օրենքի ընդունումը:

1991թ. սեպտեմբերի 21 – Անկախության հանրաքվեի անցկացումը Հայաստանում:

1991թ. սեպտեմբերի 23 – Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության հռչակումը:

1991թ. հոկտեմբերի 16 – 1-ին նախագահական ընտրությունների անցկացումը Հայաստանում:

1991թ. դեկտեմբերի 10 – Անկախության հանրաքվեի անցկացումը ԼՂՀ-ում:

1991թ. դեկտեմբերի 21 – Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը:

1992թ. մայիսի 9 – Շուշիի ազատագրումը:

1995թ. հուլիսի 5 – ՀՀ սահմանադրության ընդունումը:

1996թ. – Հայկական ատոմային էլեկտրակայանի վերագործարկումը: Հրազդանի ջեկի 5-րդ բլոկի շահագործումը:

1998թ. – Նախագահական արտահերթ ընտրություններ Հայաստանում:

1999թ. հոկտեմբերի 27 – Ահաբեկություն Ազգային ժողովում:

2006թ. դեկտեմբերի 10 – ԼՂՀ սահմանադրության ընդունումը:

1990-ական թթ.–2018թ. – Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի ծավալումը:

2008թ. փետրվարի 19 – Նախագահական ընտրություններ ՀՀ-ում:

2008թ. – Համաշխարհային տնտեսական ճգնաժամի սկիզբը:

2009թ. – ՀՀ-ի և Թուրքիայի միջև երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին արձանագրությունների ստորագրումը Ցյուրիխում:

2015թ. հունվարի 29 – «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» ընդունումը:

2015թ. ապրիլի 24 – Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նշումը:

2015թ. դեկտեմբերի 6 – Համաժողովրդական հանրաքվեով սահմանադրական երկրորդ փոփոխության հաստատումը:

2016թ. ապրիլի 1–4 – Ադրբեջանի սանձազերծած քառօրյա պատերազմը:

2017թ. նոյեմբերի 24 – «Համապարփակ և ընդլայնված գործընկերություն» համաձայնագրի ստորագրումը:

2018թ. մարտի 2 – Ազգային ժողովում Արմեն Սարգսյանի ընտրվելը ՀՀ նախագահ:

2018թ. ապրիլ–մայիս – «Թավշա հեղափոխությունը» Հայաստանում:

2018թ. ապրիլի 23 – Ս. Սարգսյանի հրաժարականը վարչապետի պաշտոնից:

2018թ. մայիսի 8 – Ն. Փաշինյանի ընտրվելը ՀՀ վարչապետ:

2018թ. դեկտեմբերի 9 – Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 107

ԹԵՄԱ 11. ՍՓՅՈՒՌՔԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 107

1-2. Սփյուռքը և Խորհրդային Հայաստանի նոր քաղաքականությունը 107

ԹԵՄԱ 12. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 114

1. Տնտեսությունը 114

2. Հասարակական-քաղաքական կյանքը 119

ԹԵՄԱ 13. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 123

1. Վերակառուցումն ու Արցախյան շարժման սկիզբը.....123

2. Ազատագրական շարժման վերելքը 127

ԹԵՄԱ 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 134

1. Պայքար Հայաստանի անկախացման համար 134

ԹԵՄԱ 15. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.....139

1. Կրթությունը և գիտությունը 139

2-3. Գրականությունը և արվեստը..... 143

ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՑԱԽԻ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ 150

ԹԵՄԱ 16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 150

1. Անկախ Հայաստանի Հանրապետության կերտումը 150

ԹԵՄԱ 17. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 156

1. Հայաստանը տնտեսական վերափոխումների ճանապարհին 156

2. Հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը 160

ԹԵՄԱ 18. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 172

1. Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը և արտաքին քաղաքականությունը 172

ԹԵՄԱ 19. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 179

1. Հանրապետության պետականության կայացման գործընթացը 179

2. Հանրապետության ներքին դրությունը 188

ԹԵՄԱ 20. ՍՓՅՈՒՌՔԸ 1991-Ի ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ 192

1-2. Ժամանակակից Սփյուռքը: Սփյուռք-հայրենիք հարաբերությունները 192

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 196

Վլադիմիր Բարխուդարյան, Արարատ Հակոբյան,
Համլետ Հարությունյան, Վլադիմիր Ղազախեցյան,
Էդիկ Մինասյան, Էդուարդ Մելքոնյան, Աշոտ Ղուկասյան

Հայոց պատմություն

Նորագույն շրջան

9-րդ դասարանի դասագիրք

Մաս 2

Շապիկի ձևավորումը՝ Մ. Աբրահամյանի

Համակարգչային էջկապը՝ Միքայել Աբրահամյանի

Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@manmar.am
www.manmar.am